Azg
Ազգ
19 ՅՈՒՆՈՒԱՐ 2008 ՇԱԲԱԹ 10 (3904)

Ռուս-հայկական տնտեսական ֆորում Երեւանում

Հունվարի 20-21-ին Երեւանում տեղի կունենա Ռուսաստանի հայերի միության ու Հայաստանի առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության համատեղ Ռուս-հայկական տնտեսական ֆորումը: Ֆորումի աշխատանքներին կմասնակցի Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսյանը, իսկ ռուսաստանյան ներկայացուցչական պատվիրակությունը կգլխավորի Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը:

Հայաստանի եւ Ռուսաստանի տրանսպորտի նախարարների, նաեւ ՀՀ կառավարության մի շարք անդամների մասնակցությամբ հայ եւ ռուս գործարարները կքննարկեն ներդրումային իրականությունը եւ հնարավորությունները Հայաստանում: ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Ներսես Երիցյանը կներկայացնի Հայաստանի տնտեսության զարգացման հեռանկարներն ու ներդրումային առաջնահերթ ուղղությունները, իսկ Զարգացման հայկական գործակալության գործադիր տնօրեն Տիգրան Դավթյանը ֆորումի մասնակիցներին կծանոթացնի Հայաստանում ներդրումային ռդի միջավայրին: Ա. Հ.

Բռնություն պատշտոնները կենդանության օրոք վախենում էին Դինքից

Հիմա արդեն նրանց հետապնդում է մեր հանգուցյալ հայրենակցի հիշատակը

ՀԱՅԿԱՆ ՉԻԼԱՐՅԱՆ

Այսօր մեր հայրենակից Հրանտ Դինքի մահվան տարելիցն է: Մեկ տարի առաջ, հունվարի 19-ին, տեղական ժամանակով 15-ին Սամբուլում՝ «Ակօս» շաբաթաթերթի խմբագրական մուտքի մոտ Օգյուն Սամասք կոչեցյալ մարդասպան սահակը ատրճանակով թիկունքից երեք կրակոց էր արձակել Դինքի վրա, ապա եւ դիմել փախուստի: Իրավապահ մարմինները սպանությունից 36 ժամ հետո Սամսունի ավտոկայանում ձերբակալել էին Սամասքին: Սակայն Տրաբզոնի անվտանգության վարչությունում, վարչության աշխատակիցները, չթաքցնելով իրենց հիացմունքը պատանի սահակի նկատմամբ, թուրքական մամուլի վկայությամբ հերթի էին կանգնել, որ լուսանկարվեն նրա հետ: Ավելին, որոշեցի լուսանկարը տպավորիչ լինի, նրանք մարդասպանի ձեռքին տվել էին Թուրքիայի դրոշը, կարծես ընդգծելու համար, որ դա ներկված է Օգյուն Սամասքի նման պատանի, թե մեծահասակ բազմաթիվ սահակների զոհը դարձած ժողովուրդների, ինչպես նաեւ հազարավոր անմեղ մարդկանց արյունով:

Հրանտ Դինքի հուղարկավորությանը մասնակցել էր հայերի, հույների, ասորիների, թուրքերի, քրդերի, ալեւիների ավելի, քան 200 հազարանոց բազմությունը: Այս հանգամանքը, ինչպես նաեւ սգո թափորի «Մենք բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ Դինք» կարգախոսը Թուրքիայում անանախադեպ բնույթ էր հաղորդել թաղման արարողությանը: Եթե ոչ անանախադեպ, ապա ակնհայտ լկտիություն էր Դինքի նկատմամբ կատեկցանքի, իսկ ընտանիքին վշտակցություն արտահայտող այդ կարգախոսին ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Քեմալ Աթաթուրքի ստեղծած ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցության, ազգայնական բարժության վերջինի ոչ «գորշ գայլերի» խաղախական կազմակերպությունը հանդիսացող «Մեծ միասնություն» կուսակցությունների բուռն հակազդեցությունը: Իսկ թուրք խառնամբոխի «Մենք բոլորս Օգյուն Սամասք ենք» ծակագրությամբ օրեր, շաբաթներ, ամիսներ շարունակ մարգարտեռում բարձրացրած ցուցադրանքները ու իմքնամոռաց բացականչությունները լկտիության գագաթնակետն էին:

Տես էջ 5

Բոլոր թեկնածուները գրանցվեցին

ԿԸՀ-ն հունվարի 18-ի նիստում առաջադրված բոլոր 9 թեկնածուները հաստատեցին գրանցված առանց քվեարկության, քանի որ նրանց գրանցման վերաբերյալ որեւէ առարկություն չկար: Գրանցվեցին Սերժ Սարգսյանը, Վահան Հովհաննիսյանը, Լեւոն Տեր-Պետրոսյանը, Վազգեն Մանուկյանը, Արթուր Բաղդասարյանը, Արաբես Գեղամյանը, Տիգրան Կարապետյանը, Արամ Հարությունյանը եւ Արման Մելիքյանը:

Միջազգային դիտորդներ կլինեն

ԿԸՀ հանձնաժողովը որոշում է ընդունել փետրվարի 19-ի ընտրություններին միջազգային դիտորդներ հրավիրելու մասին: Դիտորդական առաքելություն կիրականացնեն, ՀՀ-ում հավատարմագրված եւ երեւանում նստավայր ունեցող օտարերկրյա դեսպանները, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավարը, ՀՀ-ում եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը, ժողովրդավարության եւ ընտրությունների ազատության միջազգային ինստիտուտի (International IDEA) հայաստանյան գրասենյակի ղեկավարը, Ընտրական համակարգերի միջազգային հասարակության (IFES) հայաստանյան մասնաճյուղի ղեկավարը եւ ԼՂՀ ԿԸՀ-ի նախագահը: ԿԸՀ-ն տեղեկացրեց նաեւ, որ ոլեբյուջով ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման համար նախատեսվել է 769 մլն 855 հազ. 259 դրամ (մոտ 2,5 մլն ԱՄՆ դոլար), որի հիմնական մասը ընտրական հանձնաժողովների աշխատավարձերի նախատեսն են:

ԱՄՆ դեսպանատունը հրաժարվել է «Exit poll»-ից

Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը տարածել է հաղորդագրություն, որ նախագահական ընտրությունների ժամանակ exit poll-ի անցկացման առաջարկի վերաբերյալ բոլոր շահագրգիռ կողմերի հետ քննարկումներից հետո Միջազգային հանրապետական ինստիտուտը (IRI) եւ Baltic Surveys Ltd/Gallup կազմակերպությունը չեն կարողացել ընդունելի հարցերի համար գտնել այնպիսի լուծումներ, որոնք կբավարարեին բոլոր կողմերին: Հաղորդվում է, որ այդ պատճառով ԱՄՆ դեսպանատունն ու ԱՄՆ ՍԶԳ-ն որոշեցին չիրականացնել այդ նախագիծը:

Եվրոխորհրդարանը ընդդեմ Կարս-Ախալքալաք երկաթգծի

Եվրոպական խորհրդարանը ընդունել է «Հարավային Կովկասի նկատմամբ ավելի արդյունավետ ԵՄ քաղաքականություն» բանաձեւը, որտեղ ողջունվում է Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների ընթացքը եւ Եվրոպական հարեւանության քաղաքականության ծրագրի իրականացումը: Բանաձեւը մասնավորապես հաստատում է, որ Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը անհրաժեշտություն է: Անդրադառնալով Թբիլիսի-Կարս երկաթգծին, բանաձեւը ընդգծում է, որ նախագիծը շրջանցում է Գյուրջիստանում գտնվող Հայաստան-Թուրքիա երկաթգիծը եւ նպաստում Հայաստանի մեկուսացմանը: Կոչ է արվում Թուրքիային վարել տարածաշրջանային տնտեսական ինտեգրման քաղաքականություն եւ ձեռնպահ մնալ անտիսի անհետաքրքիր էներգետիկ եւ տրանսպորտային նախագծերից, որոնք խախտում են եվրոպական նոր հարեւանության քաղաքականության սկզբունքները:

Սգո երթ

«Փախստականները եւ միջազգային իրավունքը» քաղաքացիական հասարակության ցանցը հունվարի 19-ին ժամը 13.00-ին Ծիծեռնակաբերդի ստորոցից կազմակերպում է սգո քայլերթ դեպի Բաքվի եւ Ադրբեջանի այլ բնակավայրերում հայության նկատմամբ իրականացված թշնամական գործողությունների զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողը: Բոլոր ցանկացողները կարող են միանալ քայլերթին:

ԱՍՏԻԼԲՈ

Ռոբերտ Քոչարյան. «Մադրիդում ներկայացված փաստաթուղթը կարծր փաստաթուղթ չէ, ուլտիմատում չէ կողմերին»

Վերջին մի քանի օրվա ընթացքում ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցով զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները տարածաշրջան այցելության ընթացքում մի քանի անգամ եղան ինչպես Երեւանում, այնպես էլ Բաքվում եւ Ստեփանակերտում: Երեւան այցելության ժամանակ հանդիպումների գնահատականի եւ Հայաստանի՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքների մադրիդյան փաստաթղթին արձագանքի առնչությամբ «Ազգի» հարցին լրագրողների հետ հաղորդակցակցում տեղի ունեցած հանդիպմանը Ռոբերտ Քոչարյանը պատասխանեց, որ արձագանք արդեն եղել է:

«Նաեւ իրենք (համանախագահները - Ա.Հ.) են հայտարարել մեր հանդիպման ժամանակ, որ այդ փաստաթուղթը կարծր փաստաթուղթ չէ, ուլտիմատում չէ կողմերին: Իհարկե, այդ փաստաթղթի բովանդակությունը, ընդհանուր տրամաբանությունը ընկալելի է, բայց կան կետեր, որոնց շուրջը մենք ունենք այլ կարծիք: Քննարկումները կոնտեքստից դուրս չեն, բայց կան մի քանի կետեր, որոնց շուրջը բանակցությունները շարունակվելու են: Կարող եմ ասել, որ այդ փաստաթղթի տրամաբանության մեջ իրականում կարելի է հարցի լուծումը գտնել»:

Ֆրանսիայի համանախագահ Բեռնար Քուշներն հունվարի 17-ին երեւանում հայտարարեց, թե բանակցություններից իր ժամանակին Լեռնային Ղարաբաղի դուրս մնալը միջնորդների որոշումը չէր, այլ «դա տեղի ունեցավ Քոչարյանի Հայաստանի նախագահ դառնալուց հետո՝ միակողմանի որոշմամբ»: «Ազգի» այս մեջբերումը Հայաստանի նախագահը պատասխանեց. «Հայաստանը երբեք նման որոշումներ չի կայացրել: Դա եղել է մինչեւ որոշ ֆասիեի համանախագահ դառնալը, բայց այդպիսի որոշում չի եղել: Դա տեղի ունեցավ մեկ այլ կերպ: Եթե հիշում եք, կար փակուղի, եւ սկսվեց իմ եւ նախագահ Հեյդար Ալիեւի միջեւ ակտիվ բանակցային գործընթաց, որը գրեթե ավարտվում էր փաստաթղթի ստորագրմամբ Քի Վեստում: Ուղղակի այդ գործընթացը բերեց դրան, իսկ մինչ այդ բանակցություններն ուղղակի սառեցված էին, ուղղակի փակուղի էր:

Հատուկ որոշում երբեք չի եղել: Եվ այսօր Ղարաբաղը շարունակում է մնալ գործընթացի մեջ, քանի որ նաեւ համանախագահները տարածաշրջան այցելելիս գնում են Ղարաբաղ: Պատկերացրեք, որ ես կամ հաջորդ նախագահը մի 6-7 ամիս չհանդիպի Ադրբեջանի նախագահի հետ: Ղարաբաղը ձիշտ այնպես է մասնակցում գործընթացին, ինչպես Հայաստանի Հանրապետության նախագահը, ուղղակի այս ընդհանուր բանակցային գործընթացում կա նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումների ֆորմատ: Բայց դա կոնտեքստից դուրս չէ եւ բոլոր հարցերը միջնորդները քննարկում են Ղարաբաղի իշխանությունների հետ:

Դրա համար ես ուղղակի փաստն եմ արձանագրում, որ Ղարաբաղը բանակցային գործընթացի ակտիվ մասնակից է: Մենք կցանկանայինք, որ նախագահների հանդիպման ֆորմատում Ղարաբաղը եւս ներգրավված լինի, եւ բոլորը հետեւյալն են ասում, որ եթե փաստաթուղթը լինի վերջնականապես պատրաստ, նաեւ մենք ենք դա պնդում, առանց Ղարաբաղի իշխանությունների ստորագրության չի կարող հարցը լուծվել, եւ անմիջապես այդ պահից հետո Ղարաբաղը կմասնակցի այս ֆորմատին»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մրցանակային մթնոլորտ եւ տրամադրություն

ԹՄՄ «Վահան Թեքեյան» մրցանակի 2007-ի դափնեկիրները

ՄԵԼՈՒՀԱ ԲԱԳԱԼՅԱՆ

Կյանքը տոն չէ: Բնավ: Ո՛չ հանդիսություն, ո՛չ թատրոն, թերեւս սա պայքար է, ծանր ընտրություն՝ իմաստասիրման, գուցե նաեւ իմաստարարման, ստեղծագործ իմաստարարման: Ու սա արվեստին չէ միայն, որ վերաբերում է, ինձ թվում է, յուրաքանչյուրն իր կյանքի ամեն փուլում գիտակից, թե անգիտակից, այդպիսի մի ընթացք առում է:

Չգիտեմ կյանքն առհասարակ մրցանակի հետ կապ ունի, թե՞ չէ, բայց այնքան շա՞տ են դրանք ու հաճախ անտեղի, իսկ գուցե կապ ունի, գուցե ժամանակն ինքն է ամենամեծ մրցանակը, ու մենք մեր պատասխանատվությունը կորցրել ենք կյանք-մրցանակի հանդեպ: Ինչպես ամեն բան այս խաղում այս օրերին անհասատուն է, միտս էլ այսպես անհասատ դեգերեց, ու ԹՄՄ ավանդական մրցանակաբաշխության թեմայի ընդունված ձեւից շեղվեց-գնաց: Երեկ մտավորական-մշակութային ընտիր բազմության մասնակցությամբ, որին ներկա էին նաեւ վարչապետ Սերժ Սարգսյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանը, ԿԳ նախարար Լեւոն Մկրտչյանը, Ազգային ժողովի պատգամավորներ, ԳԱԱ ներկա եւ նախկին նախագահները, տարբեր բուհերի ռեկտորներ, տնտեսական մթնոլորտում տեղի ունեցավ ՀԹՄՄ ամենամյա մրցանակների հանձնման արարողությունը:

Տես էջ 6

Ըստ Քոչարյանի, երկրորդ փուլով ընտրող նախագահը նաեւ կողմնակի պարտավորություններ է ունենում

Նախագահը համոզված է որակյալ ընտրացուցակներ ունենալու հարցում

Երեւանի խաղաղաբեռարանում Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանն անցկացրել է ամենամյա ափսեաձեւային խորհրդակցություն, որի ընթացքում ամփոփվում են անցած տարվա ափսեաձեւները եւ քննարկվում ընթացիկ տարվա առնչվելիները: Նշելով, որ շատ ծրագրեր իրականացվել են եւ դրական ընթացք ունեցել, Քոչարյանը անդրադարձավ նաեւ թերություններին, որոնց անդրադարձ է կատարվել խաղաղաբեռարանում տեղի ունեցած քննարկումներում: «Անցյալ տարվա համեմատ բոլոր ուղղություններով ունենք բարելավում, բայց միանգամն այն չէ, ինչից կարող ենք շատ գոհ մնալ»:

Ամեն դեպքում, լրագրողների հարցերն առավելաբար վերաբերում էին առաջիկա ընտրություններին: Քաղաքաբեռարանի՝ երբեր անցկացնելու առնչությամբ հայտարարության կապակցությամբ Քոչարյանը նշեց, որ ոչ թե խաղաղաբեռարանն արգելել է, այլ դիմել թեկնածուներին՝ զրաղ մնալ երբեր կազմակերպելուց, եւ նկատի է ունեցել առաջին հերթին տիկ ժամերին զերեռարբեռնված փողոցները: «Քաղաքաբեռի հետ քննարկել ենք այդ հարցը: Քաղաքաբեռարանն ասում է, որ պատրաստ է ճնշարկել եւ ընտրել այնպիսի փողոցներ ու ժամեր, որ մյուս խաղաղացիների համար խնդիրներ չստեղծվեն: Ես իմ անվանգության ծառայությունից իմ շարժը պահանջում եմ կատարել այն փողոցներով, որոնք ծանրաբեռնված չեն: Օրինակ, վերջին մի քանի տարվա ընթացքում իմ մեքենաների շարժի համար երբեմ Մաշտոցի պողոտան չեմ օգտագործել»:

Շարունակելով ընտրական թեման՝ Ռոբերտ Քոչարյանը նշեց, որ տեսական կառույցներն անում են ամեն ինչ պատշաճ ընտրություններ կազմակերպելու համար: «Ունենք բավարար խաղաղական կամք ընտրությունները ազատ, արդար եւ թափանցիկ կատարելու համար: Այդքան կամք մենք դրսեւորեցինք խորհրդարանական ընտրությունների ժամանակ եւ գիտակցում ենք, որ նախնջ այդ հարցում մենք ուղղակի իրավունք չունենք ունենալու: Իսկապես շատ լուրջ ենք տրամադրված: Մենք ակնկալում ենք նաեւ, որ ընտրական հանձնաժողովներում ընդգրկված կուսակցությունների ներկայացուցիչները ներկուսակցական շահերից ուղղակի դուրս կգան, իրենց կրքերն որպես տեսական կառույցի անդամ եւ կաշխատեն այդ ոճով եւ այդ տրամաբանությամբ, որպեսզի ընտրությունների օրը շատ բան է կախված լինելու հենց ընտրական հանձնաժողովների ափսեաձեւների որակից»:

Ինչ վերաբերում է ընդդիմադիրների՝ իշխանությունների կողմից ընտրությունները կեղծելու հեռանկարի մասին հայտարարություններին, արդյա Քոչարյանը ճանոթ է դրանց: «Այդպիսի երեւակայությունները մի քիչ շատ էին: Ջանանալի անհեղակությունն է կամ, որոշ հարցադրումների պարագայում, խղճի բացակայության կամ դեֆիցիտի խնդիր եմ ես տեսնում: Նույնիսկ անձնագրերի առնչությամբ (կեղծ անձնագրերի տպագրությամբ ընտրակեղծիքներ իրականացնելու - Ա.Հ.) ցանկության դեպքում չեն կարող դա անել, հնարավոր չէ: Այն գումարը, որ տեղաբաշխված է բյուջեում անձնագրերի համար՝ 178 մլն դրամ, ես նաբախավորում եմ, որ դրանից գոնե մեկ դրամ չի ծախսվելու առաջին եռամսյակում: Եվ ընդհանրապես մենք մտածում էինք այդ գումարը ծախսել նոր անձնագրային համակարգ ներմուծելու համար՝ բիոչիպերով անձնագրեր ունենալու համար, որի պարագայում ավելի թեթեւ կլինեն միգրացիոն ռեժիմները»:

Ընտրացուցակային ընտրախախտումների, գոյություն չունեցող բնակարանների եւ նման որակումների մասով էլ նախագահ Քոչարյանը ընդգծեց, որ ընտրացուցակները խորհրդարանական ընտրությունների ժամանակ եղել են իսկապես բարձր մակարդակի, եւ այնպիսի մեխանիզմներ են դրված ճշտումների առումով, որ «համոզված եմ, այս ընտրություններին ունենալու ենք որակյալ ցուցակներ»: «Մենք գիտակցում ենք, որ անորակ ցուցակների մեղքը անմիջապես կարդվելու է իշխանությունների հետ եւ ինչո՞ւ մենք շահագրգռված չպետք է լինենք ունենալու որակյալ ցուցակներ»:

Ինչ վերաբերում է ընդհանրապես ընտրություններից հետո բողոքներին, արդյա դրանց մի մասն, ըստ Հայաստանի նախագահի, շինծու են լինելու՝ ինչ-որ չափով ընտրությունները վարկաբեկելու նպատակով: «Մեր հասարակությունը պետք է գիտակցի, որ մենք ունենք ընդդիմադիրներ, որոնք մասնագիտացել են այդ գործում, եւ ամեն ինչ չընդունենք միանշանակ»:

«Մենք չենք ոլանավորում փուլերի քանակը», խոսելով երկրորդ փուլի հավանականության մասին՝ նշեց Ռոբերտ Քոչարյանը: «Ժողովուրդն է որոշելու՝ քանի փուլով կանցնեն գալիք ընտրությունները: Այս խոսակցությունները գալիս են նրանից, որ սոցհարցումները ցույց են տալիս միապիսի ընտրությունների մեծ հավանականություն»:

Նախագահը, իր իսկ խոսքերով, փորձեց բացատրել, թե ինչու որոշ քաղաքական ուժեր շատ զգայուն են այդ հարցի նկատմամբ: «Երբ նախագահն է ընտրվում մեկ փուլով, արդյա ընտրողը պարտավորված է լինում առաջին հերթին ընտրողների առջեւ այն ծրագրերի, խոստումների համար, որոնցով ներկայացել է հանրությանը: Եթե նա ընտրվում է երկրորդ փուլով, արդյա առաջին փուլից հետո քաղաքական սակարկությունների համար մեծ դաշտ է բացվում՝ ով ում կդաշտանի, ում կմիանա եւ դրա դիմաց ինչ կունենա: Իհարկե, այդ հնարավորություններից զերկելը հաճելի չէ: Ես ինքս երկու անգամ ընտրվել եմ երկու փուլով, գիտեմ ինչի մասին եմ խոսում, եւ իսկապես ժողովրդի առջեւ պարտավորություններին գումարվում են որոշ պայմանավորվածություններից բխող պարտավորություններ: Շատ ավելի ցանկալի է, որ ընտրված նախագահն այդպիսի կողմնակի պարտավորություններով ծանրաբեռնված չլինի»:

Հարցին, թե Լեւոն Տեր-Պետրոսյանն արդեն իսկ հայտարարել է իր հաղթանակած լինելու մասին, Քոչարյանը պատասխանեց. «Շնորհավորում եմ»: Իսկ թե ինչով է զբաղվելու Ռոբերտ Քոչարյանը ընտրություններից հետո, չասաց, ավելացնելով, որ այդ առնչությամբ որեւէ բան կասի արդիլի 9-ից հետո:

ԱՂԱՎՆԻ ՀԵՐՈՒԹՅՈՒՆ

Տեր-Պետրոսյանի հաղթանակն առաջին փուլով հնարավոր է

Կարծում է ՀԺԿ նախագահը

ՀԺԿ նախագահ **Ստեփան Դեմիրճյանը** վստահ է, որ լավ ափսեանոով հնարավոր է հաջողություններ հասնել նախագահական ընտրությունների հենց առաջին փուլում, քանի որ «ժողովրդի զգալի մասը հավատում է, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը կարող է հաղթել»:

Երեկ «Փաստարկ» ակումբում ներդաշնակ ներկա իրողության եւ հնարավոր զարգացումների վերաբերյալ իր տեսակետները ներկայացնելիս ՀԺԿ նախագահը վստահեցրեց, որ մեր երկրի թե՛ ներսում եւ թե՛ արտաքին հաղթականության վերաբերյալ իրենց կուսակցության եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի տեսակետները համընկնում են, իսկ ինչ վերաբերում է տարակարծություններին, արդյա «որոշ հարցերի վերաբերյալ կարող են տարաձայնություններ լինել, սակայն անկարեւորը պետք է սեղադրվել կարեւորին»: Իսկ կարեւորը՝ ՀԺԿ ղեկավարի խոսքերով, ներկա իշխանություններից ձերբազատվելն է, հոկտեմբերի 27-ի բոլոր մանրամասները բացահայտելը, հարաբերությունների խորացումն ու ամրապնդումը Ռուսաստանի հետ եւ հաղթանակից հետո հանդուրժողականության մթնոլորտում օրինախախտներին պատասխանատվության ենթարկելը՝ անկախ օրինախախտների կուսակցական պատկանելությունից (նույնիսկ եթե խոսք բեռական գործ ունեցող Վանո Սիրադեղյանի մասին է): «Փուլերի որս» արտահայտության վերաբերյալ Դեմիրճյանն ասում է. «Համատարած պատիժներ իրականացնելը հնարավոր չէ եւ անիմաստ է, սակայն ուզեր խախտել են օրենքը, պետք է պատժվեն»:

Ղարաբաղյան հարցի կարգավորման առնչությամբ նա երկու կուսակցությունների դիրքորոշումը նույնն է՝ դարաբաղյան կողմը պետք է դառնա բանակցային գործընթացի լիիրավ անդամ եւ հարցի լուծումը պետք է լինի իմքնորոշման սկզբունքի հիմքով:

Ինչ վերաբերում է մինչ քարոզարշավի պատշգնական մեկնարկը Նախագահի թեկնածուների վարքին, արդյա, Դեմիրճյանի գնահատմամբ, այսօրվա վարչապետին սատարող երիտասարդները, որ սնեցուն են այցելում եւ քարոզչություն իրականացնում, խախտում են օրենքը, սակայն նախկին նախագահին սատարողների կողմից տեսանկարվածներ բաժանելը լիովին օրինական է, քանի որ տոկ տեղեկատվական բնույթ է կրում:

«Միանշանակ կլինի կարելի, թե այս անգամ ընտրությունները ազատ, արդար կլինեն: 10 տարի է՝ անվերջ խոսակցություններ են տանում, սակայն պատասխանատվության ենթարկելու համար ոչինչ չի արվում»:

Դեմիրճյանը դեռ չգիտի, թե հաղթանակի դեպքում ուզեր կլինեն Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից՝ կառավարությունում, սակայն ակնհայտ է, որ քաղաքական թիմը եւ թեկնածուները պետք է հետո էլ ափսեանեն: Ինքը, ճիշտ է, շատերի անդամ չէ, սակայն կմասնակցի քարոզարշավին: 2003-ի իր փորձի հետ նմանությունները ներկայացնելով՝ ՀԺԿ նախագահը տեղեկացրեց, որ չնայած իր ընտրած ճանապարհը երկրին հաջողություն չբերեց («Իմ անհաջողությունը ավելի շատ երկրի անհաջողությունն էր»-Ս. Դ.), այժմ էլ իրենք գերադասելու են անմիջական ջանքերն ընտրողների հետ եւ արդեն իսկ բավական հագեցած գրաֆիկ են կազմել:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՅԱՆ ԵՎԱՍԻՐԱՅԻ ԱՍՈՒԼԻՍԸ

ՀՀ զինուժը պատրաստ է հակահարված տալու թշնամու յուրաքանչյուր ոտնձգության

ՀՀ պաշտպանության նախարար **Միխայել Հարությունյանը** երեկ ՁԼՍ-ներին ներկայացրեց պաշտպանության բնագավառի 2007-ի արդյունքները եւ 2008-ի հիմնական խնդիրները: Ըստ նախարարի, 2007-ը զինված ուժերի համար խորհրդանշական էր: Բանակը հաջողվել է զինել նորագույն սպառազինությամբ,

համալրվել է օդուժը, ավարտվել է գերժամանակային հակաօդային պաշտպանության համակարգի ստեղծումը՝ համալրելով նորագույն համակարգով, որը հնարավորություն կտա հուսալիորեն պաշտպանվել օդուժի հարձակումներից:

Տարվա ձեռքբերումներից էր ՀՀ ազգային անվտանգության ոլորտավարության նախագծի մշակումը եւ դրա հաստատումը նախագահի հրամանագրով, որի հիման վրա ստեղծվեց ՀՀ ազգային դոկտրինը: 2007-ին շարունակվել է ՀՀ ՁՈՒ-ի ակտիվ մասնակցությունը միջազգային խաղաղապահ գործընթացին, որի ընթացքում իրականացվել են Իրաքում եւ Կոսովոյում ՀՀ զորախմբի հերթափոխները: Մեկ տարով երկարաձգվել է Իրաքում ՀՀ զորախմբի մանդատը: Ներկայումս ՀՀ պաշտպանության նախարարությունը բանակցություններ է վարում Հայաստանի խաղաղապահ գործունեությունն ընդլայնելու հնարավորությունների շուրջը: 2008-ին Կոսովոյում կրկնապատկվել է հայ խաղաղապահների զորախմբի թվաքանակը՝ դասակի մակարդակից հասնելով վաշտի մակարդակի:

«Տեղի՞ն են արդյոք Ադրբեջանի նախագահի պատերազմ սկսելու ոգեշնչանքները հայտարարությունները եւ որքանով է ՀՀ զինուժը պատրաստ հակահարված տալու Ադրբեջանի նման ոտնձգություններին», **«Ազգի»** հարցին, պաշտպանության նախարար Միխայել Հարությունյանը պատասխանեց. «Այդ հարցը պետք է տվեր նախագահ Ալիեւին, ինքը պետք է պատասխան տա այդպիսի ելույթների համար: Ինչ մնում է Հայաստանի հանրապետությանը, ես արդեն ասել եմ իմ խոսքերի մեջ, պատրաստ ենք հակահարված տալու ամբողջությամբ եւ հակահարված տալու այն զինված ուժերին, որոնք կարող են ժողովրդի եւ մեր սահմանների անդորրը խախտել, մի բառ առաջ գալ: Համոզված եղեք, որ մենք պատրաստ ենք այդ գործողություններին դիմակայել: Մենք չենք ուզում այսօր, եւ համոզված եմ, Ադրբեջանի ժողովուրդն էլ չի ուզում, որ հարցը որոշվի ուժային մեթոդով: Խաղաղ մեթոդով պետք է որոշվի Ղարաբաղի հարցը: Այն՝ ինչ անում է Ադրբեջանի ղեկավար կազմը, տեղին չէ: Ես ասել եմ, մտածեք ինչ պետք է անի ժողովուրդը, եթե 20 տոկոս կորցնեք, եւս 2 միլիոն փախստականներ ունենաք: Բայց ասեմ հետեւյալը. իրենց զինված ուժերն էլ են արդիականացվում, զինամթերք են առնում, իրենց բյուջեն են ավելացնում: Մենք այդ բոլորը տեսնում ենք եւ մենք էլ որոշումներ ենք ընդունում՝ զինված ուժերի մարտունակությունը բարձրացնելու համար»:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի մեղադրանքին, թե հրադադարի խախտում է տեղի ունեցել Ղարաբաղի կողմից, նախարարը նշեց, որ ընդհանրապես հրադադարի խախտում կա, բայց չի վերաբերում ո՛չ Ղարաբաղին եւ ո՛չ էլ Հայաստանին:

Կոգեվի՝ Ադրբեջանը, եթե Հայաստանում ընտրությունների ժամանակ ներքաղաքական արհեստական զարգացումներ լինեն, նախարար Հարությունյանը պատասխանեց. «Ես չեմ հավատում, որ մեր երկրում այդպիսի ներքաղաքական զարգացումներ կլինեն, եւ ամեն ինչ կգնա իր հունով: Մենք լավ գիտենք, որ 90-ականներին Ադրբեջանի քաղաքական դրությունը վատթարացավ: Բայց դա չէր գլխավորը, գլխավորը այն էր, որ մենք ուժեղ էինք Ադրբեջանից եւ կարողացանք հաղթել: Ոչ ոք չի կարողանա ոտնձգություն կատարել Հայաստանի հանդեմ: Դրա համար մենք լինելու ենք ժամանակակից պատրաստականության բարձր վիճակում»:

ՀՀ պաշտպանության նախարար Միխայել Հարությունյանը նշեց մեկ կարեւոր հանգամանք եւս: 2007-ին ժամկետային զինծառայողների զորակոչելու կամ ժամկետային դեղերի թիվը 31 է: Սա ամենացածր ցուցանիշն է բանակի կազմավորման օրից ի վեր:

ՆԱՐԻՊ ՄՈՒՐԱԴՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է յուրաքանչյուր օր
«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Հեռ՝ 374 10 562863
e-mail azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՀԱՎԵՐ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՀԱՎՐԵՏՅԱՆ / հեռ 529221
Գործադիր տնօրեն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Գանձապետ, հաշվապահ / հեռ 582483
Շտաբային լրահավաք ծառայություն / հեռ 529353
Գանձապետական տարածք
«Ազգ» թերթ
Թերթի նիթերի անթողարկան թե մասնակի արտատպումները թույլատրվում են միայն կայքի հղումով կամ ռադիոհեռուստատեսության դեպքում առանց խմբագրության գրաբար հանձնարարության խստիր արգելվում են հանձնարարությունները ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի
Նիթերը չեն գրախոսում ու չեն վերադարձնում
Գ տարով յուրաքանչյուր գովազդային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
HAVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 0010

Վազգեն Մանուկյանը գալիս է բրգաձեւ մոդելը ցանցայինով փոխարինելու

ԱԺՄ նախագահ, ՀՀ նախագահի թեկնածու Վազգեն Մանուկյանը մյուս թեկնածուների նախընտրական ծրագրերի շաղ դրույթների է համաձայն, բայց մոտեցումներում իր ծրագիրը մյուսների համեմատ տարբեր է համարում: Այս մասին նա խոսեց երեկ «Տեսակետ» ակումբում, իսկ տարբերությունն այն է, որ կարեւորում է ոչ թե անձերի փոփոխությունը, այլ այդ փոփոխությունները անօգուտ դարձնող կարծրացած մոդելի փոփոխությունը, այն է՝ բրգաձեւը ցանցայինի վերածելը: Այդ նույնակով էլ Վազգեն Մանուկյանը նախընտրական ծրագրում մանրամասն վերլուծել է անկախությունից հետո մեր անցած քաղաքական կյանքի փուլերը եւ եկել եզրահանգման, որ հարկավոր է տնտեսության ու քաղաքականության սերտաձումը վերացնել. «Եթե ես դառնամ նախագահ, առա առաջին քայլերից մեկը կլինի վերցնել նախագահի վերահսկողության ծառայությունը, կներգրավեի ընդդիմադիր քաղաքական գործիչներին, հասարակական գործիչներին, ուրախության լայն եւ թափանցիկ ընկալում լինի: Բոլոր նախորդ տարիների բողոքները ցույց է վերանայվեն: Մարդիկ անպաշտպան են, մարդիկ չեն իմանում ում դիմել, որ իրենց իրավունքները վերականգնվեն: Այդպիսի գործողություններով դաշտը մի քիչ մաքրելուց հետո անհրաժեշտ է ընդունել նոր սահմանադրություն»:

Դարաբաղի հիմնախնդրի առնչությամբ էլ Վազգեն Մանուկյանը փորձեց անընդունելի է համարում այդ հարցում Հայաստանի զիջման գնալը՝ դրանից հետո լավ ապրելու ակնկալիքով. «Մենք գտնում ենք, որ դա ոչ միայն Արցախի ժողովրդի ինքնորոշման հարցն է, այլեւ Հայաստանի անվտանգության: Եվ դա այն հարցն է, որը կարող է հանգիստ բերել ողջ հայությանը»:

Մեկ կարգախոսն էլ, Վազգեն Մանուկյանի կարծիքով, չի կարող ներառել ու փոխանցել ծրագրերն ամբողջովին, այնպես որ բանախոսը կարգախոս է համարում եւ իր ծրագրի վերնագիրը՝ «Եկեք տեր կանգնենք մեր երկրին, մեր հարգանքին», եւ «Փոխել եւ ոչ թե հարմավել» ձեւակերպումը: Ընդ որում, փոխելու նույնակը եւ իշխանություններին, եւ համակարգին, եւ շաղ այլ հարցերի վրա է տարածվում:

Գործող սահմանադրության եւ արդեն իսկ ընտրված խորհրդարանի պարագայում չի կարեւորվում, անգամ ավելորդ է դառնում սեփական թիմի հրապարակումը, ըստ Վազգեն Մանուկյանի, հանի որ կառավարության կազմը Ազգային ժողովն է որոշում: Ուժային կառույցները մնում են նախագահի իրավասությունների շրջանակում, եւ նախագահի թեկնածու Վազգեն Մանուկյանն այդ առումով խնդիր չի տեսնում. «Պաշտպանության նախարարի հարցն ինձ համար ամենից հետո լուծելին է: Ոչ թե թեկնածու կա, պարզապես ինձս այդ ոլորտը շաղ լավ եմ պատկերացնում»:

1996, 1998, 2003 թվականի ընտրություններում չտրված, իսկ գալիք ընտրություններում հանախական դարձած երկրորդ փուլում ով ում աջակցելու մասին հարցի կարեւորումը Վազգեն Մանուկյանն այս կերպ բացատրեց. «Ամեն անգամ այդ հարցը լուծվել է տարբեր ձեւերով: 1996-ին ուղղակի երկրորդ փուլ չեղավ, 1998-ին երկրորդ փուլ եղավ, կուսակցությունների մեծ մասը միացավ Ռոբերտ Քոչարյանին, մնացին դրտրը միայն ԱԺՄ-ն ու Կոմկուսը, երկուսն էլ որոշում կայացրին ոչ մեկին չաջակցել: 2003-ին ճանր վիճակի մեջ ընկավ Արտաշես Գեղամյանը, ոչ մեկին չմիավորվելով: Բայց երբեք նախապես չի ասվել: Այս ընտրությունները սկսվեցին 2-րդ փուլի մասին խոսակցություններից: Ես դրա մեջ տեսնում եմ արհեստական խաղ»: Աջակցության հարցը Վազգեն Մանուկյանի համար հնչելի չէ, հանի որ վստահ է իր ներկայությանը երկրորդ փուլում. «Հասկանում եմ, որ հենց ես էլ պետք է լինեմ երկրորդ փուլում եւ Կիկոսի պատմությունները հնարակելը գտնում եմ ոչ նույնակահարմար: Եվ նորից մտածեմ, այդ ինչի՞ շնորհիվ մինչեւ հիմա այդ հարցը չէր դրվում, ու հիմա առաջացավ: Մտածեմ, թե ինչ խաղ է»:

1996 թվականի ընտրությունների առնչությամբ Վազգեն Մանուկյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի հակադիր կարծիքներն անդրադարձի կատակերգությամբ Վազգեն Մանուկյանն ասաց. «Այդ ժամանակ, այդ դեմքերին մասնակից ենք եղել ոչ թե ես ու Լեւոն Տեր-Պետրոսյանը, այլ մասնակից է եղել մեկ միլիոն, երկու միլիոն մարդ: Բոլորը, այն ժամանակվա թերթերը վերցրեք կարդացեք, բոլորն իրենց եզրակացությունը արել են: Ու դրա վրա կնիքը դրված է, այդ էջը փակված է»: Այնուամենայնիվ եղածում բանախոսը մտահոգիչ կետեր էլ տեսնում է. «Պարզեմն այն է, որ եթե մեկն ու մեկը, Լեւոն Տեր-Պետրոսյանին էլ մոռացեք, եթե մեկն ու մեկը հայտարարում է այն դեմքերում, երբ նույնիսկ իր առածը հարված է եղել պետությանը, բայց ինքն ասում է՝ ես միշտ ճիշտ եմ եղել, դիմացինները են սխալ եղել, արա այդ մարդը արագայում էլ նույնը կլինի: Դա է մտահոգիչը»:

Ն. Պ.

«Եթե զարգացումներն այսպես գնան, առաջին փուլում կհաղթի Սերժ Սարգսյանը»

Կարծում է ՀՀԿ շտաբի մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովը

Երկուշաբթի մեկնարկում է երկրի նախագահական ընտրությունների քարոզարշավը, որին Հանրապետական կուսակցությունը պատրաստվել-սպասում է ամբողջ հանրապետությունում ստեղծած շուրջ 1300 շտաբներով եւ տարածքային կառույցներով: ՀՀԿ նախագահ նախընտրական շտաբի ղեկավարի հարցում էլ փոփոխություն չի եղել, ինչպես գրվել է մամուլում, նախընտրական ամբողջ թոհուբոհի ՀՀԿ-ական մասի պատասխանատու փաստորեն մնում է տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ Հովիկ Աբրահամյանը:

Երեկ այս մասին հայտարարեց պատգամավոր, ՀՀԿ նախընտրական շտաբի մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովը՝ միաժամանակ հավելելով. «Մամուլում հրապարակվածը հակաքարոզչություն է եւ, մեղմ ասած, չի համապատասխանում իրականությանը: Պարզ է, թե ովքեր են պատվիրատուները, բայց դա ինձ համար երկրորդական է: Կարեւորն այն է, որ մեր շտաբը համախմբված է Հովիկ Աբրահամյանի շուրջը»:

Էդուարդ Շարմազանովը հերքեց նաեւ մամուլում եղած լուրերը, թե հանրապետականներն արդեն մարզերներին եւ գյուղապետներին զգուշացրել են, թե ով որքան ձայն պետք է ապահովի: Մամուլի խոսնակը շեշտեց, որ իրենք դեռ են օրինախախտումներին եւ իրենց քարոզարշավը կազմակերպելու են Հայաստանի օրենսդրությանն ու միջազգային չափանիշներին համապատասխան: ՀՀԿ-ական պատգամավորը նշեց, որ իրենց համար գերխնդիր է լեգիտիմ, ժողովրդավարական չափանիշներին համապատասխան ընտրությունների անցկացումը, որովհետեւ «մեզ պետք չի խոցելի նախագահ, մեզ պետք է ժողովրդի ընտրած նախագահ»:

ՀՀՇ անդամ Արամ Մանուկյանն օրերս հայտարարել էր, թե Լեւոն Տեր-Պետրոսյանն առաջին փուլում հաղթելու է: Էդուարդ Շարմազանովը բարձր գնահատեց Արամ Մանուկյանի հումորի զգացումն ու շեշտեց, թե Լեւոն Տեր-Պետրոսյանի հաղթանակը հնարավոր էր միայն բոլոր ընդդիմադիրների միավորման պարագայում, ինչը չեղավ: Նկատեցի, որ նախկին նախագահի կողմնակիցներն էլ նշում են, որ իրենց թեկնածուին սպասում են 17 կուսակցություններ եւ հասարակական կազմակերպություններ: Փոխարենը, ՀՀԿ նախընտրական շտաբի խոսնակի կարծիքով, զարգացումների այսօրվա տեմպերի շարունակման դեպքում Սերժ Սարգսյանը կհաղթի առաջին փուլում, այն էլ նկատելի տարբերությամբ:

Լեւոն Տեր-Պետրոսյանի մեկ այլ հայտարարությանն անդրադառնալով, թե իրեն աջակցողները կփոխհատուցվեն պետական ասիճանակարգով, Էդուարդ Շարմազանովը խորհուրդ տվեց նախկին նախագահին թերթել սահմանադրությունը, որտեղ հստակ տրվում է կառավարության ձեւավորման մեխանիզմը: Ինչ վերաբերում է հեռընտրական գործընթացներին կամ առավել եւս դրանցում երկրի ուժային կառույցների մասնակցությանը, պատգամավորը նշեց. «Հայաստանի Հանրապետությունում գունավոր հեղափոխությունների եւ հեղափոխական իրավիճակների կամ ընդհանրապես հեղափոխական իրադրություն չկա: ՀՀ-ում կան խնդիրներ, որոնք կլուծի կառավարությունը բարեփոխումների երկրորդ փուլում»: Ուժային կառույցների միջամտության մասով էլ թե՝ «Մեր երկրում ուժային կառույցները չեն մասնակցում հաղթականությանը: Չգիտեմ, իր ժամանակ ոնց, բայց... (անավարտ թողնելով միտքը՝ ժպտում է-Գ. Գ.)»:

Դարաբաղյան խնդրի կարգավորման առնչությամբ էդ. Շարմազանովն ընդգծեց, որ Սերժ Սարգսյանը լավատեղյակ է բանակցային ամբողջ գործընթացից եւ նրա նախագահի ընտրվելու դեպքում «Դարաբաղի հարցի լուծման մեջ հայանպաստ որոշումը գերակշռող է լինելու»:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Այսօր

◆Ժամը 13.00-ին «Կոնգրես» հյուրանոցի «Պիկասո» դահլիճում կներկայացվի «Իրավական նախաձեռնություն, ընտրություններ-2007» ծրագիրը եւ կանցկացվի կլոր սեղան-քննարկում:

◆Ժամը 18.00-ին Կամերային երաժշտության տանը «Հովեր» կամերային երգչախումբը եւ «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն կանցկացնեն Հռանն Դինոի մահվան տարելիցին նվիրված հիշատակի երեկո:

Երկուշաբթի

◆Ժամը 10.30-ին «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում նախագահի թեկնածու Արթուր Բաղդասարյանը կներկայացնի իր նախընտրական ծրագիրը:

◆Ժամը 11.00-ին կառավարության ընդունելությունների տանը կբացվի հայ-ռուսական գործարար համաժողովը, որին կմասնակցեն վարչապետ Սերժ Սարգսյանը, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Ներսես Երիցյանը:

◆Ժամը 13.00-ին «Ուրբաթ» ակումբում կհյուրընկալվի «Թեթեյան» մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը:

◆Ժամը 13.30-ին կառավարության ընդունելությունների տանը մամուլի ասուլիսով հանդես կգան Արա Աբրահամյանը եւ Ներսես Երիցյանը:

◆Ժամը 14.00-ին «Ուրբաթ» ակումբի հյուրն է Քաղաքացիների միության նախագահ Հմայակ Հովհաննիսյանը:

◆Ժամը 14.00-ին «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում տեղի կունենա Արտաշես Գեղամյանի «Հայաստան-2008. առաջնան ծրագիր» ընտրանքը:

◆Ժամը 15.00-ին Երեւանի ինֆորմատիկայի պետական ֆոնդում տեղի կունենա Աշխատանքի եւ հմտություններ ծրագրի ընտրանքը:

◆Ժամը 18.30-ին «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում իր նախընտրական ծրագիրը կներկայացնի նախագահի թեկնածու Վահան Հովհաննիսյանը:

Սուրբ Սարգիսը՝ որպես ճշմարիտ քրիստոնյայի օրինակ եւ հավատարիմ սիրո հովանավոր

Սուրբ Սարգի համաժողովրդական համբավը եւ նրա տոնի նախապատրաստությունը գալիս են լրացնելու այն ոգեղեղնության բացը, որ ամեն քայլափոխի զգում ենք նյութականացված ու ամեն ինչ դրամական արժեքի վերածվող մեր ժամանակներում: Սրբի մասին պատմությունը, նրա երկրային ու երկնային կյանքի ողջ ճանապարհը հակակշիռ օրինակ են դառնում պոտեռամոլությունի, ծովածեռների ու տարատեսակ չարերի մասին մտացածին ու դատարկ պատմություններով լի ֆիլմերով տարված մեր երեխաների ու երիտասարդների համար, ովքեր աստվածահաճո մարդկանց կերպարները թողած՝ ամեն տեսակ երեւակայական անօրինակելի պատմություններով են դաստիարակվում եւ արժեհամակարգ ձեւավորում:

Այնուամենայնիվ, «Մեր ուսումնասիրությունները փաստում են, որ Սուրբ Սարգի տոնի տարածվածության միտում է նկատվում 1990-ական թվականներից սկսած», երեկ «Հայցք» ակումբում կազմակերպված մամլո ասուլիսի ժամանակ նշեց ազգագրագետ Սամվել Մկրտչյանը: Նա մեզ հետաքրքրական մանրամասներ ներկայացրեց հիրավի համաժողովրդականություն վայելող այս տոնի մանրամասների մասին: Չնայած Սուրբ Սարգի՝ սիրո առագահաս սրբի տոնականությանը հատկապես հաղորդ են դառնում արբունքահաս աղջիկները, այնուամենայնիվ, տոնի կատարումը եւ նրա ավանդույթների պահպանումն ու նոր սերունդներին փոխանցումը մեծապես հայ տիկնանց ու տանտիկնոջների առաքելությունն է համարվել: Մասնավորապես, նա ուշադրություն հրավիրեց հայ մամիկների (անկախ նրանց սոցիալական դիրքից) ղեկավարությամբ կազմակերպվող այն հմայական ու ավանդական սովորույթների վրա, որոնցից էր, ասենք, եռաբերդ գաթայի թխումը՝ հիմնականում փոխհնդի համադրությամբ, որի համար օգտագործվում էին մրգային, կաթնային (պանիր) եւ դրամային մասնաբաժիններ: Ըստ ավանդույթի, ում հասներ թխվածքի կաթնային մասը, նրա ամուսինը անասնապահ էր լինելու, մրգային մասնաբաժինն ունեցողը սպասում էր այգեպանի, իսկ ում գաթան մեծաղադրամ էր պարունակում, մեծահարուստ ամուսնու՝ ակնկալիք կարող էր ունենալ: Նույն գաթայով զուգակցում էին, թե իբր ընտանիքի որդիներից ում բաժին ընկնի մրգային հատվածը, նա ժառանգություն կստանա հայրական ունեցվածքի այգիներ, ում պանրով կտորը՝ անասունները, իսկ մեծաղադրամով մասնաբաժին ունեցողը՝ հայրական տունն ու դրամական ունեցվածքը: Իսկ սկուտեղով փոխհնդի ու աղի բլիթի մասին բոլորը գիտեն նաեւ ներկայումս:

Ազգագրագետը ուշադրություն հրավիրեց նաեւ այն հանգամանքի վրա, որ հնում Սուրբ Սարգիսը նաեւ ներողության մեջ գտնվողների, ծամփորդների ու աղքատների, գերի ընկածների, բռնության ենթարկված աղջիկների հովանավորն է համարվել: «Սուրբ Սարգիսն ամեն մեկին չէր այցելում: Հատկապես նրանց էր օգնում, ովքեր պահել են իր անունով պահիը, ովքեր բարի են»:

Ասուլիսի մյուս բանախոսը՝ Սուրբ Սարգիս եկեղեցու քահանա Հակոբ հիմ. Խաչատրյանն էլ տեղեկացրեց, որ համարհատնենական Սուրբ Սարգի վարդ Միհայել անունով մի ճգնավոր վերցրել է ասորական մի վարից, տառացիորեն թարգմանել եւ հանձնել Ներսես Շնորհալուն, որն էլ ավելի գեղարվեստական որակի է բերել սրբի կյանքի եւ հերոսական կյանքի ու մահվան պատմությունը, մանավանդ որ նրա գործունեությունն ինչոր չափով առնչվում է նաեւ Հայաստան աշխարհին:

Այս տարի հունվարի 21-ին տոնվող Սուրբ Սարգի տոնի խորհուրդը մեկնաբանելով՝ տեր Հակոբն ասաց. «Սուրբ Սարգի տոնն ազգային սովորություններով ու ավանդույթներով զուգորդված լինելով, մեզնից յուրաքանչյուրին ասելիք ունի: Սուրբ Սարգիսը գալիս օրինակ է հանդիսանալու ամենքիս համար, որպեսզի մեր կյանքը նկատենք Աստծու կողմից որոշակի շնորհ եւ ծառայեցնենք հանուն հանուր շահերի, ինչպես Սուրբ Սարգիսը, գինվորական լինելով հանդերձ, օգնում էր սուլյալներին, աղքատներին ու կարոտյալներին»:

ՍՈՒՐԵՆ ՍՈՒՐԵՆՅԱՆ

Ճշտում

Սեդրակ Դավիդյանի (ԴՅ Սեդրակի) մահվան մասին երեկվա հաղորդագրության մեջ սխալ է սպրդել: Սեդրակի թաղումը տեղի կունենա այսօր՝ հունվարի 19-ին, ժամը 14.00-ին Նորագավիթի Ս. Գետերզ եկեղեցուց:

Թանկագին պարոն Հայկ Հարությունյան, Ձեր ծանր վշտի պահին դառնացած ցավակցում եմ Ձեր շաս սիրելի եղբոր՝ Հակոբի վաղաժամ մահվան կապակցությամբ: Ցանկանում եմ Ձեզ առողջություն եւ կարողություն՝ այդ ծանր վիշտը տանելու համար:

Ն.Դ., գնդապետ Մրգարյանի այրի՝ Սաթենիկ Մնացականյան

Հիպոթեկային վարկերի պահանջարկը Հայաստանում 2008-ին կկազմի մոտ 1 մլրդ դոլար

Գերմանական KfW բանկը Հայաստանին տրամադրեց եւս 6 մլն եվրո

Գերմանական KfW բանկի եւ Հայաստանի Կենտրոնական բանկի միջեւ երեկ ստորագրվեց Հայաստանում հիպոթեկային (բնակարանային ֆինանսավորման) վարկավորմանն աջակցելու նպատակով 6 մլն եվրո հատկացնելու պայմանագիրը: Դա այս ծրագրի երկրորդ փուլն է նախանշում, իսկ առաջին փուլի համար 2007-ին արդեն իսկ տրամադրվել էր 6 մլն եվրո: Այսինքն, ծրագրի ընդհանուր արժողությունը կազմում է 12 մլն եվրո: Անդրադառնալով այս ծրագրին, Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը նշեց, որ բացի վերոնշյալ 12 մլն եվրո գումարից, հայկական կողմը առավել կարեւորում է, որ այս ծրագրով մեր մասնագետները ձեռք են բերում նոր գիտելիքներ, ծանոթանում միջազգային փորձին, Հայաստան է ներմուծվում նոր աշխատաոճ:

Ինչ վերաբերում է Հայաստանի հիպոթեկային շուկային, առա վերջին երկու տարում կրկնապատկել է ծավալները, հասնելով 55 մլրդ դրամի: Եվս մեկ արժանահիշատակ տվյալ հաղորդեց ԿԲ նախագահը՝ եթե 2 տարի առաջ հիպոթեկային վարկերի 98 տոկոսը տրվում էր դոլարով, ապա այժմ գերակշռում են դրամային վարկերը:

KfW-ի Հայաստանի ներկայացուցիչ Կառլոս Գեւորգյանը նշեց, որ գերմանական բանկը չի հավակնում լրացնել Հայաստանի հիպոթեկային վարկավորման շուկայի ամբողջ պահանջարկը, քանի որ այն շատ մեծ է: Նա նույնպես կարեւորեց այն հանգամանքը, որ այս ծրագրով Հայաստան են մտնում նոր սանդարտների ներմուծման, երկարաժամկետ շուկայի նախադայմանների ստեղծման տարր: Միաժամանակ Կառլոս Գեւորգյանը հայտնեց, որ վարկի առաջին 6 մլն եվրոյի շուրջ 75 տոկոսն արդեն տեղաբաշխվել է: Մնացած մասն, ըստ գերմանական բանկի ներկայացուցչի, կտեղաբաշխվի մինչեւ այս տարվա մայիս ամիսը: Դա բացատրեց նրանով, որ վարկի երկրորդ մասը կստացվի այդ ժամանակ եւ գերմանական կողմը չի ցանկանում, որ այդ ընթացքում միջոցների պակաս կամ բացակայություն առաջանա:

Այն հարցին, թե արդյոք KfW-ն նպատակ չունի՞ հայկական բանկերից որեւէ մեկի բաժնեմասը ձեռք բերել, ինչպես վերջերս վարվում են միջազգային ֆինանսական կազմակերպությունները, Կառլոս Գեւորգյանը պատասխանեց, որ այս տարվա փետրվարին, երբ Հայաստանում «Պրոկրեդիտբանկը» կսկսի գործել, KfW-ն եւ Եվրոբանկը կունենան 17 տոկոս բաժնեմաս:

Հայաստանում հիպոթեկային վարկավորման հեռանկարների մասին խոսելով, գերմանական բանկի ներկայացուցիչն այն կարծիքը հայտնեց, որ այս տարի շուկայում մրցակցության արդյունքում վարկավորման տրամադրման ժամկետները կերկարեն: Արդեն հիմա մինչեւ 15 տարով վարկավորման առաջարկներ կան: Սակայն նրա կարծիքով, տոկոսադրույքների նվազումն այստեղ կդանդաղի:

Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանն այս առթիվ հույս հայտնեց, որ 2008-ին վարկավորման եւ հատկապես հիպոթեկային վարկավորման ծավալները Հայաստանում կաճեն: Ընդ որում, ինչպես եւ այս տարի, վարկային կազմակերպությունները վարկավորման ավելի բարձր աճ կունենան, քան բանկերը: ԿԲ նախագահի կարծիքով, անցյալ տարվա մոտ 400 մլն դոլար վարկավորման պահանջարկի փոխարեն, այս տարի այդ ծավալը կարող է հասնել մինչեւ 1 մլրդ դոլարի: Եվ դա անկախ ընտրական տարուց:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ,

«Արտերկրից գնաճային լուրջ ճնշումներ կան»

Նշեց Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը

Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը երեկ, պատասխանելով լրագրողների հարցին, թե ինչպես է վերաբերվում ԱՄՆ ֆեդերալների նախագահի այն գնահատականին, ըստ որի դոլարի արժեզրկումը շարունակվելու է եւ դա ինչ ազդեցություն կունենա Հայաստանի դրամավարկային հաղորդակցության վրա, ասաց, որ այս խնդիրն իր ազդեցությունն է թողնում բոլոր երկրների տնտեսությունների վրա եւ մահոգում է ամբողջ աշխարհին: Ըստ նրա, կարեւոր է, թե ինչպիսին կլինի ԱՄՆ տնտեսության վիճակը, անկում կունենա՞, թե՞ կմնա նույն վիճակում, ինչպիսին կլինի հիպոթեկային շուկայի եւ մասնավորապես վարկերի վերադարձելիության վիճակը: Այս ամենի մասին գնահատականներ է տալիս աշխարհի առաջատար 120 փորձագետներից կազմված խումբը, որոնց հետեւում են ֆինանսական շուկայի խոշոր մասնակիցները: Նրանց կարծիքը ԱՄՆ տնտեսության հետագա վիճակի մասին այժմ կիսված է՝ մի մասը կարծում է թե այստեղ կբարելավվի ռեցեսիան (անկումը), մյուսները, որ այն դուրս կգա այդ վիճակից: Մի կողմից՝ բարձր գնաճն է, մյուս կողմից՝ տնտեսական անկումը, որը սպիտում է ԱՄՆ ֆեդերալներին նվազեցնել տոկոսադրույքները: «Սա է այն դիլեման, որը հնարավորություն չի տալիս միանշանակ գնահատականներ տալու», ասաց ԿԲ նախագահը:

Վերոնշյալն, ըստ Տիգրան Սարգսյանի, բնականաբար, լուրջ խնդիրներ է ստեղծում նաեւ Հայաստանի դրամավարկային հաղորդակցության համար: Արտերկրից գնաճային լուրջ ճնշումներ կան՝ վառելիքի, կառագի, յուղի, կաթնամթերքի գների բարձրացման տեսքով: Համաշխարհային մակարդակով այս երեւույթի մասին խոսելով, ԱՄՆ ֆեդերալների նախկին նախագահ Ալան Գրինսպանն ասել է, որ առաջիկա 15 տարում պետք է մոռանալ ցածր գնաճի մասին: Դրան նպաստելու են նաեւ Հնդկաստանի եւ Չինաստանի տնտեսական աճը եւ պահանջարկի ավելացումը, Եվրոպայում գյուղատնտեսության սուբսիդավորման ավելացումը: ԿԲ նախագահի հավաստիացմամբ, եվրոյի եւ դոլարի փոխարժեքի վերաբերյալ կանխատեսումներ անելը շատ դժվար է: «Այդ առնչությամբ կան գնահատականներ, բայց դրանք շատ փոփոխական են», եզրափակեց ԿԲ նախագահը:

Ա. Մ.

«Արարատբանկը» 6 մլն դոլար ստացավ Եվրոբանկից

Վերականգնման եւ զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) երեկ եւս մեկ հայկական բանկի՝ «Արարատբանկի» հետ վարկային պայմանագիր ստորագրեց: Համաձայն դրա, Եվրոբանկը «Արարատբանկին» կտրամադրի 6 մլն դոլար 5 տարի ժամկետով: Ինչպես ստորագրման արարողությունից հետո ասաց «Արարատբանկի» գործադիր տնօրեն Ալոյս Օսիպյանը, ստորագրվել է երկու պայմանագիր: Առաջինը՝ 5 մլն դոլարի, որը կուղղվի մանր, փոքր եւ միջին բիզնեսի վարկավորմանը, երկրորդը՝ 1 մլն դոլարի, առեւտրի ֆինանսավորման նպատակով: Միջին տոկոսադրույքը, որով բանկը վարկեր կտրամադրի ձեռնարկություններին, կկազմի 14-16 տոկոս:

Ալոյս Օսիպյանը նաեւ հայտնեց, որ ՎԶԵԲ-ը տրամադրելու է դրամաշնորհ տեխնոլոգիական աջակցության տեսքով՝ միկրոբիզնեսի, փոքր եւ միջին ձեռնարկատիրության, միջազգային առեւտրի զարգացմանն աջակցելու նպատակով:

Եվրոբանկի ներկայացուցիչ Մայլզ Վայնշտեյնը իր հերթին նշեց, որ մինչեւ վերջերս բանկը համագործակցում էր 4 հայկական բանկերի հետ, որոնց թիվն արդեն ավելանում է: Նա ուրախություն հայտնեց, որ «Արարատբանկը» եւս մեկն է «հայկական բանկերի այն փոքր ընտանիքի մեջ», որոնց հետ աշխատում է Եվրոբանկը:

«Արարատբանկի» կողմից պարտատոմսերի թողարկման մասին խոսելով, Ալոյս Օսիպյանը հայտնեց, որ անցյալ տարվա ընթացքում թողարկված պարտատոմսերը տեղաբաշխվեցին սպասվածից ավելի շուտ՝ դեկտեմբերի վերջին եւ որ առաջարկը գերազանցեց պահանջարկը մոտ 50 տոկոսով: Նա տեղեկացրեց, որ այս տարվա ընթացքում նույնպես նախատեսվում է պարտատոմսերի թողարկում:

Ա. Մ.

Հարկային տեսչության պեսը հարցվողի եւ հարցնողի դերում

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը 8 տարեկան է

Լրացել է Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպության հիմնադրման եւ գործունեության 8 տարին: Միանալով այս առթիվ լրագրող գործընկերների շնորհավորանքներին, նշենք, որ առաջնորդվելով իր ընտրած նշանաբանով՝ «...Ճշմարտությունը ավելի թանկ է», ակումբն այս տարիներին ոչ միայն եղել եւ մնում է ազատ խոսքի ամբիոն:

Որպես հաղորդի օգտվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով տրված իրավունքից, «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը վերջերս հերթական հարցումներն է ուղղել տեղեկատվություն տնօրինող պետական պատասխանատու, այս անգամ՝ Գյումրու հարկային տեսչության պետին: Ինչպես Լ. Բարսեղյանը հայտնեց երեկ հրավիրած մամուլի ասուլիսում, դեկտեմբերի 25-ից մինչեւ հունվարի 17-ը վերջինիս իր ուղարկած տասը պատվիրված նամակներով խնդրել է տրամադրել տեղեկություններ, որոնք, ըստ ներկայացված ցանկի, վերաբերում են Գյումրու հարկային տեսչության 2007-ի ծախսերին, ծառայողական ավտոմեքենաներին, տեսչության հատուկացուցակին եւ նրա պատասխանատու անձանց մասնագիտական, կրթական, կոնտակտային տվյալներին, Գյումրու հարկային տեսչությունում հաշվառված հարկատուների կազմին, հարկային ծառայության այս ստորաբաժանումում հաղորդիչների ընդունելության սահմանված կարգին, այստեղ տնօրինվող տեղեկությունների ցանկին ու դրանց տնօրինման կարգին, 2007-ի յուտաքսյուռ ամսվա ընթացքում տեսչությունում հաշվառումից ելած կամ գործունեությունը դադարեցնելու մասին իրազեկած իրավաբանական անձանց, այլ հարցերի: Հարցման հեղինակի տեղեկացմամբ՝ դրանց պատասխանելու փոխարեն Գյումրու հարկային տեսչության պետ Մարինե Չիլինգիրյանը հունվարի 10-ին մի գրություն է հղել «Ասպարեզ» ակումբ ՀԿ-ի նախագահ Նադեժդա Հակոբյանին, ապա հունվարի 12-ին մեկ այլ գրություն՝ Լ. Բարսեղյանին: Առաջին գրությամբ տեսչության պետը ակումբի նախագահից «դաշավորադաշխատանքային տոնով» «կարճ ժամկետում» ադացույց փաստաթղթեր է պահանջում, որ Լ. Բարսեղյանը... իսկապես հիշյալ ակումբի խորհրդի նախագահն է: Ըստ ասուլիսում տրված մեկնաբանության, այս տրամաբանությամբ եթե տեղեկատվության իր հարցման մեջ Լ. Բարսեղյանը ներկայանար, օրինակ, որպես «Հազարամյակի մարտահրավերներ-Հայաստան» ծրագրի բահաուների խորհրդի անդամ, ինչն իրականում այդպես է, Մ. Չիլինգիրյանն «այդ փաստը հիմնավորող փաստաթղթերի» պահանջեր ՀՄՀ-Հայաստան ծրագրի կառավարման խորհրդի նախագահից՝ ՀՀ վարչապետից եւ սանար դրամ «կարճ ժամկետում»:

Լ. Բարսեղյանին ուղարկած գրության մեջ Գյումրու հարկային տեսչության պետը հղում անելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-1 հոդվածին եւ հարկային պետական ծառայության կանոնադրության 1-ին կետին, հայտնում է, թե «Ձեզ անհրաժեշտ է դիմել ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն»: Թե տվյալ հղումները ինչ կապ ունեն տնտեսություններ տրամադրելու կամ չտրամադրելու հետ, պարզ չէ, ինչպես նշեց հարցման հեղինակը՝ դրանք հարցմանը պատասխանելու հանգամանքների հետ առնչություն չունեն եւ ոչինչ չեն պարզաբանում:

«ԳՏՏ պետի գրության տրամաբանությամբ՝ Գյումրու հարկային տեսչությունն այնքան ինքնուրույն չէ, որ կարողանա իր տնօրինած տեղեկությունները տրամադրել հաղորդացուն, բայց, մյուս կողմից, այնքան ինքնուրույն է, որ կարող է միայնակ որպես հայցվոր հանդես գալ ԳԱԼԱ հեռուստաընկերությունից 25.665.100 դրամ բռնագանձելու հայցադիմումով,- ասաց Լ. Բարսեղյանը:- Ստացվում է, որ նա կամ ԳԱԼԱ ՀԸ դեմ պատված հայցվոր չէ եւ այս դեպքում վերազանցել է իր իրավասությունները, ինչը պատասխանատու դիրքի չարաշահում է, կամ չարամտորեն խախտել է հաղորդում տեղեկատվություն ստանալու իրավունքը, ինչը անգործություն է»: «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահը հայտարարեց, որ իր հարցած տեղեկություններին կպասի եւս 4-5 օր, ապա, դրանք չստանալու դեպքում, կդիմի դատական միջամտության:

Ասուլիսում նշվեց, որ Գյումրու հարկային տեսչությունը տվյալ հարցումների առարկա տեղեկություններ կեսից ավելին ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համաձայն պետք է հրապարակած լիներ՝ անկախ որեւէ հարցման առկայությունից: Այդ դեպքում կարող էր հակիրճ պատասխանել, թե «...այդ տեղեկությունները հրապարակվել են այսինչ տեղում»:

Հ. Մ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱԾՁԲ-08/3 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **Երեւանի հաղթաթեատրանի կարիքների համար վերելակների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 5000 ՀՀ դրամ փոխանցել «Արոշինինվեստբանկ» էրեբունու մասնաճյուղ «Բեջ-Գալ» ՍՊ ընկերության N 2477230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-27, հանձնաժողովի քարտուղար Ս. Գեւորգյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 11.00-ն:

Արարողություն Խորեն Պալյանի հիշատակին

Հայտնում ենք մեր մտավորականի հանդեպ, որ հունվարի 20-ին, կիրակի օրը, ժամը 12-ին էջմիածնում, Մուրբ Գայանե եկեղեցու հանգստարանում տեղի կունենա հայ հնագույն՝ եւ հոգեւոր նշանակության խոշոր գիտակ եւ անգուգական կատարող, հմուտ բանաստեղծ եւ մտավորական երեւելի գործիչ Խորեն Պալյանի մահվան տարելիցին նվիրված հիշատակի արարողություն եւ կկատարվի հոգեհանգստի արարողություն:

Արարողությանը մասնակցել ցանկացողները հավաքվելու են ժամը 11-ին Երեւանի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքի առջեւ (Ալեք Մանուկյան 1):

19 ՅՈՒՆՈՒԱՐ 2008 ԷՋ Ա

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱԶԳ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

***Ա**ուրի պայմանագրով Հայաստանի Հանրապետության տարածքը ոչեմ է կազմեր, ընդհանուր առմամբ, 162.000 քառակուսի կիլոմետր: Սակայն հետագայում կնքված Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի արդյունքում այդ տարածքը կրճատվեց մինչեւ 30 հազար քառ. կիլոմետրի: Մենք արդյոք պատրա՞ստ ենք հաշտվելու Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի հետ: Այս խնդրի, նշված պայմանագրերի վիճարկման հնարավորությունների եւ անհետաձգելի անհրաժեշտության շուրջ է մեր հարցազրույցը փաստաբան, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ ՀԱՅԿ ԱԼՈՒՄՅԱՆԻ հետ:*

- Որո՞նք էին իրավական Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը, դրանց դրույթները համապատասխանո՞ւմ էին միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին: Ներկայումս արդյոք կա՞ն այդ պայմանագրերը վիճարկելու իրավական հիմքեր, վիճարկման մեխանիզմներ:

- Այս եւ ոչ միայն այս հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է ձեւավորել մի հանի պատմաբաններից եւ միջազգային իրավունքի ոլորտում մասնագիտացած ու մասնագիտացող իրավաբաններից բաղկացած աշխատանքային խումբ: Այսինքն՝ մի խումբ, որը կկարողանա խորապես ուսումնասիրել առկա բոլոր խնդիրները, ինչից հետո եզրակացությունները կներկայացնի ՀՀ իշխանություններին: Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը վիճարկելու համար, առանց ուշացնելու, պետք է ձեռնամուխ լինել այդպիսի մի միասնական աշխատանքի: Այն իր մեջ պետք է ներառի ոչ միայն հիշյալ պայմանագրերի բոլոր խոցելի կետերի վերհանումը եւ դրանց անվավերության հիմնավորումները, այլեւ այն դատավարական մեխանիզմների մշակումը, որոնց միջոցով հնարավոր կլինի միջազգային ատյաններում առավել արդյունավետ կերպով վիճարկել այդ պայմանագրերը: Այնուամենայնիվ, անդրադառնամ ձեր այն հարցին, թե որոնք են այդ պայմանագրերի վիճարկման հիմքերը: Նախ՝ Մոսկվայի պայմանագրի անվավերականության մասին:

1921-ի մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի եւ Թուրքիայի կառավարությունների միջեւ կնքվեց պայմանագիր, որով իրավունքներ ու պարտականություններ էին սահմանվում ոչ միայն պայմանավորվող երկու պետությունների, այլեւ այդ պայմանագրի կողմ չհանդիսացող Հայաստանի եւ Անդրկովկասի մյուս երկու պետությունների համար: Մասնավորապես այդ պայմանագրով Թուրքիային եւ Ադրբեջանին էին բռնակցվում Հայաստանի մի շարք տարածքներ: Մինչդեռ, իրավունքի հանրաճանաչ սկզբունք է, որ պետությունների միջեւ կնքված որեւէ պայմանագիր չի կարող իրավունքներ եւ պարտականություններ ստեղծել այդ պայմանագրի կողմ չհանդիսացող պետության համար: Հետեւաբար Մոսկվայի պայմանագիրը չի կարող որեւէ իրավունք ստեղծել Թուրքիայի կամ Ադրբեջանի համար այն մասով, որը վերաբերում է հայկական հողերին, եւ, միաժամանակ, չի կարող պարտավորեցնել Հայաստանին՝ հաշտվելու այդ հողերի կորստի հետ:

- Ցնորանանք, որ ոչ այնքան վաղուց՝ 1945-ի հուլիս-օգոստոս ամիսներին, Երկրորդ համաբխարհային պատերազմում հաղթած երեք դաշնակից պետությունների ղեկավարները Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսի ընթացքում ճնարկման առարկա էին դարձրել Հայաստանից բռնի կերպով Թուրքիային օտարված տարածքների հարցը: Հուլիսի 22-ին տեղի ունեցած նիստի ընթացքում անդրադառնալով նշված տարածքների հարցին, Ստալինը խոսք փոխանցել է ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Մոլոտովին, որը, մասնավորապես, ասել է. «Մենք համարում ենք, որ ԽՍՀՄ եւ Թուրքիայի միջեւ սահմանը որոշ տեղերում անարդար է: Իսկ, 1921-ին Խորհրդային Հայաստանից եւ Խորհրդային Վրաստանից տարածքներ են օտարվել՝ դա Կարսի, Արտահանի եւ Արդահանի հայտնի տարածքն է...»:

Հուլիսի 23-ի նիստում անդրադառնալով նույն հարցին, Ստալինը հայտարարել է. «... Մենք համարում ենք, որ Ղարսի եւ Արդահանի շրջանում սահմանը սխալ է եւ մենք հայտարարել ենք Թուրքիային, որ եթե նա ուզում է մեզ հետ դաշինք կնքել, պետք է «սահմանն ուղղի»: Ի դեմ, վերը կատարված մեջբերումները ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության կողմից հրատարակված «Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав-СССР, США и Великобритании, сборник документов, Москва, Издательство политической литературы, 1984 г.» աշխատությունից են:

- Արդյոք կան միջազգային այլանքներ, որոնք իրավասու են ճնարկության առնելու նշված պայմանագրերի անվավերության խնդիրը:

- Նմանատիպ իրավիճակներում հայտնված երկրների օրինակից ելնելով, կարելի է հարցը բարձրացնել ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովում, որն, իր հերթին, անհրաժեշտության դեպքում, ՄԱԿ-ի կանոնադրության 96-րդ հոդվածով նախատեսված կարգով, կարող է բարձրացված խնդրի իրավական կողմի վերաբերյալ պահանջել եւ սպանալ Միջազգային դատարանի խորհրդակցական եզրակացությունը:

Անդրադառնանք խնդրի մեկ այլ տեսանկյունից: Պետք չէ մոռանալ, որ խախտելով Հայաստանի իրավունքները՝ վերը նշված անվավեր պայմանագրերի միջոցով տիրանալով հայկական տարածքներին, Թուրքիան խախտել է ոչ միայն Հայաստանի՝ միջազգային իրավունքի սուբյեկտի, իրավունքները, այլեւ, միաժամանակ, բազմաթիվ հայերի սեփականության իրավունքը, որոնք սփռված են եղել Թուրքիայի տարածքում թողնել իրենց ողջ անշարժ գույքը: Ընդ որում, դա մի այնպիսի խախտում է, որը չի ավարտվել կատարման պահին, այլ շարունակվում է մինչ օրս: Այժմ էլ կան մարդիկ, որոնք դեռ սեփականություն ունեն Թուրքիայում, սակայն վերը նշված իրադարձությունների պատճառով մինչ օրս չեն կարող տիրել իրենց սեփականությանը:

Վերը նշվածի առնչությամբ պետք է նկատի ունենալ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իրավասու է քննարկելու «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի խախտումների վերաբերյալ բոլոր այն գանգատները, որոնք, սահմանված չափանիշերին համապատասխան, անձին ներկայացնում են այդ կոնվենցիան վավերացրած ցանկացած պետության դեմ: Ինչպես հայտնի է, Թուրքիան նույնպես վավերացրել է Եվրոպական կոնվենցիան, ուստի Եվրոպական դատարանն իրավասու է քննելու նաեւ Թուրքիայի դեմ տրված գանգատները:

Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը վերաբերում է անձի սեփականության իրավունքի պաշտպանությանը: Այդ հոդվածը, մասնավորապես, նախատեսում է, որ կոնվենցիային միացած յուրաքանչյուր պետություն պարտավոր է յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար ապահովել իր գույքից անարգել օգտվելու իրավունքը: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր ոք, ով ներկայումս Թուրքիայում անշարժ գույք ունի, կարող է իր գույքը հետ պահանջել, իսկ չվերադարձման դեպքում դիմել Եվրոպական դատարան ընդդեմ Թուրքիայի:

- Այն, որ Թուրքիան Եվրոպական կոնվենցիան վավերացրել է 1990-ին, մինչդեռ հայերը Թուրքիայի տարածքում գտնվող իրենց սեփականություններից զրկվել են շատ ավելի վաղ, չի՞ կարող առարկությունների պատճառ ծառայեցվել:

- Այո, կարող է պատճառաբանվել, թե Եվրոպական դատարանի իրավասությունից դուրս է այնպիսի խախտումների քննարկումը, որոնք տեղի են ունեցել մինչեւ անդամ-պետության կողմից կոնվենցիային միանալը: Սակայն Եվրոպական դատարանը համանման իրավիճակում քննության առնելով Լոիզիդուն ընդդեմ Թուրքիայի գործը, իր 18.12.1996 թ.-ի վճռով մի նախադեպ է սահմանել, որը կարող է շատ կարեւոր լինել մեզ համար: Դիմողը՝ Լոիզիդուն, Կիպրոսի հաղորդուհի էր: Եվրոպական դատարան ներկայացած իր գանգատում նա նշել է, որ սկսած 1974-ից, Թուրքիայի կողմից Հյուսիսային Կիպրոսի բռնազավթման պատճառով, զրկված է եղել այնտեղ գտնվող իր սեփականությանը տիրելու հնարավորությունից:

Թուրքիայի կառավարությունն, առարկելով Լոիզիդուի փաստարկների դեմ, պատճառաբանել էր, որ խախտումը, եթե այդպիսին եղել է, տեղի է ունեցել շատ ավելի վաղ, քան Թուրքիան միացել է Եվրոպական կոնվենցիային, հետեւաբար նշված հարցը Եվրոպական դատարանի քննարկման առարկա լինել չի կարող:

Թուրքիայի առարկության կապակցությամբ Եվրոպական դատարանը նշել է, որ սեփականության իրավունքի խախտումը տվյալ դեպքում տեւական բնույթ է կրում՝ տարածվելով նաեւ այն ժամանակաշրջանի վրա, երբ Թուրքիան արդեն միացել էր Եվրոպական կոնվենցիային: Նշվածից ելնելով, դատարանը գտել է, որ տվյալ գանգատը վերաբերում է իր լիազորություններին եւ ճանաչել է Թուրքիայի կողմից դիմողի նկատմամբ Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի խախտումը: Այսպիսով, Եվրոպական կոնվենցիայի ընձեռած հնարավորությունների օգտագործումը եւս մեկ ուղղություն է, որը կարող է արդյունավետ լինել մեր առջեւ դրված խնդիրների լուծման համար:

- Չժխտելով ձեր ասածի կարեւորությունը եւ այդ ուղղությամբ եւս քայլեր կատարելու անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, համազգային ու համաթեական բահերի տեսանկյունից ավելի կարեւոր է ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովում Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի վիճարկումը եւ այդ փաստաթղթերի ուժը կորցրած ճանաչելուն հասնելը: Եթե դա հաջողվի, ի վերջո, կան միջազգային հարկադրանքի միջոցներ, որոնցով հնարավոր կլիներ իրագործել ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի որոշումը կամ, եթե Հայաստանը խնդիրը միջազգային դատական այս կամ այն ատյանում բարձրացնի, այդ ատյանի համապատասխան որոշումը:

- Աշխարհը չափազանց արագ փոփոխվում է, միջազգային հարաբերություններում «ուժի իրավունքն» ասիճանաբար փոխարինվում է «իրավունքի ուժի» կարգախոսով: Զարգանում են ոչ միայն միջազգային վեճերի արդյունավետ լուծման, այլեւ, ինչն ավելի կարեւոր է, միջազգային հարկադրանքի մեխանիզմները: Համաբխարհային հաղորդակցության եւ միջազգային իրավակարգի զարգացումը, վաղ թե ուշ, հանգեցնելու են արդարության վերականգնմանը:

- Իսկ խնդիրը մինչեւ օրս չբարձրացնելու առումով արդյոք չե՞ք ուշացնում:

- Գործընթացը, ինչպես իրավաբանորեն նշում է նաեւ հարակից հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Հովհաննես Սարյանը, պետք է սկսել հնարավորին չափ շուտ: Այդ հարցին մասամբ արդեն անդրադարձա: Անվիճելի է, որ արդարությունը, վաղ թե ուշ, պետք է վերականգնվի, որի համար, սակայն, միջոցներ պետք է ձեռնարկվեն արդեն հիմա: Ջանքերը կարող են հանգեցնել նրան, որ հետագայում Հայաստանի Հանրապետությունն արդեն զրկված լինի Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերը իրավական մեխանիզմների միջոցով վիճարկելու հնարավորությունից: Չէ՞ որ «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 23.05.1969-ի կոնվենցիայի 45-րդ հոդվածին համապատասխան, պետությունն այլեւս չի կարող հրում կատարել պայմանագրի անվավերության կամ դադարեցման հիմքերի վրա... այն բանից հետո, երբ ինքը (պետությունը) իր վարքագիծով պետք է համարվի լռությամբ համաձայնված, որոշակի պայմանագիրը մնա ուժի մեջ... կամ համարվի վավեր: Այլ կերպ ասած, պետության լռությունը նրան զրկում է պայմանագիրը հետագայում վիճարկելու հնարավորությունից: Որոշակի չհայտնվելն նման իրավիճակում, Հայաստանի Հանրապետությունը, առանց հետագա հաղորդումների, պետք է պաշտպանվեր հայտարարի Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերի անվավեր հիմքերի մասին, ինչպես նաեւ այն մասին, որ պատասխանում է միջազգային ատյաններում վիճարկել այդ պայմանագրերը: ■

Ազգային ինքնության խնդիրներ

Գ էջից

հայերը աւելի առագ կորսնցուցած են իրենց մայրենին» (էջ 113-114): «Հեսաւորական է, որ Անտիոքի շրջանակի բոլոր հայերը իրենք զիրենք «Իսիոնա», «Իսիոնի», այսինքն՝ «Հիսոնենայ» կը կոչէին, իսկ իրենց հայերէնը՝ «Իսիոնուօ», «Իսիոնակ», այսինքն՝ «Հիսոնենայի լեզու» (էջ 115-116):

Դավանաբանություն-ազգային ինքնագիտակցություն փոխհարաբերություններն ուսումնասիրողների, մասնավորաբար սոցիալ-հոգեբանների եւ էթնոհոգեբանների համար հարուստ նյութ է մասակարում երկրորդ մասը, որի խորագիրն է «Լատին քարոզությունը եւ Գնիէի լատինացումը»: Արխիվային փաստաթղթերի հարուստ հիմքի վրա Ցոլակյանը գրում է Անտիոքի շրջանի հայության մեջ օտար միսիոներների քարոզության եւ հայությունը տարբեր հարանվանությունների միջեւ բաժանելու, Կնիքի ամբողջական լատինացման ընթացքի եւ շրջանի հայության հոգեւոր կարիքների նկատմամբ Սսի կաթողիկոսության եւ Երուսաղեմի ու Կ. Պոլսո պատրիարքությունների անտարբերության (ավելի շուտ՝ միայն պտղի հավաքելով հետաքրքրության) եւ Կնիքի ու Յակոբիի լատինացման դեմ Հայ եկեղեցուն հավատարիմ մնացածների անհաս բայց անհավասար պայքարի մասին: «Հայ եկեղեցին, իր անտարբերությամբ եւ ներքին հակամարտություններով, հայ ժողովուրդը օտարադաւանության մղելու ազդակներն մէկն էր մանաւանդ Անտիոքի շրջանին մէջ»,- գրում է հեղինակը (էջ 135. այս դատողությունը միտ է առհասարակ եւ մնում է ... այժմեական,- Գ. Յ.): Գրում բազմաթիվ վկայություններ կան այս անտարբերության մասին, որից էլ օգտվում են օտար, մասնավորաբար լատին հոգեորները: Նրանք ոչ միայն չեն վերցնում ժողովրդից, այլեւ զանազան «օժանդակություններ» են մատակարարում նրան, միաժամանակ վայելելով օտար պետությունների, մասնավորաբար Ֆրանսիայի եւ Իտալիայի դիվանագիտական ներկայացուցչությունների հզոր աջակցությունը (ՀՀ-ում այսօր վխտացող աղանդավորների նման): Սակայն, Հայ եկեղեցու պատմական դարաշրջանում կարող է բերել հակառակ արդյունքների, որի փոքրիկ օրինակն է Կնիքի գյուղը: Գյուղի իշխան եւ եռաստիճանական ու տնական կալվածների վերակացու Իբրահիմ Հաննի նկատմամբ հայ եկեղեցականների անարդարության հետեւանքով, վերջինս սկզբում խղճմտությունն է ընդունում, այնուհետեւ դառնում է լատին եւ մահանում է որոնս այդտիսին: Նա հետ լատին են դառնում գյուղի վերջին հայ առաքելականները (էջ 144-145): Հայ եկեղեցականների ընկերացության նույնիսկ պատճառով լատին է դառնում նաեւ Յակոբիի երեւելիներից Իբրահիմ Մուսան՝ իր ընտանիքով (էջ 168-176): Լատինացումը ուներ եւս մեկ խթան՝ «ոմանք օտար եկեղեցու հովանիին տակ մտնելով՝ իրոպէս պատսպանուած կը զգային» (էջ 147): 1909 եւ 1915 թթ. հայկական ջարդից Յակոբիի ու Կնիքի զերեզմանը լատին փաստեաները վերագրում էին իրենց հզոր ազդեցությանը եւ դրանով նոանոր հայ առաքելականների էին իրենց թակարը գցում: Մեկ այլ խթան էլ հանդնիանուր անգրագիտությունն էր եւ օտար միսիոներների՝ կրթական գործի կազմակերպումը: Եվ միայն 20-րդ դարու սկզբին, մնորիվ Հայոց միացյալ ընկերության, արդա Հայկական բարեգործական ընդհանուր միության՝ Անտիոքի շրջանի հայկական բնակավայրերում սկսում են երեւան գալ փոքր-օտա դրոցի նմանվող կրթական հաստատություններ:

Երրորդ գլուխը (էջ 157-201) խորագրված է «Ռուզի հայերը Մեծ Եղեռնէն եսէ» եւ բաղկացած է ութը բաժիններից, որոնցում ներկայացվում են Անտիոքի շրջանի վարչական եւ թեմական փոփոխությունները, Ռուզի հուշիչն ծնացորդաշնչ պատկերը, Յակոբիի գյուղի դասական տաղնաղը եկեղեցադասական կալվածների յուրացման փորձերի դեմ, Յակոբիի գյուղի հայ համայնքի լատինացման վտանգի վերացումը, Կնիքի գյուղի բարգավաճումը Ֆրանսիական մանդատային իշխանությունների բարեհայս աջակցությամբ, հայ առաքելական եւ լատին համայնքների կենցաղային տարբերությունները, նոանց տոները, հարսանեկան եւ մահվան ծեսերը, Յակոբիի ս. Սննա հոչակաւոր ուխտավայրը, Յակոբիի Ազգային վերածնունդ վարժարանը եւ կրթական գործը այս ու հարեւան Կնիքի գյուղում:

Այս գլխում Ցոլակյանը կասկում է արժեքավոր դիտարկումներ: Այսպես, նա իրավացի է, երբ գրում է, թե «հայ լատին» ընթանում չկար (եւ չկա առհասարակ,- Գ. Յ.)՝ ի հակադրություն «Հայ Աւետարանական» եւ «Հայ Կաթողիկէ» յարանուանությունների. ասոր բացարձակապէս թոյլատու չէին լատին հայերը: ... Ազգայնական ամէն նկրտում կ'արհամարհուէր, առաջ քաշելով այն գաղափարը, թէ լատինականութիւնը համազգայնութիւն է ...» (էջ 168): Մի խոսքով, Ցոլակյանի համար՝ վերազգայնությունը կամ համազգայնությունը հավասար է առազգայնացման եւ հայությունից ուեացման, արդա եւ ձուլման: Փաստորեն, լատինացած հայազգիների մոտ նկատվում է երկու երեւույթ միաժամանակ՝ էքսիկական երկակածություն (հայ-առաք՝ լեզվական հենքի վրա) եւ Անդեռտնի «երեւակայական հանրույթ» (երբ քրիստոնեական ընդհանրության հիման վրա ազգությունը փոխարինվում է քրիստոնեական վերազգային-արազգային հանրույթով): Հունադավան դարձած հայազգիների համար առկա է նույնիսկ էքսիկական եռակածության երեւույթ (հայ-առաք-հույն):

Յակոբիի (մասի) եւ Գնիէ գյուղերի համայնապատկերը:

Ս. Սասոյածածնի վերափոխման տոնախմբությունը Գնիէի լատինաց վանքի բակում:

«Դաւանանշային պատկանելիութեան հաւասարեցումը ազգային պատկանելութեանը՝ թէ նոյնինքն գիտաղիներու եւ թէ շրջակայքի բնակիչներուն համար կը շարունակուի առ այսօր»,- նկատել է տալիս հեղինակը (էջ 187): Մեր կողմից ավելացնենք, որ հայկական որոշ տարածքներում այսօր եւս նկատվում են համանման երեւույթներ, երբ Հայ եկեղեցու անդամ չեղող հային որակում են կամ այդ հայն է իրեն որակում «հոռոմ», «ֆրանկ», «կաթոլիկ», «փրոթեսան» (բողոքական՝ ավետարանական իմաստով) եւ այլն, բայց երբեմ՝ «հայ»: Էքսիկական երկակածության ակնառու դրսեւորումը երկակի անուն-ազգանունների առկայությունն է հատկապես Յակոբիեի հայ առաքելականների մոտ: Նրանք ունեն թե՛ հայերեն եւ թե՛ արաբերեն անուն-ազգանուններ, որոնք գործածվում են համապատասխան էքսիկ միջավայրում. հայկական միջավայրում՝ հայկականը (օրինակ՝ Աբրահամ Երեցյան), արաբական միջավայրում (նեռապալ պետական տոմարներում)՝ արաբականը (նույն անձը՝ Իբրահիմ Կասսիս), իսկ տարաբնակարերի մեծագույն մասը կրում է երկու անունները միաժամանակ: Նույնպես մեծամասամբ երկլեզու են տարբեր վիճակագրությունները: Լատին եւ հայ առաքելական համայնքների միջեւ փոխամուսնությունը սկզբնական շրջանում ոչ միայն չէր հաջալեւվում, այլեւ ընկալվում էր ... սուգի համարժեք մի բան: Վերջին տասնամյակներին այս երեւույթը սկսում է հակառակ ընթացք ունենալ: Կորցնելով ֆրանսիական հովանավորությունը եւ փաստորեն թուլանալով, լատինացած հայերը փորձում են մոտենալ հայկական արմատներին ավելի մոտիկ կանգնած զանգվածին, սակայն ընդհանրապես արժանանում են անտեսման կամ արհամարհանքի: Լատինների մոտ առկա է ազգային ինքնության լուրջ տագնաք՝ «ինչ է ինքի իր ազգութեանը՝ արա՞ թէ հայ...» (էջ 200): Այս տագնապի մասին լատին հայազգի հոգեւոր հայր Պասկալ Ցամիչյանը ասում է. «Կնիեցիք ո՛չ լատին են, ո՛չ հայ» (էջ 201): Այդուհանդերձ, լատիններից ոմանք «իրենց զաւակները հայոց վարժարանը կ'ուղարկեն, հայերէն սորվիլ կը պահանջեն», հայախօս եւ հայկական ավանդութիւններին լավատեղեակ ու դրանք կիրառող հարուներ են ուզում ունենալ: Ոմանք մասնակցում են նույնիսկ Տրնդեզի խառնկնների ծեսերին (սա արդեն ավելի խոր առմաներ ունի եւ գալիս է հայոց հեթանոսական անցյալից): Մի խոսքով՝ իսկական լաբիրինթոս...

«Հավելված»-ում (էջ 203-216) առաջին անգամ հրատարակվում է արխիվային շատ կարեւոր մի փաստաթուղթ՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ եւ Անտիոքի շրջանի հոգեւոր տեսուչ Մովսես վրդ. Ոսկերիչյանի կազմած «Լազրեթէի եւ Միսիրի Առաջնորդարանի վիճակաց հայ գիւղերուն ընդհ. ցուցակը -1911» ցուցակից Յակոբիի, Արֆալի, Յամանի եւ Կոյի գյուղերի բնակչության ցանկը: Նրանում անուն առ անուն ներկայացված են յուրաքանչյուր ընտանիքի անդամների անունները ու տարիքը:

Կա եւս քարտեզների հավելված: Տպագրվել է երկու քարտեզ, որոնցում ներկայացված են Անտիոքի շրջանի, ինչպես նաեւ նրա մասը կազմող Ռուզի հովիտի բնակավայրերը՝ համապատասխան նշումներով:

Հաջորդում են Յակոբիեի եւ Կնիքի գյուղերին առնչվող լուսանկարները (էջ 221- 246), որոնց մեծագույն մասը հրատարակվում է առաջին անգամ: Լուսանկարների գեղեցիկ մասը վերաբերում է 19-րդ դարի վերջից 20-րդ դարի կեսն ընկած ժամանակահատվածին: Նրանք կարեւոր տեղեկություններ են պարունակում շրջանի հայության տարազի, հավատալիքների, սովորույթների, ճարտարապետության եւ ազգագրական այլ դրսեւորումների մասին:

Հատորն ավարտվում է օգտագործված գրականության ցանկով (էջ 247-257) եւ հեղինակի կենսագրությամբ (էջ 259):

Հեղինակի օգտագործած արխիվային բոլոր նյութերը այս հատորով առաջին անգամ են մտնում շրջանառության մեջ: Դրանցից հատկապես նորություն են հայեցի ֆրանցիսկյանների Թեռա Սանթա առաքելության արխիվը, լատինացած Իբրահիմ Հաննի որդի՝ Ռեյս Հաննա Շեյխի «Ճըսըր Շուղուր գաւառի Գնիէ գիւղի պատմութիւնը» եւ լատինացած հայ առաքելական խահանա, կարինցի տեր Մեսրոպ Նազլյանի թոռ Իսկենդեր Տեր-Մեսրոպի «Տոհմագրութիւն Տէր Մեսրոպ խահանայ Նազլեանի գեղջասանին» առաքերեն ձեռագիր ավանդությունները: Օգտագործվել են օտարալեզու (արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն եւ իտալերեն) բազմաթիվ գրքեր, որոնցից առաքերենների մեծ մասը առաջին անգամ է ծանոթացվում հայ ընթերցողին: Դրանցից հատկապես կարեւոր են միջնադարի արաբ մաքր ժամանակագիրների վկայությունները: Լայնորեն ընդգրկվել են նաեւ հայալեզու պարբերական մամուլում լույս տեսած հոդվածները, տարբեր տեղեկագիրներ եւ այլն: Մեծ գնահատանքի արժանի է հեղինակի՝ տվյալ բնակավայրերում կատարած դաշտային ազգագրական աշխատանքների լայն օգտագործումը:

Գրքին գիտական արժեքը անուրանալի է, իսկ ճանաչողական արժեքը՝ անչափելի: Մեզ է ներկայացվում հայության մի հատված, որը սփյուռքի «դասական» ընթանումից ունի որոշակի տարբերություններ, սակայն պահպանում է ինչ-ինչ կապեր եւ հիշողություններ իր ազգի հետ:

Գրքի մեծագույն թերությունը ... վերջաբանի բացակայությունն է: Ատենախոսությունն ուներ մի հոյակապ վերջաբան, որ հեղինակը առաջարկում էր որոշակի ծրագիր՝ իրենց ազգային ծագման հիշողությունը պահպանած երեք հավատականությունների ամբողջական վերահայացման վերաբերյալ: Այստեղ իր դերը կատարել է հեղինակի ... ինքնագովազդությունը, քանի որ ատենախոսության վերջաբանում Հակոբ Ցոլակյանը մերժում էր հատկապես սփյուռքում տարածված «Ով Հայ առաքելական եկեղեցու անդամ չէ, հայ չէ»՝ մեր կարծիքով ազգավնաս, անիմաստ ու սխալ կարգախոսը: Չի կարելի եկեղեցական շահերը գերադասել ազգային շահերին, այլ պետք է անել ընդհակառակը: Նման մտածելակերպն ու գործելակերպը, մեծ վնաս պատճառելով հայությանը, միեւնույն ժամանակ վնաս է հասցնում, առաջին հերթին, նույնինքն Հայ առաքելական եկեղեցուն: Ատենախոսության «Վերջաբան»-ում Ցոլակյանը առաջարկում էր, որ նույնինքն Հայ եկեղեցին նախաձեռնի իրենից հեռացած հայ հավատակնություններին ազգի գիրկը վերադարձնելու գործընթացը՝ խելամիտ եւ ճկուն մոտեցումների համալիրի իրականացման միջոցով:

Գրքում կան մտերի մի քանի տարիմաստություններ: Օրինակ, Ավետարանի 1466 թվականի մի հիշատակարանի հիման վրա Հ. Ցոլակյանը գրում է. "«Վերջին լիշատակարանը ենթադրել կու տայ, որ (Առաջ գյուղի,- Գ. Յ.) Ս. Աստուածածին" վանքը թերեւս նախկին Լատրիկէի եպիսկոպոսութեան նստավայրն էր» (էջ 74): Սակայն, մի քանի էջ հետո, նույն հիշատակարանի եւ 19-րդ դարի սկիզբը այս վանքում Գրիգոր անունով մի վարդապետի արդեն հաստատում է, «որ Առաջնորդ եղած է Լաթաքիոյ շրջանի հայոց հոգեւոր կեդրոնը՝ շրջանի Առաջնորդ նստավայրը, գէթ մինչեւ 19-րդ դարու սկիզբը» (էջ 87): Մեր կարծիքով, ենթադրությունից հաստատմանն անցնելու համար ընդամենը երկու վկայությունը բավարար չէ եւ հարկավոր են ավելի շատ եւ հանոգիչ հիմքեր: Համաձայն չենք հեղինակի այն մտքի հետ, թե այսօր շուրջ 60 հազար հավատացյալ սիրիահայության մեջ ընդամենը 1000 հոգիով (մի մասն էլ արաբախոս եղկամ այլադավան) մասնակցող Լաթաքիան «այժմ՝ սուրիահայ գաղութի կարեւոր կեդրոններէն մէկն է» (էջ 86): Մեծ վերապահությամբ բացառելով Քեսաբը, հեղինակի այս միտքը ճիշտ չէ ընդհանրապես սիրիական նովափի բնակավայրերում ցրված հայության համար: Թերությունների շարքում են մասնագիտական հղումներում երբեմն հանդիպող բացթողումները կամ ոչ միարժեք նկարագրությունները:

Այս ոչ էական թերությունները չեն նսեմացնում կատարված աշխատանքի բարձր որակն ու գիտական նշանակությունը:

Հակոբ Ցոլակյանի «Անտիոքի մերձակա Ռուզի հովիտի հայերը (Պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)» հատորը նշանակալի նեղում է հայ ազգագրության մեջ եւ անհատնում հետաքրքիր հայկական ազգային հոգեբանության, մասնավորաբար էքսոլեզվահոգեբանության եւ էթնոդավանահոգեբանության ուսումնասիրողների համար:

Երանի թե հեղինակը կամ այլ հետազոտողներ հետագայում մեզ ներկայացնեն Բեյլանի եւ Առաջ-Ղնեմիթի հայության վերաբերյալ համանման պատմագիտական աշխատություններ, մի անհրաժեշտություն, որը հեղինակը նշում է գրքում մի քանի անգամ: Դրանով էլ ավելի կհարստանան մեր ազգագրական գիտությունն ու հայ ժողովրդի տարբեր հատվածների մեր ճանաչողությունը:

■

Դատական բարեփոխումնե՞ր, թե՞ պերմանենտ իրականացվող գիտափորձեր. դատական համակարգի արդյունավետության բարձրացո՞ւմ, թե՞ իմիտացիա

Պրոցեսանդան խոսանում է դրախտ, իսկ իրական արդյունքը կերեւա հերթական գիտափորձից հետո

Հայտնի է, որ եթե որեւէ համակարգ ցանկանում են կազմալուծել, ապա այդ համակարգը պահում են մշտնջենն բարեփոխումների մեջ, առավել եւս, եթե նշվածներն իրականացվում են վարկային ռեսուրսների հաշվին:

Եվրոխորհրդի պահանջները՝ արդարադատության խորհրդի անկախությունը ներկայումս իրականացվում է դատական համակարգի կազմալուծմամբ, սակայն համակարգը կազմալուծողներն իրենց գործողություններն անվանում են դատական համակարգում իրականացվող բարեփոխումների 2-րդ փուլ:

«Հայլուր»-ով ցուցադրված հաղորդումների ժամանակ վճռաբեկ դատարանի նախագահ Հ. Մանուկյանն ու դատական դեպարտամենտի ղեկավար Ա. Մկրտչյանը գովաբանում էին ներկայումս իրականացվող դատաիրավական բարեփոխումների 2-րդ փուլը եւ 2007 թվականի մայիսի 18-ից ուժի մեջ մտած ՀՀ դատական օրենսգիրքը համարում դատաիրավական բարեփոխումների 2-րդ փուլի կարեւորագույն փաստաթուղթ, իսկ նշված օրենսգրքի հիման վրա ստեղծված եւ 2008 թվականի հունվարի 1-ից գործող դատարանները՝ կայացած եւ ավարտելու պատրաստ կառույցներ:

Ներկայումս իրականացվող դատաիրավական բարեփոխումների եւ ՀՀ դատական օրենսգրքի վերաբերյալ մամուլում տպագրված «2007 թվականի մայիսի 18-ից Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանություն գոյություն չունի, Հայաստանի Հանրապետությունում գործում է արտակարգ դատարան» («Ազգ», 20 սեպտեմբերի 2007թ.) եւ «ՀՀ Դատական օրենսգրքի մեկնաբանություն, վճռաբեկ դատարան» («Ազգ», 11 հոկտեմբերի 2007թ.) հոդվածներում ներկայացված հիմնավորումները էապես տարբերվում են վճռաբեկ դատարանի եւ դատական դեպարտամենտի ղեկավարի արտահայտած տեսակետներից եւ վերաբերում են դատաիրավական բարեփոխումների բացասական հետեւանքներին, ընդ որում՝ հոդվածներում կատարված հետեւությունները նշված անձիք մինչ օրս չեն հերքել (չեն կարող հերքել):

«2007 թվականի մայիսի 18-ից Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանություն գոյություն չունի, Հայաստանի Հանրապետությունում գործում է արտակարգ դատարան» հոդվածում առաջադրել եմ, որ Հայաստանի Հանրապետությունը 18.05.2007թ.-01.01.2008թ. ժամանակահատվածում զրկված է եղել դատական իշխանությունից, եւ նշված ժամանակահատվածում դատարանների (առաջին, տնտեսական, վերաքննիչ վճռաբեկ) կայացրած բոլոր դատական ակտերը (վճիռներ, դատավճիռներ, որոշումներ) պետք է համարվեն առօրեական՝ կայացված օրենսդրությամբ գոյություն չունեցող (արտակարգ) դատարանների կողմից:

«ՀՀ Դատական օրենսգրքի մեկնաբանություն, վճռաբեկ դատարան» հոդվածում՝ հիմք ընդունելով ՀՀ դատական օրենսգրքով ամրագրված դրույթները, առաջադրել եմ, որ դատական բարեփոխումների 2-րդ փուլը կրում է անձնավորված բնույթ, այն իրականացվում է կոնկրետ անձի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայիս նախագահ Հովհաննես Մանուկյանի համար դատական համակարգում անսահմանափակ իշխանություն ապահովելու նպատակով:

Վճռաբեկ դատարանի նախագահն իրավունք ունի ՀՀ դատական օրենսգրքի համարելու 2-րդ փուլի բարեփոխումների կարեւորագույն փաստաթուղթ, որովհետեւ ՀՀ դատական օրենսգրքով ամրագրված դրույթների ուսումնասիրությունից պարզվում է, որ դատական համակարգը հանելով արդարադատության նախարարության (նախարարի) ենթակայությունից (բացառությամբ առաջին ատյանի դատարանների դատավորների ու նախագահների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքից), այն ամբողջությամբ հանձնվել է գերիշխանություններով օժտված վճռաբեկ դատարանի նախագահի միանձնյա ղեկավարմանը՝ բացի ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի պաշտոնը զբաղեցնելու եւ միանձնյա որոշումներ ընդունելու իրեն տրված լիազորություններից, որոնց վերաբերյալ մանրամասն հիմնավորումները ներկայացրել եմ վերն արդեն հիշատակված հոդվածում, վճռաբեկ դատարանի նախագահն իրականացնում է վճռաբեկ դատարանի պալատի նախագահին եւ դատավորին օրենքով վերապահված բոլոր լիազորությունները, արդարադատություն է վճռաբեկ դատարանի բնականոն գործունեությունը, հրավիրում եւ վարում է վճռաբեկ դատարանի նիստերը, «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակման է ուղարկում վճռաբեկ դատարանի որոշումները, վճռաբեկ դատարանի դատավորներին օրենքով սահմանված կարգով տրամադրում է արձակուրդ, վերահսկում է վճռաբեկ դատարանի աշխատակազմի գործունեությունը, ներկայացնում է վճռաբեկ դատարանն այլ մարմինների հետ հարաբերություններում, օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով կարգապահական վարույթ է հարուցում վճռաբեկ դատարանի պալատի նախագահի կամ պալատի դատավորի նկատմամբ, վարում է Արդարադատության խորհրդի նիստերը. (հոդված 61, 107), նախագահում է դատավորների ընդհանուր ժողովում (հոդված 71) եւ դատարանների նախագահների խորհրդի նախագահն է (հոդված 73), կարգապահական վարույթ է հարուցում վճռաբեկ դատարանի պալատի դատավորների եւ պալատի նախագահի նկատմամբ (հոդված 155), դատարանների նախագահների խորհրդի հատատվանն է ներկայացնում դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնում նշանակվող անձին (հոդված 72), եւ նշված լիազորությունները վերջնական չեն, եթե հաշվի առնենք նաեւ այն կառույցներին տրված իրավունքները, որոնք գլխավորում կամ որոնց ղեկավարները նշանակվում են վճռաբեկ դատարանի կողմից կամ միջնորդությամբ:

Բնական է, որ վճռաբեկ դատարանի նախագահ Հ. Մանուկյանն իրեն նշված լիազորություններով օժտած ՀՀ դատական օրենսգիրքը մեծ հաճույքով կանվանի դատական բարեփոխումների 2-րդ փուլի լավագույն փաստաթուղթ:

Այժմ անդրադառնանք դատաիրավական համակարգում նախկինում իրականացված եւ ներկայումս իրականացվող բարեփոխումներին:

Ի տարբերություն մինչ 1995 թվականը գործող երկատիճան դատական համակարգի, 1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված էր բոլորովին նոր եռատիճան դատական համակարգի ձեւավորում:

1995 թվականին ՀՀ Սահմանադրությունն ընդունելուց հետո՝ եռատիճան դատական համակարգին անցնելու դատաիրավական բարեփոխումները կատարվեցին ավելի քան 3 տարվա՝ 1995-1998թթ. ժամանակահատվածում, ընդ որում՝ համակարգի ձեւավորման ընթացքում, մինչեւ համադասական օրենսդրական ակտերի ընդունումը, մամուլում բանավեճեր էին ընթանում իրավաբան գիտնականների միջեւ: Քննարկվում էր դատաիրավական համակարգի ճակատագիրն ու զարգացման ուղիները:

Նշված ժամանակահատվածն օգտագործվեց նաեւ դատաիրավական բարեփոխումների իրավական դաշտի ձեւավորման ուղղված օրենսդրական ակտերի ընդունման համար: Ընդունվեցին «Արդարադատության խորհրդի մասին» (23.10.1995թ.), «Դատական ակտերի հարկադիր կատարման ապահովող ծառայության մասին» (05.05.1998թ.), «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» (05.05.1998թ.), «Դատավորի կարգավիճակի մասին» (17.06.1998թ.), «Դատարանակազմության մասին» (18.06.1998թ.), ՀՀ օրենքները, ՀՀ հաղթահատական (05.05.1998թ.), ՀՀ ՀՀ հաղթահատական դատավարության (17.06.1998թ.) եւ ՀՀ քրեական դատավարության (01.07.1998թ.) օրենսգրքերը:

Վերը հիշատակված նորմատիվ իրավական դաշտի ձեւավորումից հետո միայն դատական համակարգում կատարվեցին դատավորների նշանակումները:

11.09.2001 թվականին ստեղծվեց տնտեսական դատարանը եւ լուծարվեց տնտեսական վերաքննիչ դատարանը:

Տնտեսական վերաքննիչ դատարանից առաջին ատյանի կարգով գործեր քննող տնտեսական դատարանին անցման հիմնավորումներից մեկն էլ այն էր, որ տնտեսական գործերը պահանջում են հատուկ ունակություններ եւ այդ գործեր քննող դատավորները պետք է տիրապետեն նաեւ տնտեսագիտական գիտելիքների, որոնք հատուկ չեն այլ դատարանների դատավորներին, մի խոսքով՝ տնտեսական գործերն էապես տարբերվում են քաղաքացիական գործերից:

Նաեւ պատճառաբանվեց, որ տնտեսական գործերը պահանջում են գործերի արագ քննություն, որը հնարավոր չէ իրականացնել ընդհանուր իրավասության դատարաններում:

Տնտեսական դատարանում գործ ունեցած անձն անձ կարող է վկայել, որ գործերը մեկ ամսվա ընթացքում քննելու եւ վճիռ կայացնելու վերաբերյալ ներկայացված հիմնավորումներն այդպես էլ իրականություն չդարձան, որովհետեւ տվյալ դատարանում վկայակոչում էին դատավարական օրենսգրքում տեղ գտած «որպես կանոն» արտահայտությունը եւ պնդում, որ տվյալ գործը կանոնից դուրս է: Եվ այդպես ամեն գործով:

Ի դեմ, երբ 1998 թվականին իրականացվում էր դատաիրավական համակարգի բարեփոխումը, տնտեսվարող սուբյեկտների միջեւ ծագած վեճերը քննում էր ՀՀ արբիտրաժը՝ որպես մասնագիտացված դատարան, որը լուծարվեց ՀՀ տնտեսական գործերով վերաքննիչ դատարան ստեղծելու կապակցությամբ: Իսկ ՀՀ տնտեսական դատարանն էլ քայլ առ քայլ, աստիճանաբար, իր գործառույթներով հասարժեք դարձավ նույն արբիտրաժին, որի փոխարեն ստեղծվել էր: Եվ որեւէ մեկը այդ տրանսֆորմացիայի ժամանակ հարցադրում չարեց՝ այդ դեպքում ինչո՞ւ լուծարեցին պետական արբիտրաժը, այն դեպքում, երբ նմանատիպ կառույցն առ այսօր հաջողությամբ գործում է իր օրենսդրությամբ ՀՀ-ին բավականին մոտ հարեւան Ռուսաստանի Դաշնությունում:

2005 թվականին ընդունված Սահմանադրության փոփոխություններում ամրագրվեց արդարադատության խորհրդի ձեւավորումը՝ կազմված բացառապես դատավորներից եւ ՀՀ Նախագահի ու Ազգային ժողովի կողմից նշանակված իրավաբան գիտնականներից, բացառվեց դատախազների եւ գործադիր իշխանության ներկայացուցիչների մասնակցությունն արդարադատության խորհրդի աշխատանքներում, իսկ վճռաբեկ դատարանի հատար՝ որպես հիմնական խնդիր, ամրագրվեց օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու ձեւակերպումը:

1995 թվականին ընդունված Սահմանադրության եւ 2005 թվականի Սահմանադրական փոփոխություններով դատական իշխանությունը նվիրված բաժինների համադրումից հետեւում է, որ Սահմանադրական փոփոխություններով, բացի վերը նշված փոփոխություններից, այլ էական փոփոխություններ, որոնք կբերեին համակարգային փոփոխությունների՝ չեն կատարվել, ընդ որում՝ նման պարտավորության պահանջ չի ներկայացել նաեւ եվրոխորհուրդը:

Ներկայումս իրականացվող դատաիրավական բարեփոխումների մասին սկսեցին խոսել 2005 թվականի Սահմանադրական փոփոխություններից հետո, երբ Սահմանադրությունը վճռաբեկ դատարանի համար ամրագրեց օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու խնդիրը, որն ըստ դատաիրավական համակարգում բարեփոխումներ իրականացնողների՝ դատական նախադեպն է:

Սահմանադրական փոփոխությունները հիմք ընդունելով՝ դատաիրավական բարեփոխումներ իրականացնողները որոշեցին, որ պահանջվում է իրականացնել դատական համակարգի վերակազմակերպում, այսինքն՝ ստեղծել նոր դատարաններ եւ լուծարել գործողները, իսկ վճռաբեկ դատարանի՝ Սահմանադրությամբ ամրագրված խնդրին ավելացրեցին նաեւ իրավունքի զարգացման խնդիրը, որը ՀՀ դատական օրենսգրքով արդեն գերակա դարձավ Սահմանադրական խնդրից, եւ ներկայումս՝ եթե վճռաբեկ բողոքը չի նպաստում իրավունքի զարգացմանը, ապա վճռաբեկ դատարանը չի զբաղվում իրավունքի միատեսակ կիրառության խնդրով:

Փաստորեն՝ վճռաբեկ բողոք ներկայացնողների վրա դրվեց նաեւ իրավունքի զարգացնելու խնդիրը, որն ամենից հիշ էր հետաքրքրում օրենքի միատեսակ կիրառության խնդրով վճռաբեկ բողոք ներկայացնողներին:

Դիտարկենք, թե Սահմանադրությունը վկայակոչելով՝ ներկայումս ինչ իրավական եւ համակարգային փոփոխություններ են կատարվել դատական համակարգում եւնկ ինչ հետեւանքներ է ունենալու ուժը կորցրած ճանաչված «Դատարանակազմության մասին», «Դատավորի կարգավիճակի մասին», «Արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենքների հիման վրա կազմված, պրոցեսանդայի միջոցներով փառաբանված եւ 2007 թվականի մայիսի 18-ից ուժի մեջ մտած ՀՀ դատական օրենսգրքի կիրառումը:

Ցունենալով լայնամասշտաբ փոփոխություններ կատարելու իրավական հիմք «բարեփոխիչները» իրականացնում են նոր դատական համակարգի կառուցում եւ չեղեալ հայտարարելով Սահմանադրությամբ նախատեսված եռատիճան դատական համակարգում, ըստ էության կառուցում են երկատիճան դատական համակարգ՝ արհեստականորեն նույն ֆունկցիաներով (գործառույթներով) օժտելով վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանները, իսկ վճռաբեկ դատարանի առջեւ՝ սահմանափակելով արդարադատություն իրականացնելու Սահմանադրական պարտականությունը, դրել են իրավունքի զարգացման խնդիր, որը Սահմանադրությամբ սահմանված չէ:

ՀՀ դատական օրենսգրքից հետեւում է, որ վճռաբեկ դատարանը պետք է կենտրոնանա եւ իր բոլոր ջանքերը նեղքի բացառապես իրավունքի զարգացման ուղղությամբ եւ երբեմն էլ արդարադատություն իրականացնի այն գործերով, որոնցով բողոք բերողը կարգացուցի դատական սխալի հետեւանքով ծանր հետեւանքների առաջացումը:

Այս դեպքում հարց է առաջանում. եթե բողոք բերողը հիմնավորում է դատական սխալի առկայությունը, իսկ վճռաբեկ դատարանը բողոք բերողի առջեւ լրացուցիչ պահանջ է դնում հիմնավորելու իրավունքի զարգացմանը նպաստելու կամ ծանր հետեւանքներ հիմնավորելու առումով, ապա արդո՞ք առաջ չի գալիս վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառություն ապահովելու, Սահմանադրությամբ իր առջեւ դրված առաքելությունից խուսափելու ուղղակի դեպք եւ արդարադատություն իրականացնելուց խուսափելու փաստ, որը ողջունելի չէ:

Ինչպես արդեն նշեցինք, դատաիրավական առաջին բարեփոխումները կատարելու ժամանակ առաջնային համարվեց իրավական դաշտի ձեւավորումը, եւ եթե այդ տեսանկյունից ուսումնասիրենք ներկայումս իրականացվող բարեփոխումները, ապա ակնհայտ է, որ այդ հարցը մղված է երկրորդ պլան, ինչի որ դատաիրավական առաջին բարեփոխումների ընթացքում ընդունված օրենքների եւ դրանց միավորման արդյունքում ՀՀ դատական օրենսգիրք վերանվանված օրենքի ծավալի աճի բաժինը նվիրված է ոչ թե իրավական դաշտի ձեւավորմանը, այլ նվիրված է դատավորների նշանակման, տեղափոխման, կրճատման եւ նմանատիպ հարցերի կարգավորմանը, որը լուրջ մտածելու տեղիք է տալիս:

ՀՀ դատական օրենսգրքի պահանջների համաձայն, 2008 թ. հունվարի 1-ից գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ (դրանք մինչ բարեփոխումները գործող առաջին ատյանի դատարաններն են), մասնագիտացված առաջին ատյանի դատարաններ՝ քրեական եւ հաղթահատական՝ երեւանի, Գյումրիի եւ Վանաձորի՝ լուսահանչյուրում երկուական:

Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները քննելու են այն գործերը, որոնք չեն քննելու մասնագիտացված քրեական եւ հաղթահատական դատարանները, ինչպես նաեւ վարչական դատարանը:

Շարունակությունը էջ 5

Դատական բարեփոխումնե՞ր, թե՞...

է էջից

Մասնագիտացված հաղթաթղթական առաջին ատյանի դատարանները ենթելու են նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարով հաղթաթղթական գործերը, ընդ որում՝ չի տարանջատված ֆիզիկական անձանց եւ ձեռնարկատերերի՝ տնտեսավարող սուբյեկտների միջեւ ենթվող գործերը, իսկ մասնագիտացված իրական դատարանները՝ ծանր եւ առանձնաթես ծանր իրական գործերը (ավելի մանրամասը կներկայացնեմ մեկ այլ հոդվածով):

Այդ դեպքում տեղին չէ մասնագիտացված անվանումը, հանի որ փաստաբանել կարելի է, երբ մտածում ես, որ, եթե այդ կատեգորիայի գործ չունես, ապա քո գործը պետք է ենթեն ոչ մասնագիտացված դատավորները: Այս դեպքում տանք մյուս հարցը. ինչ գործ ունեն ոչ մասնագետ դատավորները դատական համակարգում:

Տվել են արդյոք այս դատարանների ստեղծման հիմնավորումները եւ եթե տվել են ապա ո՞ւմ՝ հանրաքվեության նախագահի՞ն, կառավարությա՞ն, թե ժողովրդի՞ն:

Նշված հարցադրումները, կարծում եմ, այդպես էլ կմնան անպատասխան, որովհետեւ դատական համակարգին ամենամոտ առնչվող մարդիկ՝ դատավորներն ու փաստաբանները, եւս մակերեսային պատկերացում ունեն դրանց ստեղծման անհրաժեշտության եւ կիրառման նպատակահարմարության մասին, իսկ բազմիցս թանկարժեք հյուրանոցներում անցկացված սեմինարները կրել են ձեւական բնույթ, սակայն ոչ նյութական եւ ֆինանսական ծախսերի առումով:

Ի դեպ, ՀՀ դատական օրենսգրքի եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ 2008 թվականի հունվարի 1-ից քաղաքացիական դատարաններն են վարույթ ընդունելու եւ ենթելու պարտադիրին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումները, ինչպես նաեւ նշված դատարաններին են փոխանցվելու 2008 թվականի հունվարի 1-ից վերացված տնտեսական դատարանի՝ 2007 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տնտեսական դատարանի վարույթում գտնվող սնանկության գործերը, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քաղաքացիական դատարանները սնանկության գործեր չեն կարող լսել, եթե ղեկավարվեն գործող օրենսդրությամբ:

Նոր օրենսգրքի համաձայն՝ 2007 թվականի հունվարի 1-ից վերացել է ՀՀ տնտեսական դատարանը, որը գործում էր որպես մասնագիտացված դատարան:

Հասարակությունում եւ իրավաբանական հանրության կողմից միանշանակ գնահատական չունեցող արդարադատության այս մարմինը, որը նախկինում ղեկավարվել է վճռաբեկ դատարանի ներկայիս նախագահի կողմից, ըստ լուսավորիչներով եւ քաղաքացիության այլ խողովակներով տարվող քաղաքացիության, համարվում էր արդյունավետ գործող լավագույն դատարանը Հայաստանում, իսկ տվյալ դատարանում մշակված եւ Ազգային ժողովի կողմից ընդունված «Սնանկության մասին» ՀՀ օրենքը՝ լավագույն օրենքը Կովկասյան տարածաշրջանում («Սնանկության մասին» ՀՀ օրենքին կանդրադառնամ մեկ այլ հոդվածով եւ կպարզաբանեմ, թե ինչպես են այդ օրենքի վկայակոչմամբ տնտեսական դատարանի նախկին նախագահները զբաղվել անշարժ եւ շարժական գույքի վաճառքով՝ խոշոր չափի վնաս հասցնելով ՀՀ բյուջեին):

Հարց է առաջանում. ինչո՞ւ է լուծարվում արդյունավետ գործող եւ լավագույն համարում ունեցող տնտեսական դատարանը:

Մի՞թե պատճառը ԱՄՆ-ի իրավունքի մասին գիտի միայն ինքը՝ մագիստրոսը), տնտեսական դատարանի նախկին նախագահ, 2008 թվականի հունվարի 1-ից ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի նախագահ Էդուարդ Մուրադյանն է, որը սովորություն ունի անմիջական եւ գործուն մասնակցություն ունենալ իր գործատեղին առնչվող օրենսդրության մշակմանը (հիմակվա՝ չմոռանալով անձնական շահը), այնուհետեւ մի որոշ ժամանակ անց նույն ջանասիրությամբ քաղաքել այդ հիմնարկի ավելորդությունը, սկսել լուծարման եւ միաժամանակ համանման նոր հիմնարկի ստեղծման աշխատանքները:

Ի դեպ՝ ԱՄՆ իրավունքի մագիստրոսի անմիջական մասնակցությամբ ԱՄՆ-ի իրավունքի տեղեկատուներից թարգմանված «Արժեքների տուկայի մասին» ՀՀ օրենքը, որով տվյալ բնագավառում ներդրվել էր ամերիկյան մոդելը, ՀՀ Ազգային ժողովը 11.10.2007թ-ից ուժը կորցրած է ճանաչել եւ ընդունել է նույն անունով նոր օրենք, որի համաձայն՝ ոլորտը կարգավորող ամերիկյան մոդելից անցում կատարել եվրոպական մոդելին, հանի որ ամերիկյան մոդելը մեր իրավական համակարգում առաջացրել էր անլուծելի խնդիրներ, որոնք «կարող էր լուծել» միայն ԱՄՆ-ի իրավունքի մագիստրոսը:

Բարեփոխումների սկզբնական շրջանում, երբ տնտեսական դատարանի լուծարման մասին տեղեկությունները խոսակցական մակարդակի էին, ՀՀ վճռաբեկ դատարանի նորանշանակ նախագահը լուսավորության միջոցներից մեկին տված հարցազրույցում ասել էր, որ դա ընդամենը էքսպերիմենտ էր, իսկ իրականում տնտեսական եւ քաղաքացիական գործերի միջեւ որեւէ էական տարբերություն չկան:

Կրկին հանդիպում ենք քաղաքացիության (պրոպագանդայի) միջոցով ցանկալի արդյունքը վիրտուալ ցույց տալու հնարքին, որը կիրառվեց, որպեսզի տնտեսավարող սուբյեկտների միջեւ եղած վեճերը ենթող արբիտրաժի վերացումը որեւէ կերպ հիմնավորված չէր, հանի որ դրա լուծարումից հետո ստեղծվեց նույնատիպ կառույց՝ ուղղակի այլ անվանումով: Եվ գործերի ենթակայությունն էլ որոշվում էր ամբողջ աշխարհում (բացի ԱՄՆ-ից եւ Անգլիայից) ընդունված սկզբունքով՝ ըստ սուբյեկտների, այսինքն դիմող անձանց կարգավիճակի (ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ձեռնարկատեր):

Անպատասխան է նաեւ այն հարցը, թե ինչո՞ւ պետք է լինի միայն մեկ վերաքննիչ դատարան, որի նստավայրը Երեւանն է, եւ ինչո՞ւ



չեն եղած վեճերն առաջին ատյանի կարգով ենթվեն ոչ թե ընդհանուր իրավասության դատարաններում, այլ՝ տնտեսական անվանումը ստացած դատարանում, որն իրավունք ստացավ իրականացնելու նաեւ այդ գործերի վերաքննության կարգով ենթության իրավունքը:

Արդյոք նույն ճակատագիրը չի՞ սպասում վարչական դատարանին, երբ «բարեփոխիչները կհասկանան, որ վարչական եւ քաղաքացիական գործերի միջեւ էական տարբերություններ չկան եւ այդ գործերը տասնամյակներ շարունակ ենթվել են նույն դատարանում՝ պահպանելով դատավարական որոշ տարբերություններ»:

Արդեն իսկ ասվածի հիման վրա կարող ենք փաստել, որ տնտեսավարող սուբյեկտների միջեւ եղած վեճերը ենթող արբիտրաժի վերացումը որեւէ կերպ հիմնավորված չէր, հանի որ դրա լուծարումից հետո ստեղծվեց նույնատիպ կառույց՝ ուղղակի այլ անվանումով: Եվ գործերի ենթակայությունն էլ որոշվում էր ամբողջ աշխարհում (բացի ԱՄՆ-ից եւ Անգլիայից) ընդունված սկզբունքով՝ ըստ սուբյեկտների, այսինքն դիմող անձանց կարգավիճակի (ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ձեռնարկատեր):

Անպատասխան է նաեւ այն հարցը, թե ինչո՞ւ պետք է լինի միայն մեկ վերաքննիչ դատարան, որի նստավայրը Երեւանն է, եւ ինչո՞ւ

Դատական օրենսգիրքը մեզ տանում է նորից 1998թ. դրությամբ գործող համակարգին՝ տնտեսական գործերի առաջին ատյանի կարգով ենթությունը վերադարձնելով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններին: Ցնայած եւ հատակությունը որեւէ կերպ, համենայնդեպս մամուլով չի ստացել հիմնավորումներ այն մասին, որ դատարանակազմության նախկին համակարգը արդյունավետ չի եղել, իսկ նոր ստեղծելիքը արդյունավետ է լինելու:

Այս առումով ինչպես հասարակությունը, այնպես էլ դատավարական համակարգին ուղղակիորեն առնչվողները ուղղակի կանգնեցին փաստի առաջ, իսկ զավեշտալին այն է, որ նույնիսկ օրենքներն ընդունած ԱԺ-ի դատգամավորները չեն դատկերացնում թե ինչ օրենք են ընդունել եւ ինչ առպագա է սպասում հանրաքեության երրորդ իշխանությանը՝ դատական համակարգին:

Կարծում ենք, «արդյունավետություն» կատեգորիան պետք է լինի այն անկյունաքարը, որի շրջանակում պետք է նայել բարեփոխումներին:

Հակառակ դեպքում մենք կունենանք պերմանենտ բարեփոխումների վիճակ, երբ հարկատուների հաշվին իրականացնելով բարեփոխումներ, նույն այդ հարկատուներին զրկում են արդյունավետ դատաիրավական համակարգից օգտվելու եւ դատական պաշտպանություն ստանալու իրավունքից:

Հարց է առաջանում. արդյո՞ք դատաիրավական բարեփոխումների էությունը կայանում էր դրանում, թե դա հարմար պատրվակ էր բարեփոխումների անվան տակ այլ հարցեր եւս լուծելու համար, եւ արդյոք դա չէ՞ պատճառը, որ բարեփոխիչները ջանք ու եռանդ չեն խնայում գովազդելու նոր համակարգը եւ հանդոգելու մարդկանց, այդ թվում նաեւ հանրաքեության նախագահին, որ բարեփոխված համակարգը գործում է, չխոսելով այն մասին, որ հարցեր ընդունված, նեղին հակասություններ ունեցող, իսկ որոշ դեպքերում արդյունավետ դատավարական մեխանիզմները անավարտ օրենսգրքերով, անհնար է ունենալ արդյունավետ դատական համակարգ, թեկուզեւ արտաքուստ ձեւափոխված, որի համար անհրաժեշտ ծախսվել են տասնյակ միլիոնավոր դրամներ:

Ի դեպ, Եվրոխորհուրդն ընդամենը պահանջել էր արդարադատության խորհրդի անկախությունը, ինչպես նաեւ նախաքննության ընթացքում՝ մարդու իրավունքների պաշտպանությունը: Ընդամենը: ■

Բռնություն ղաբտողները կենդանության օրոք վախենում էին Դինքից

1-ին էջից

Ի դեմ, եթե վերոհիշյալ կուսակցությունները հակազդեցությամբ նախադրյալներ էին ստեղծում «Մենք բոլորս Օգյուն Սամասք ենք» մակագրությամբ ցուցադրասառների բարձրացման համար, ապա թուրք խառնամբոխը ինքնամոռաց բացականչություններով արտահայտում էր մարդասպանին նմանվելու անզուսպ մոլուցքը, որ գովերգի սպանությունը: Հատկանշական է, որ վերոհիշյալ կուսակցություններն առաջնորդվում են ֆեմալական ազգայնականությամբ, իսկ խառնամբոխին մարգարտեներ էին առաջնորդում ֆեմալական մտածողության միությունները:

«Մենք բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ Դինք» կարգախոսին հակազդելու դատրվակով, մարդասպան Սամասքին դատապարտելու խառար Բեքիր Աթալայն, ի դատախան հետաքննության հասցեին արված քննադատություններին, ասաց, որ անում են այն, ինչ հնարավոր է, որովհետև սպանության գործում չմնա ոչ մի մութ կետ, եւ հավատիացրեց. «Չի մնալու, որովհետեւ դրա բացահայտումը մեր «ճիշտ դատն է», սակայն բուն կազմակերպիչներն առ այսօր մնում են անհասանելի՝ վարչապետ Էրդողանի կառավարությանը:

«Ենի շաֆակ» հեղինակ, հանգուցյալ Հրանտ Դինքի մտերիմ ընկեր Ալի Բայրամօղլուի դիտարկ արտահայտությամբ. «Կորուստը մեծ է, ամոթը ահավոր, վայրագությունը՝ սարսափելի, հակառակ դրան, շարունակում են տեղում դուրս գալ սպանության բացահայտման աշխատանքները: Գուցե եւ կատարվում է ճիշտ հակառակը, որովհետեւ հետաքննությունը ընթացքում ի հայտ եկած որոշակի իրողությունները, երկրում կիրառվող դատաիրավական խաղաքաղաքականությունն ու դրա մեթոդները, ոչ այնքան հանգեցնում են բուն հանցագործների բացահայտմանը, որքան հանցագործության նոր ոլորտներ են ստեղծում: Բացահայտման ճանապարհին դեռ տակավին գաղտնիքի արգելքն է դրված»:

Հրանտ Դինքի տարելիցին բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպվել ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Երեկ Դինքի հիշատակին նվիրված լուսանկարչական ցուցահանդեսներ, կլոր սեղաններ եւ հանդիպումներ են կազմակերպվել Քյոլնում, Բեռլինում, Ֆրանկֆուրտում, ինչպես նաեւ Վաշինգտոնում, Օսլոյում, Լոնդոնում եւ այլ քաղաքներում:

Գլխավոր միջոցառումներն, ինչ խոսք, «Հունվարի 19-ին, ժամը 15-ին, նույն տեղում, հանուն արդարության» կարգախոսով «Ակոսի» խմբագրատան առջեւ կազմակերպել են Դինքի զինակիցները, դատարտելու համար ինչպես չարենգ սպանությունը, այնպես էլ սպանության դատաստան դարձած թուրքական օրենսգրքի չարաբաստիկ 301-րդ հոդվածը:

Արձագանքելով մեր հանգուցյալ հայրենակցի զինակիցների դեռեւս հունվարի 15-ին հրապարակած հաղորդագրությանը, որտեղ մասնավորապես ասվում է. «Ուղիղ մեկ տարի է անցել այն օրից, երբ մեզ դավադրաբար բաժանեցին ջերմ խառար Բեքիր Աթալայն, ի դատախան հետաքննության հասցեին արված քննադատություններին, ասաց, որ անում են այն, ինչ հնարավոր է, որովհետեւ սպանության գործում չմնա ոչ մի մութ կետ, եւ հավատիացրեց. «Չի մնալու, որովհետեւ դրա բացահայտումը մեր «ճիշտ դատն է», սակայն բուն կազմակերպիչներն առ այսօր մնում են անհասանելի՝ վարչապետ Էրդողանի կառավարությանը:

«Ենի շաֆակ» հեղինակ, հանգուցյալ Հրանտ Դինքի մտերիմ ընկեր Ալի Բայրամօղլուի դիտարկ արտահայտությամբ. «Կորուստը մեծ է, ամոթը ահավոր, վայրագությունը՝ սարսափելի, հակառակ դրան, շարունակում են տեղում դուրս գալ սպանության բացահայտման աշխատանքները: Գուցե եւ կատարվում է ճիշտ հակառակը, որովհետեւ հետաքննությունը ընթացքում ի հայտ եկած որոշակի իրողությունները, երկրում կիրառվող դատաիրավական խաղաքաղաքականությունն ու դրա մեթոդները, ոչ այնքան հանգեցնում են բուն հանցագործների բացահայտմանը, որքան հանցագործության նոր ոլորտներ են ստեղծում: Բացահայտման ճանապարհին դեռ տակավին գաղտնիքի արգելքն է դրված»:

Հրանտ Դինքի տարելիցին բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպվել ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Երեկ Դինքի հիշատակին նվիրված լուսանկարչական ցուցահանդեսներ, կլոր սեղաններ եւ հանդիպումներ են կազմակերպվել Քյոլնում, Բեռլինում, Ֆրանկֆուրտում, ինչպես նաեւ Վաշինգտոնում, Օսլոյում, Լոնդոնում եւ այլ քաղաքներում:

Գլխավոր միջոցառումներն, ինչ խոսք, «Հունվարի 19-ին, ժամը 15-ին, նույն տեղում, հանուն արդարության» կարգախոսով «Ակոսի» խմբագրատան առջեւ կազմակերպել են Դինքի զինակիցները, դատարտելու համար ինչպես չարենգ սպանությունը, այնպես էլ սպանության դատաստան դարձած թուրքական օրենսգրքի չարաբաստիկ 301-րդ հոդվածը:

Արձագանքելով մեր հանգուցյալ հայրենակցի զինակիցների դեռեւս հունվարի 15-ին հրապարակած հաղորդագրությանը, որտեղ մասնավորապես ասվում է. «Ուղիղ մեկ տարի է անցել այն օրից, երբ մեզ դավադրաբար բաժանեցին ջերմ

բարեկամ եւ ճշմարտության թարգման սիրելի Հրանտից: Նրա կորուստը սգալով անցավ ողջ տարին: Մենք՝ այս երկրի քաղաքացիներս, այլեւս չենք ուզում վախվորած աղավնու անհանգստությամբ ապրել այն սպանությունների սպեղում, որոնց բուն կազմակերպիչները չեն բացահայտվում», հասարակության լայն շրջանակներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել միջոցառումներին:

Նախքան «Ակոսի» խմբագրատան առջեւ բողոքի ցույց կազմակերպելը, միջոցառումների մասնակիցները, որոնց թվում եղել են արվեստի ու մշակույթի հանրահայտ գործիչներ, հայտնի գրողներ, լրագրողներ, մտավորականներ, ինչպես նաեւ հասարակայնության ներկայացուցիչներ, այցելել են Հրանտ Դինքի շիրմին: Երեկոյան միջոցառումները շարունակվել են «Լուսֆի Քըրդարի» անվան համագումարների պալատում, որը Ստամբուլի ամենաշքեղ համերգային համալիրն է: Այս միջոցառումներին ողջույնագրեր «Լուսավորիչ» «Սահակյան», «Սայաթ-Նովա» երգչախմբերի կողքին մասնակցել են նաեւ Բոսֆորի թատրոնն ու հայտնի արվեստագետներ, որոնցից թերեւս կարելի է առանձնացնել աշխարհահռչակ դաշնակահար Լեյլա Մանսուրին: Ինչ վերաբերում է Անկարային, ապա այնտեղ Դինքի համախոհները «Բիրգյուն» թերթի խմբագրության առջեւ սպանությունը դատապարտելուց հետո, բողոքի երթ են կազմակերպել դեռեւ մարդու իրավունքների հուշարձան, որտեղ հնչել են հայկական մեղեդիներ:

Թուրքիայում դեռեւս չեն բացահայտվում Հրանտ Դինքի սպանության բուն կազմակերպիչները: Սակայն երկրում ավելի ու ավելի են համախմբվում նրանք, ովքեր մտածում են Դինքի դեմ: Այսպիսով, օրըստօրե աճում է բռնությունը դատապարտողների թիվը թուրք հասարակության մեջ, ի հակակշիռ բռնողների: Բռնություն գործադրողները կենդանության օրոք վախենում էին Հրանտ Դինքից, հենց դրա համար էլ թիրախ ընտրեցին: Հիմա արդեն նրանք դեռ է վախենան հիշատակից, որովհետեւ բռնությունն սկսել է հետապնդել Դինքի հիշատակը: Դրա վառ ապացույցը մահվան տարելիցի միջոցառումներն են:

ՏԻԳՐԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ

Կանադան ԱՄՆ-ին ընդդրկել է կցանքներ կիրառող երկրների ցանկում

Կանադայի արտգործնախարարությունը հրապարակել է ուսումնական ձեռնարկ, որտեղ ԱՄՆ-ը նշվում է խոշտանգումներ կիրառող երկրների թվում: Ձեռնարկը նախատեսված է կցանքների վերաբերյալ ճանաչողական դասընթաց անցնող դիվանագետների համար: ԱՄՆ-ի հետ միեւնույն ցանկում են հայտնվել այնպիսի երկրներ, ինչպիսիք են Իսրայելը, Չինաստանը, Իրանը եւ Աֆղանստանը:

ԱԳՆ մամլո քարտուղարը ընդգծել է, որ այդ փաստաթուղթը չի արտահայտում Կանադայի պաշտոնական դիրքորոշումը, որն իրեն համարում է ԱՄՆ-ի եւ Իսրայելի դաշնակիցը: «Տվյալ ուսումնական ձեռնարկը հաղթականությանը վերաբերող փաստաթուղթ չէ եւ չի արտացոլում կառավարության դիրքորոշումը կամ հաղթականությունը», հայտարարել է մամլո քարտուղար Մախիմ Բեռնիեն:

Նման ներին փաստաթղթի գոյության մասին հաղորդել է «Միջազգային ներում» իրավապաշտպանական կազմակերպությունը, որը Կանադայի կառավարությանը ներկայացրած իր դասական հայցի շրջանակներում պահանջել է հանձնել փաստաթուղթը Աֆղանստանում կալանավորված անձանց դիմումների կապակցությամբ:

Աֆղանստանում կանադացի զինվորականները մի շարք դեպքերում կալանավորներին հանձնել են այդ երկրի ուժային կառույցներին: BBC-ն նշում է, որ այդ վարագիծը խիստ քննադատություն է առաջացրել: Մասնավորապես «Միջազգային ներումը» պահանջում է կալանավորներին այլեւս չհանձնել Աֆղանստանի իշխանություններին:

Ուսումնական ձեռնարկում ոչ միայն նշվում է, թե որ երկրների բանտերում են կցանքներ կիրառվում, այլեւ ընդգծվում է, թե հարցաքննության որ եղանակները կարելի է կցանք համարել:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, կցանքների թվում նշվում են կալանավորների հարկադիր մերկացումը, մեկուսացումը, ինից զրկելը եւ այլերը կաթիլը: Նաեւ հիշատակվում է Կանադայի քաղաքացի Օմար Քադրի դեպքը, որին պահում են Գուանտանամոյի ամերիկյան ռազմակալանքի ճամբարում:

Կանադայի իշխանությունները հայտարարել են, որ այնտեղ Քադրի հետ վարվում են մարդասիրաբար, սակայն խոշտանգումներին վերաբերող պաշտոնական փաստաթղթում այդ մարդու անվան հիշատակումը իշխանություններին դնում է հատկապես անհարմար կացության մեջ, ինչը անմիջապես շեշտեցին կառավարության ընդդիմախոսները:

ԱՄՆ-ը եւ Իսրայելը առայժմ պաշտոնապես որեւէ մեկնաբանություն չեն արել Կանադայի դիվանագետների համար նախատեսված ուսումնական ձեռնարկի կապակցությամբ:

ԹԵՐԵՔ

Ահմադինեժադ. «Իսրայելը չի համարձակվի հարձակվել Իրանի վրա»

Թեհրանը չի վախենում Թել Ավիվի նախահարձակումից, քանի որ Իսրայելցիները «երբեմ չեն համարձակվի» հարձակվել Իրանի վրա: Քաթարի «Ալ Ջազիրա» արբանյակային հեռուստաալիքով այսպիսի հայտարարություն է արել Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը:

Նախագահի հայտարարությունը համընկել է Իսրայելի նոր, հեռահար բալիստիկ հրթիռի փորձարկումներին: Այդ երկրի լրատվամիջոցները ենթադրում են, թե նոր հրթիռը նախատեսված է Իսրայելին սպառնացող օդային թիրախների կալանման համար եւ կարող է կրել «անսովոր օգտակար բեռնվածություն»:

Խոսքը թերեւս միջուկային մարտագլխիկների մասին է: Իսրայելը երբեմ չի հաստատել եւ չի էլ հերքել իր միջուկային զենքի գոյությանը վերաբերող ենթադրությունները: Վերլուծաբանները կարծում են, որ նման վարագիծը հաստատում է Իսրայելում միջուկային ուժերի գոյությունը:

Ֆրանսայերեսը մեջբերում է Ահմադինեժադի ելույթի հետեւյալ մասը. «Սիոնիստական վարչակազմը չի համարձակվի հարձակվել Իրանի վրա: Նա գիտի, որ իրանական տարածքների վրա ամեն մի հարձակում մոլեգին պատասխան կառաջացնի: Սիոնիստական կազմավորումն ունի նոր զինատեսակներ, բայց ես հավատում եմ, որ դա նրան չի փրկի ճակատագրական փլուզումից»:

Միեւնույն ժամանակ Ահմադինեժադը շեշտել է, որ իրանցիների միջուկային ծրագիրը բացառապես խաղաղ բնույթ է կրում:

Անդրադառնալով Ջորջ Բուշի մերձավորարեւելյան շրջայցին, Իրանի նախագահն ասել է. «Նախագահ Ջորջ Բուշը պատակման ուղերձ հղեց, նա մասնաժման սերմեր ցանեց: Դա առճակատման ազդանշան է: Բայց նրա հայտարարությունները մեզ բնավ չեն հուզում»:

Օմար բեն Լադենը ուզում է դառնալ «խաղաղության դեսպան»

«Ալ Ղաիդայի» առաջնորդ Ուսամա բեն Լադենի 26-ամյա որդի Օմարը հայտարարել է, որ կա իսլամը պաշտպանելու ավելի լավ եղանակ, քան պատերազմն է: Օմար բեն Լադենն ուզում է «խաղաղության դեսպան» դառնալ մահմեդականների եւ Արեւմուտքի միջեւ:

Ասուշիթթեդ դրես գործակալության տվյալներով, Օմարը յորդորել է բեն Լադենի 19 որդիների մեջ: Անցյալ տարի Օմարն ամուսնացավ 52-ամյա բրիտանուհի Զեյն Ֆելիխ-Բրաունի հետ, որն ընդունել է Զայնա Մոհամմադ իսլամական անունը: Ամուսնական զույգն օրերս հայտարարեց, թե Հյուսիսային Աֆրիկայում ձիերով 5000 կիլոմետր է անցնելու մարդկանց ուշադրությունն աշխարհի խաղաղության խնդրի վրա բեւեռելու նպատակով:

«Մարդկանց մեծ մասը կարծում է, թե արաբները եւ մահմեդականները Ուսամայի որդիներն ահաբեկիչներ են: Մենք ուզում ենք փոխել այդ պատկերացումը», հայտարարել է Օմարը Կահիրեի սրճարաններից մեկում:

Հունվարի 14-ին Օմարը եգիպտացում Մեծ Բրիտանիայի դեսպանությանն է դիմել այդ երկրում կեցության իրավունք ստանալու խնդրանքով:

Հոր հետ Սուդանում ապրելուց հետո Օմարը 1996-ին նրա հետ տեղափոխվել է Աֆղանստան: Իր խոսքերով, այնտեղ ինքը մարզվել է «Ալ Ղաիդայի» գրոհայինների ճամբարներում, բայց 2000-ին որոշել է վերադառնալ հայրենիք Սաուդյան Արաբիա: Ասում է, որ հայրը չի խոչընդոտել իր տեղաշարժերին:

«Ես չեմ ուզում պատերազմել: Ուզում եմ ուրիշ եղանակ գտնել, երկխոսություն ծավալել», ընդգծում է Օմարը: Եգիպտոսի իշխանությունները որեւէ վնասագ չեն տեսնում երկրում Օմար բեն Լադենի եւ նրա կնոջ ներկայության մեջ: «Օմարն իրեն բնավ հոր պես չի պահում», խոստովանել է եգիպտոսի անվտանգության ծառայության աշխատակիցներից մեկը:

Օմարը պնդում է, թե Աֆղանստանը թողնելուց հետո ինքը հոր հետ չի շփվել: «Նա չունի էլեկտրոնային փոստ, չունի հեռախոս: Եթե էլեկտրոնային որեւէ սարք ունենար, փնտրողներն անմիջապես կգտնեին նրան», ասում է որդին:

Չնայած իր խաղաղասիրական դիրքորոշմանը, նա չի դատապարտում հորը, գտնելով, որ հայրը լոկ փորձում է պաշտպանել իսլամական աշխարհը: Օմարն ընդգծում է, որ Արեւմուտքը Ուսամա բեն Լադենի հետ խնդիրներ չի ունեցել, քանի դեռ նա Աֆղանստանում 1980-ականներին մարտնչում էր խորհրդային զորքերի դեմ:

Ահաբեկիչներն սպառնում են Համաշխարհային բանկին

Ահաբեկչության վտանգը համաշխարհային բանկի ղեկավարությանն ստիպել է արահերթ հանգստյան օր տրամադրել բանկի վաշինգտոնյան գրասենյակների աշխատակիցներին: Ասոշիեյթեդ դրես գործակալությունը հաղորդում է, որ ուրբաթ օրը Վաշինգտոնում գտնվող ՀԲ գրասենյակները փակ են եղել ահաբեկության նկատառումներով:

Ավելի վաղ ինչ-որ մեկը հեռախոսով հայտնել է, որ ՀԲ աշխատակիցները ճիշտ կվարվեն, եթե ուրբաթ օրը մնան իրենց տներում: Օրվա ընթացքում ոստիկանությունը եւ բանկի ղեկավարությունը փորձել են պարզել, թե որքանով է իրական ահաբեկչության սպառնալիքը:

Վաշինգտոնում Սոֆիտակ տնից ոչ հեռու գտնվող ՀԲ յոթ գրասենյակներում երեկ ամայություն էր. դրանց 8 հազար աշխատակիցներն արահերթ հանգստյան օր էին ստացել: Սակայն ՀԲ մասնաճյուղերից մեկի մոտակայքում գտնվող Արժույթի միջազգային հիմնադրամի գրասենյակները որեւէ սպառնալիք չէին ստացել եւ երեկ աշխատում էին սովորական ձեւով:

Պ. Ա.

ԱԶԳ

Մշակույթ

Հունվարի 20-ը Ամենայն հայոց բանաստեղծուհու՝ Սիլվա Կապուտիկյանի ծննդյան օրն է: Սակայն արդեն երկրորդ տարին է, որ այդ օրը նշվում է առանց իր ամենատես ներկայության. մեզ հետ չէ հայոց բանաստեղծության մայրը, հույրը, դուստրը՝ իր բազմախոհ ու տրամիս խոսքով, առանց երկնչելու մարդկանց եւ երեւույթները իրենց անունով կոչելու համարձակությամբ, իր վիթխարի, անմնացորդ հայրենասիրությամբ, հումանիզմով:

Այնուամենայնիվ նա ապրեց ստեղծագործական հարուստ եւ տեւական կյանք. ավելի քան 70 տարի իր գրիչը մուսաների բարձր հովանավորությամբ եւ ազնվորեն ծառայեցրեց իր ժողովրդին՝ ստեղծելով մեծարժեք եւ մնայուն այնպիսի գործեր, որ նրան լիովին իրավունք էին տալիս դեռեւս 1960-ին իր «Մտորումներում» դիմելու ժողովրդին այսպես՝

Ես՝ հեծին մտաղ ի մեծ դպրության,
Բայց ինձ մեծերից համեմատ դասիր:

Նոստալգն շրջանի հայ գրականության մեջ առաջինը նա՝ ըստ էության, արձարձեց սփյուռքի թեման, եղավ մի շարք գաղթօջախներում, մանրամասն ուսումնասիրեց այնտեղի կյանքն ու մարդկանց եւ նրանց սովորեցրեց հայրենիքի ծամփան ու ներարյասան ապխարհ,

Դու մեր՝ը եղար ու մերդ չեղաշ,
Դրա համար էլ մեզ ի՞նչ սիրեցիր սիրահարի պես...
Ոչ ազգականի հանդարտիկ սիրով,
Այլ՝ սիրածի՞ պես, սիրահարի՞ պես,
Քո գրկում անգամ՝ ինչ կարտելով:

Իսկ մեկ այլ՝ «Աղոթք Արարատին» սանչելի գործում, հեղինակը դիմում է Արարատին.

Ինձ օրհնա՛ կ տար՝
Տաճարների մեջ մնալ վեհարար՝ նե,
Եվ գեղության մեջ տիրակա՛ լ լինել:

Նա պոեզիայի հերոսը հայ կինն է նաեւ, կինն է ընդհանրապես, որի մեջ նիրհում են թե՛ Լիլիթն ու Կլեոպատրան, թե՛ հայ հավատավոր կանայք ու հարսները, նրանց սերն ու տառապանքը, տարաբնույթները, հոգեւոր սարսռանքները եւ հոյարս, հոյարս, արժանապատիվ գոյությունը: Միայն իսկական զգացմունքը կարող էր մղել հերոսին կարտի պահին ասելու

- Թեկուզ ուրի՞ գրկից
Միայն արի՞, արի՞, -

Հայերժի ճամփորդը

կեց սեր իրենց միակ հայրենիքի՝ Հայաստանի նկատմամբ ու մեզ հարդարակից դարձրեց սփյուռքի հոգսերին ու տվայտանքներին, նրան աջակից լինելու բարձր առաքելությանը: Ու ծնվեցին Ս Կապուտիկյանի ծեծարժեք եւ ծավալուն արձակ էջերը՝ սփյուռհայաստանը, որ տասնամյակներ շարունակ դարձավ նրա մարդկային ու ստեղծագործական ժամերի կիզակետը՝ ծծագույն ավանդ բերելով Հայրենիք-Սփյուռք օրավուր ամրացնվող կամրջին: Եվ պատահական չէր, որ դեռ 1944-ից իր եւ մեր գրականության ամենասանչելի գործերից մեկը՝ «Խոսք իմ որդուն» պատգամ-բանաստեղծությունը դարձավ ոչ միայն Հայաստանի, այլեւ սփյուռքի նորաբույս աղոթքը, որն իրենով պարտադիր նման մեկ անգամ եւս սփյուռքը կառնեց իր մայր լեզվին, իր հայրենիքին:

Ս. Կապուտիկյանի հերոսը հայ մարդն է, նրա յաչափառում, արձակում Հայաստանն է՝ իր դարավոր հոգսերով, տառապանքով, կորուստներով, բայց եւ՝ հույսով, այսօրվա եւ վաղվա նկատմամբ իր ամբողջացող հայրենիքի հավատով.

Ինչպե՞ս խեղդեմ խնչ խաղվը Սասնա տան,
Ինչպե՞ս մարեմ այսման կարոտ, վառ ու կիրք,
Այսման նրազ ինչպե՞ս բաղեմ գեսնի տակ,
«Իմաղ կեղնի, իմաղ չեռաբեմ մը էրգիր»:

Եվ առաջին հերթին սա հենց իր հարցն էր, Վանի անհուն կարոտներով լեցուն հարազատ դաստր հարցն ու նաեւ հավատամքը՝

Պիտի երթամ, պիտի երթամ մեր երկիր:

Ընդհանրապես կապուտիկյանական հայրենասիրության ոլորտը շատ բարձր է եւ նրա «Արարատյան հանդանգ» շարքն ու այլ հայրենասիրական երկեր հանդիսանում են մեր ժեծագույն գրողների արարումներին: Սիա մի հանի տող նրա «Մեր սեր» երգվածից.

Հայաստան ապխարհ,

եւ ապա արդեն արժանապատվության դասեր տալ՝

Սովորեցրու՝ ինձ, Մ նրա, գնացքի տա՛ կ նեսվել,
Բայց չնեսվե՛ լ երբեմ ոտերի մոտ...

Ընդհանրապես Սիլվա Կապուտիկյանի սիրային բանաստեղծությունները չափազանց ուժեղ են: Այնտեղ տրոփում է մի սիրող, փարող, հավատավոր սիրտ, թեեւ բազում անգամ խաբված, վիրավորված ու վերերից սրիացած արդեն, բայց կարծես իրենով պայմանավորած հայ աղջիկների, կանանց սիրո այն բարձր որակը, որ բացառիկ ազնիվներին է հատուկ:

Սիլվա Կապուտիկյանը խորհրդային Հայաստանի ժամանակակիցը եղավ ու տարեգիրը, եղավ մեր ժամանակների՝ Ավետիք Իսահակյան ու Մարտիրոս Սարյան, Վազգեն Վեհափառ ու Արամ Խաչատրյան, Վիկտոր Համբարձումյան, ուրիշներ ու իր սերնդակից գրողները՝ Հ. Շիրազ ու Հ. Սահյան, Պ. Սեւակ, Հ. Մաթեւոսյան, Վ. Դավթյան եւ շատերը: Նա իր ստեղծագործություններով կարողացավ նվաճել ոչ միայն իր փոքր հայրենիքի մեծ սերը, այլեւ դարձավ խորհրդային Միության միլիոնավոր ընթերցողների սիրելին, իսկ այդ հզոր կայսրության փլուզման նախաշեմին հռչակվեց կենդանի դասական:

Եվ որքան հարազատ էր նա եւ իմաստուն իր առօրյա զրույցներում, կյանքում, հանդիպումներում, ասուլիսներում, որքան բարի, հասկող, բայց եւ սթափ, արդարամիտ, ազնիվ ու համարձակ:

Նա իր մահով հարստացրեց առանց այն էլ «մեծ մահերով հարուստ» մեր պանթեոնը, գնաց դեպի հավերժություն, թեեւ գնաց իր ժողովրդի դժվար կյանքի ու ճակատագրի մտահոգություններով, գալիք արարության եւ հավատի երազներով:

ՌՈԼԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ԵՍՄԱԿ ԽՈՍՔԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Անդրադարձ տպագրվածին

Ամենից առաջ կուզենայի որոշ ընթերցող հիացմունքս արտահայտել «Ազգ»-ի երկշաբաթյա «Մշակույթ» հավելվածի առնչությամբ: Մշակույթ սիրող եւ մշակույթին առնչվող յուրաքանչյուր մարդ կարող է իր կարոտախտը առ մշակույթ հագեցնել, կարդալով գրականությունը, երաժշտությունը, կերպարվեստին եւ արվեստի բոլոր ճյուղերին վերաբերող հետաքրքրական հրապարակումներ:թերթի այդ ներդիրում:

Սակայն այս հոդվածը գրելու՝ շարժառիթ հանդիսացավ թիվ 22-ում տպագրված լուսագող՝ Մելանյա Բաղալյանի հարցազրույցը գեղանկարիչ Հակոբ Հակոբյանի հետ: «Հարթ մակերեսներից դեռի խորքեր» վերնագրված այդ հարցազրույցը խիստ արդիական է, բարձրացված բոլոր հարցերը եւ նկարչի տված պատասխանները ճշմարիտ եւ համոզիչ, ամենակարեւորը՝ փաստարկված: «Ինչո՞ւ եմ այդպես մտածում» հարցի պատասխանը հնչում է հաճախ այն վերլուծություններում, որ կատարում է մեծ հեղինակություն վայելող արվեստագետը: Նրա կատարած վերլուծությունները ելնում են սեփական փորձառությունից եւ տարիների իմաստնությունից: Հակոբ Հակոբյանը մեզ ներկայանում է ոչ միայն որպես մեծ արվեստագետ, այլեւ շիտակ, ուղղամիտ մտավորական, որը չի խորշում իր հեղինակավոր կարծիքը հայտնելուց: Հակոբ Հակոբյանը իր մտահոգություններն է արտահայտում մեր երկրի անցյալի, ներկայի, ապեսականության, անկախության, ապագայի վերաբերյալ:

Հայ ժողովրդի ունեցած անհաջողությունների պատճառներից մեկը արվեստագետը համարում է հայ ժողովրդի պետականության կորուստը, որը 600 տարի իր բնօրանի մեկ մասի վրա ապրել է ոչ որպես տեր: Դրան նպաստել է նաեւ օտարահաճ լինելը, օտար լավ տեր փնտրողի հոգեբանությունը եւ հայրենի հողը լքելու հայի գենետիկական սովորությը: Նա ցավալի է համարում ձախորդության համար ուրիշներին մեղադրելու, սեփական պատասխանատվությունից խուսափելու, իր հետ չհամաձայնողներին թշնամի համարելու, հույսը միշտ օտարների վրա դնելու մեր ժողովրդի հիմար սովորությը:

Բերելով 19-րդ դարից դեռեւս մեզ լավ հայտնի քաղաքական մտքի «գիգանտ» ընկ. Փանջունու օրինակը, Հակոբյանը գտնում է, որ մեր քաղաքական գործիչներից շատերը ծավալում են ճիշտ Փանջունուն հատուկ գործունեություն, չմտածելով ժողովրդի գլխին եկող հետագա փորձությունների մասին: Այդ առումով նա խիստ կարեւորում է երկրի գիտակ, հաշվենկատ ղեկավարի դերը:

Եվ, վերջապես մեծ մտավորականը հայ ժողովրդի ճակատագրական սխալներից մեկն էլ համարում է համագործակցելու անընդունակությունը եւ գտնում է, որ համագործակցությունը անկախ մարդկանց գործն է, երբ ամեն քաղաքացի անկախ մարդ է, ունի իր ազատությունը, իր ապրանքը: «Սարդկերով անկախ պետություն չի ստեղծվի»: Ցավոք, ըստ նրա «երկիրը անցել է որոշ մարդկանց ձեռքը, վերացականորեն է հայ ժողովրդին պատկանում: Սովետական ռեժիմի տարիներով մեջտեղ եկավ մարդկանց մի խումբ, որոնք ասին՝ մենք ենք տերը, ազատությունը այդ շերտին միայն օգուտ տվավ, ազատությունը դարձավ վերցնելու եւ կուտակելու հնարավորություն»: Սիա այս մարդկանց կողմից դժվարին է նրանց ճակատագիրը, որոնք չեն փչացնում, թալանում, խաբում եւ չեն ուզում երկրից հեռանալ, այլ ուզում են օրենքի երկրում ապրել:

Սիա այսպիսի անկողմնակալ, կշռադատված եւ ճշմարիտ տեսակետներ է նա հայտնում եւ մի խորհուրդ՝ «Մեր բոլոր ձախորդությունների պատճառը մեր մեջ պետք է փնտրենք», այլապես մոտ է ժամանակը, գրեթե տեսանելի, որ մարդը կարող է անբնակելի դարձնել երկրագունդը:

ՄԵԼՍԻՆԵ ՀՄԻՈՐՅԱՆ

Մրցանակային մթնոլորտ եվ տրամադրություն Թեհրյան կենտրոնում

1-ին էջից

Կարծում եմ՝ Վահան Թեքեյան բանաստեղծի ու մարդու ապրած կյանքն ու գրական ժառանգությունը այնպես պարտավորեցնող է, որ այս մրցանակները համենայն դեպս դյուրին չէին կարող հասանվել, առավել եւս ոչ էլ տվել, թեպեւ երբեմն որեւէ անվանակարգում լինում է անհամապատասխանություն: Սակայն եւ հարկ է արձանագրել, որ «Վահան Թեքեյան» մրցանակին արժանացած մի քանի տասնյակ արվեստագետների մեջ կան շատ երեւելի ու պատվաբեր դափնեկիրներ, ինչպես Օհան Դուրյանը, Սիլվա Կապուտիկյանը, Տիգրան Մանսուրյանը, Արտ Չարմարյանը...

Անշուշտ, այդ անհամապատասխանությունները ինչ-որ տեղ պատճառաբանվում են նաեւ ըստ էության որոշում առկա, այսպես ասած, ստեղծագործական հունձի որակի, կամ առնվազն ներկայացվածի: Ինչեւէ: Երեկ ԹՄՄ կենտրոնում Արարատյան թեմի առաջնորդ Նավասարդ արք. Կոստանի օրհնանքին եւ նախագահ Ռուբեն Միրզախանյանի բացման խոսքին հետեւեց մրցանակների հանձնման արարողությունը, որը մասամբ, բնականաբար սկսվում է գրականության անվանակարգից: Հանձնաժողովի նախագահ երվանդ Ազատյանը մրցանակը հանձնեց բանաստեղծ Լյուդմիլա Դուրյանին՝ «Մեր տարիքն Արարատն» է ժողովածուի համար:

Հաջորդ մրցանակակիրը «Ազգ» թերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանն էր: «Հակոբ Վարդիվարյան» մրցանակը նրան հանձնեց

ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գետրգյանը: Տիկին Գետրգյանը մասնագիտորեն բնորոշեց «Ազգի» դերն ու նշանակությունը մեր նորանկախ հանրապետության սկզբնական տարիներին եւ այնտեղ իբրեւ պրոֆեսիոնալ առաջին օրաթերթի եւ ազատ խոսքի մունետիկի: Թերթը իրականության, ժողովրդավարական կամքի ճշմարիտ արտացոլողը եղավ, որով եւ կարեւոր մեկ այլ առաքելություն ունեցավ՝ լուսագողական նոր դպրոցի, դարբնոցի: «Ազգն» առանձնանում է տպագիր մամուլում սփյուռքի հանդեպ իր ուշադիր վերաբերմունքով՝ ճանաչողական ու բարոյական իմաստով, ինչպես նաեւ մտակրթիչ էջերով: Իր պատասխան խոսքում Հակոբ Ավետիքյանը այս մրցանակի դափնիները վերադարձ նաեւ իր ղեկավարած խմբի անցյալ եւ ներկա անդամներին:

Երաժշտություն անվանակարգում մրցանակը հանձնվեց երաժշտական գործիքներից ամենահայկականին՝ ծիրանի փող-դուդուկը ափշարհին ներկայացնողին ու հիացնողին՝ Ջիվան Գասպարյանին՝ «Ջին ու նոր հուշեր» ձայներիզի համար: Մրցանակը հանձնեց հանձնաժողովի նախագահ Դավիթ Դազարյանը:

Կերպարվեստի անվանակարգում՝ համապատասխանաբար գեղանկարչություն եւ քանդակ, այս տարվա դափնեկիրի կոչումը վաստակեցին գեղանկարիչ Վարուժան Վարդանյանը «Տիրամայրը մանկան հետ» ափսեանի եւ Գեղիկ Բաղդասարյանը «Եղիշե Չարենց» դիմանկարի համար:

Հանձնաժողովի նախագահը կարեւորեց անդրադարձ արեց հայերիս ասվածաշունչ-ասությանը եւ դրա դրսեւորումներից համարեց դեռեւս V դարում ստեղծված «Տիրամայրը մանկան հետ» քանդակը, որ համարվում է առաջինը, ապա եւ 915-ին Աղթամարի «Աստվածամայրը մանկան հետ» պատկերաքանդակը: Իր ստեղծագործության մեջ հոգեւոր թեմատիկայի լուրջ անդրադարձները Վարուժան Վարդանյանը սկսել է «Խաչելություն» շարքով, որ հետագայում խորացել է՝ ունենալով տարբեր արտահայտություններ: Դրանցից «Աստվածամայրը մանկան հետ» կտավը նվիրել է Մալաթիա-Սեբաստիա համայնքի Սբ. Երրորդություն եկեղեցուն:

Ռադիոհեռուստատեսություն անվանակարգում մրցանակը հանձնվեց Արտեմ Սարգսյանին՝ «Դարը» հաղորդաշարի համար, ի դեմ, խորհրդային երջանում նա արժանացել է պետական մրցանակի:

Սոցիալ-քաղաքական երգիծանքի՝ «Դավիթի պարատիկից» մրցանակին արժանացավ Արամայիս Սահակյանը՝ «Ծիծաղի տուն» հաղորդաշարի համար: Հանձնաժողովի նախագահ Հակոբ Ավետիքյանը նշեց, որ երգիծանքը գոհեկության եւ խեղկատակության հետ շփոթելու մերօրյա իրականության մեջ սփյուռքահայ երգիծաբան Միհրան Տեր-Ստեփանյանի ստորագրությամբ «Դավիթի պարատիկ» անունով այս մրցանակը որոշակի դեր, այնուամենայնիվ, պետք է որ կատարի:

Եվ վերջապես մանկապատանեական ստեղծագործությունների «Արա - Մարալ» մրցանակին արժանացավ Ռուբեն Հախվերդյանը «0-ից 100 տարեկան երեխաներին» գիրք-սկավառակի համար, որ ինչպես հանձնաժողովի անդամ եւ անցյալ տարվա մրցանակակիր Տիգրան Հեքեքյանն ասաց, «խենթ ու խելառ» այս երգիչը իր այս սկավառակը հասցեագրել է նրանց, ով ունի երեւակայություն եւ կարող է դեռ հիանալ արեւաթագով, ուրեմն դեռ երեխա է:

Հանդիսության ընթացքում ինչեցին երգեր Հայաստանի ռադիոհեռուստատեսության սիմֆոնիկ էստրադային նվագախմբի կատարմամբ, ղեկավարությամբ Երվանդ Երզնկյանի եւ մասնակցությամբ Մարտին Վարդազարյանի:

ԱԶԳ Տեղեկատվություն

Հավելված 7
Հասարակի Հ. Հարությունյանի վերանվանման բաժնի խորհրդի
2007 թվականի հունվարի 12-ի թիվ 180 Ն որոշմանը

ՍՊԱՍԱՐԿՈՒ ԶԱՀԱՊԱՐՈՒՄՆԵՐԻ ԶԱՀԱԳԱՐԻ (Ձև 4)

«31» դեկտեմբերի 2007թ.
«ԻՆԳԱՐ ԱՐՄԵՆԻԱ» ՍԲԵԿ, Փոստային 4043
(արտահայտության ընկերության անվանումը և գտնվելու վայրը)
Հաշվետու ժամանակաշրջանը 2007թ. IV եռամսյակ

	ԱՌԱՋԱՐԿՈՒ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջոցներով կատարված վճարի դրությամբ	Նախորդ հաշվետու վճարի դրությամբ
	1	2	3	4
1.	Ընթացիկ ակտիվներ			
1.1.	Դրամական միջոցներ	3	220,021	158,197
1.2.	Արտարժույթային գծով սպասվելիք գումարներ	4	560,324	296,544
1.3.	Ընթացիկ ներդրումներ	5	407,780	316,000
1.4.	Ընթացիկ գծով ստացվելիքներ	6	15,244	71,645
1.5.	Սահմանված նպատակներով պահվող տրամադրություններ	7		
1.6.	Գնված ապրանքների համար կանխավճարներ տրամադրություններ	8	41,236	14,793
1.7.	Սեփական միջոցների մասնակցության ընթացիկ տրամադրություններ	9		
1.8.	Ոչնյութական դրամական միջոցներ	10	6,821	1,870
1.9.	Սպասվելիք եկամուտներ	11	9,079	3,138
1.10.	Այլ ընթացիկ ակտիվներ	12	421	352
1.11.	Ընդամենը ընթացիկ ակտիվներ		1,260,126	862,309
2.	Ոչ ընթացիկ ակտիվներ			
2.1.	Գնված դրամական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	212,907	17,997
2.2.	Ոչ ընթացիկ ներդրումներ	14	90,306	
2.3.	Ոչ ընթացիկ գծով ստացվելիքներ	15		
2.4.	Գնված գծով մասնակցություններ	16	257,208	242,075
2.5.	Սեփական միջոցների մասնակցությունը ընթացիկ տրամադրություններ	17		
2.6.	Լեզինգներ այլ անմասնագիտական կազմակերպություններում	18		
2.7.	Սպասվելիք եկամուտներ	19	1,300	
2.8.	Գնված հարկային ակտիվներ	20		
2.9.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	21		
2.10.	Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		561,754	415,072
3.	ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		1,844,880	1,107,381
4.	Ընթացիկ պարտավորություններ			
4.1.	Արտարժույթային գծով վերադարձվելիք գումարներ	22	21,389	799
4.2.	Արտարժույթային գծով փոխառվելիք արտաքին աղբյուրներներ	23	515,582	241,942
4.3.	Ընթացիկ փոխառություններ	24		
4.4.	Արտարժույթային ընկերության կողմից թողարկված ընթացիկ տրամադրություններ	25		
4.5.	Գնված ապրանքների արտարժույթային պարտքեր	26	287,099	223,351
4.6.	Պետական եկամուտների պարտքեր	27	57,894	11,401
4.7.	Աշխատավարձի պարտքեր	28		8,324
4.8.	Այլ արտարժույթային պարտքեր	29	1,437	
4.9.	Այլ վերադարձվող գումարներ	30	105,052	12,000
4.10.	Այլ ընթացիկ պարտավորություններ	31		
4.11.	Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		1,024,453	497,847
5.	Ոչ ընթացիկ պարտավորություններ			
5.1.	Ոչ ընթացիկ փոխառություններ	32		
5.2.	Ընթերցասրահի կողմից թողարկված ոչ ընթացիկ տրամադրություններ	33		
5.3.	Հետաձգված եկամուտներ	34		
5.4.	Հետաձգված հարկային պարտավորություններ	35		
5.5.	Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	36		
5.6.	Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ			
5.8.	Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ			
6.	Կապիտալ			
6.1.	Կանոնադրական կապիտալ	37	598,568	553,320
6.2.	Բաժնային նկատառում	38		
6.3.	Պահուստներ			
6.3.1.	Գնված պարտատոմսեր	39	6,690	6,688
6.3.2.	Վերագնահատման պահուստներ	40	35,949	
6.4.	Չբաշխված շահույթ (վնաս)	41	181,200	49,526
6.5.	Հատկացված այլ գումարներ	42		
6.6.	Ընդամենը կապիտալ		820,407	609,534
7.	ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		1,844,880	1,107,381

Հավելված 8
Հասարակի Հ. Հարությունյանի վերանվանման բաժնի խորհրդի
2007 թվականի հունվարի 12-ի թիվ 180 Ն որոշմանը

ՇԱՀՈՒՅԹԻ ԵՎԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՑ ՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև 6)

«31» դեկտեմբերի 2007թ.
«ԻՆԳԱՐ ԱՐՄԵՆԻԱ» ՍԲԵԿ, Փոստային 4043
(արտահայտության ընկերության անվանումը և գտնվելու վայրը)
Հաշվետու ժամանակաշրջանը 2007թ. IV եռամսյակ

Սեփական կապիտալի բաղադրիչի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ/վնաս	Պահուստներ			Չբաշխված վնաս	Միջոցներ՝ նպատակային ֆինանսավորում	Սեփական կապիտալի այլ բաղադրիչներ	Ընդամենը
	Սովորական կանոնադրական կապիտալ	Ոչ սովորական կանոնադրական կապիտալ	Ընդամենը		Գնված արժեթղթեր	Վերագնահատման պահուստ	Վերադասավորված գործառնություններ				
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
Հաշվեմնացություններ											
Նախորդ հաշվետվական տարվա հասանելիի վերջնական մնացորդներ (տարվա սկզբի դրությամբ)											
1. Անցյալ հաշվետվական տարվա սկզբում մինչև 01.հունվարի 2006թ.	279,000		279,000		6,145			41,194			323,339
1.1. Հաշվապահական հաշվառման հարմարացման փոփոխությունների ընդհանուր արդյունքը և նախորդ վերջնարդյունքը											
2. Վերահաշվարկված մնացորդ	279,000		279,000		6,145			41,194			323,339
3. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր, այդ թվում՝											
3.1. Գնված միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում											
3.2. Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների և հետգնման գործիքների իսկական արժեքի վերագնահատման պահուստների աճ կամ նվազում											
3.3. Հետաձգված հարկի ազդեցությունը											
3.4. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված այլ եկամուտներ և վնասներ											
4. Մասնակիցների (սեփականատերերի) հետ գործարքներ բաշխումներ (բաժնետոմսերի) գծով, այդ թվում՝	275,320		275,320					(40,000)			235,320
4.1. Անդամներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	275,320		275,320					(40,000)			235,320
4.2. Հանձնարարական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և տրամաբանորեն հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, վարկերի) հարկերն								50,875			50,875
5. Լրացուցիչ արժեք (ծախսագրվածի) գրանցումը (վնասը)											
6. Մասնակցություններ											
7. Սեփական կապիտալի ստեղծի այլ անվանումով (բաղադրիչով), այդ թվում՝											
7.1. Ոչ ոչնչացվող կապիտալի գործիքներ դասակարգված սեփական կապիտալի գործիքների անվանմամբ											
8. Մնացած ստեղծի, այդ թվում՝								(2,543)			
8.1. Ստանձնումներ գնված ոչ պահուստի								(2,543)			
8.2. Գնված ոչ պահուստի հարկի (բացակայող գնած հարկի)											
8.3. Ընթացիկ գնած հարկեր											
8.4. Գնված միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատման արդյունքի ազդեցությունը											
8.5. Սեփական կապիտալի այլ ստեղծի մնացած մասերը											
9. Մնացորդ նախորդ հաշվետվական տարվա հասանելիի վերջնական ժամանակաշրջանի վերջում կամ 31 դեկտեմբերի 2006թ.	553,320		553,320		6,688			49,526			609,534
Ընթացիկ տարվա վերջնական ժամանակաշրջան (տարվա սկզբից սկսած)											
Մնացորդ նախորդ տարվա սկզբում կամ 01.հունվարի 2007թ.	553,320		553,320		6,688			49,526			609,534
9.1. Հաշվապահական հաշվառման հարմարացման փոփոխությունների ընդհանուր արդյունքը և նախորդ վերջնարդյունքի վերջնարդյունքը	553,320		553,320		6,688			49,526			609,534
10. Վերահաշվարկված մնացորդ											
11. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և ծախսեր, այդ թվում՝					35,949					35,949	
11.1. Գնված միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստների աճ կամ նվազում						35,949					35,949
11.2. Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների և հետգնման գործիքների իսկական արժեքի վերագնահատման պահուստների աճ կամ նվազում											
11.3. Հետաձգված հարկի ազդեցությունը											
11.4. Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված այլ եկամուտներ և վնասներ											
12. Մասնակիցների (սեփականատերերի) հետ գործարքներ բաշխումներ (բաժնետոմսերի) գծով, այդ թվում՝	43,248		43,248					(43,248)			
12.1. Անդամներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	43,248		43,248					(43,248)			
12.2. Հանձնարարական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և տրամաբանորեն հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, վարկերի) հարկերն											
13. Լրացուցիչ արժեք (ծախսագրվածի) գրանցումը (վնասը)								180,206			180,206
14. Մասնակցություններ								(5,040)			(5,040)
15. Սեփական կապիտալի ստեղծի մնացած (բաղադրիչ), այդ թվում՝											
15.1. Ոչ ոչնչացվող կապիտալի գործիքներ դասակարգված սեփական կապիտալի գործիքների անվանմամբ											
16. Մնացած ստեղծի, այդ թվում՝					2			(2)			
16.1. Ստանձնումներ գնված պահուստի											
16.2. Գնված պահուստի հարկի (բացակայող գնած) հարկերն											
16.3. Ընթացիկ գնած հարկեր											
16.4. Գնված միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատման արդյունքի ազդեցությունը											
16.5. Սեփական կապիտալի այլ ստեղծի մնացած մասերը											
17. Մնացորդ հաշվեկշռային ժամանակաշրջանի վերջում կամ 31 դեկտեմբերի 2007թ.	596,568		596,568		6,690	35,949		181,200			820,407

Հավելված 9
Հասարակի Հ. Հարությունյանի վերանվանման բաժնի խորհրդի
2007 թվականի հունվարի 12-ի թիվ 180 Ն որոշմանը

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև 7)

«31» դեկտեմբերի 2007թ.
«ԻՆԳԱՐ ԱՐՄԵՆԻԱ» ՍԲԵԿ, Փոստային 4043
(արտահայտության ընկերության անվանումը և գտնվելու վայրը)
Հաշվետու ժամանակաշրջանը 2007թ. IV եռամսյակ

(Հազար դրամ)

	ԱՌԱՋԱՐԿՈՒ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջոցներով ժամանակաշրջանի (սահմանափակված)	Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի (սահմանափակված)	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը ընկած ժամանակաշրջանի (անսահմանափակված)	Նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը ընկած ժամանակաշրջանի (անսահմանափակված)
	1	2	3	4	5	6
1.	Ընթացիկ ակտիվներ ոչ կանխիկ արտահայտության գծով		428,925	1,727,391	306,659	1,359,197
1.1.	Ընթացիկ արտահայտություններ	43	300,808	1,495,366	258,430	654,619
1.2.	Ընթացիկ ներդրումներ	44	21,632	81,730	12,363	39,304
1.3.	Ընթացիկ հանձնարարությունների գծով ստացվելիք հաշվարկներ	45				
1.4.	Ընթացիկ գնումներ գծով ստացվելիք հաշվարկներ	46	76,447	206,637	34,866	663,519
1.5.	Ընթացիկ տրամաբանություն	47		1,355		1,755
1.6.	Այլ կանխիկներ	48				
2.	Ընթացիկ կանխիկ արտահայտության գծով				10,270	14,047
2.1.	Ընթացիկ արտահայտություններ	49			10,270	13,920
2.2.	Ընթացիկ ներդրումներ	50				
2.3.	Ընթացիկ հանձնարարությունների գծով ստացվելիք հաշվարկներ	51				
2.4.	Ընթացիկ գնումներ գծով ստացվելիք հաշվարկներ	52				2,127
2.5.	Ընթացիկ տրամաբանություն	53				
2.6.	Այլ կանխիկներ	54				
3.	Ընթացիկ արտադրական գործունեությունից հոսքերներ և դրանց նվազեցումներ		1,203,377	2,384,898	471,362	2,802,958
3.1.	Ընթացիկ ընկերության արտադրանքների գործառնությունից հոսքերներ	55	962,073	2,203,793	267,435	982,036
3.2.	Ընթացիկ գործունեության ընթացքում գործառնությունից	56	161,304	320,571	49,755	1,204,138
3.3.	Ընթացիկ ծախսերի գծով գործառնությունից	57		8,324	10,744	
3.4.	Ընթացիկ արտադրության այլ գործառնություններ հոսքերներից	58				
3.5.	Ընթացիկ ընտանեկան արտադրանքների գործառնության վերադարձվող բաժնի նվազեցման գծով	59			138,841	381,863
3.6.	Ընթացիկ գործունեության (վնասների) գործառնության վերադարձվող բաժնի նվազեցման գծով	60			30,129	30,129
3.7.	Ընթացիկ ծախսերի գործառնության գործառնության վերադարձվող բաժնի նվազեցման գծով	61			4,659	4,892
3.8.	Ընթացիկ այլ արտադրական գործառնությունների վերադարձվող բաժնի նվազեցման գծով	62				
4.	Գործարք ոչ կանխիկ արտադրության գծով		290,798	1,275,946	195,937	1,061,217
4.1.	Գործարք արտադրության գծով	63	115,168	312,519	51,147	700,867
4.2.	Գործարքներ հանձնարարության գծով	64				
4.3.	Գործարքներ վերադարձվող գծով	65				
4.4.	Գործարք արտադրության գծով	66	9,188	134,815	23,436	40,770
4.5.	Գործարք վերադարձվող գծով գործառնություններ գծով	67	166,429	808,992	121,354	318,199
4.6.	Գործարքներ գծով	68		120		361
4.8.	Այլ գործարքներ					8,309
5.	Գործարք կանխիկ արտադրության գծով					3,323
5.1.	Գործարքներ ոչ կանխիկ արտադրության գծով գործարքներ գծով	69				
5.2.	Գործարքներ հանձնարարության գծով գործարքներ գծով	70				
5.3.	Գործարքներ վերադարձվող գծով գործարքներ գծով	71				
5.4.	Գործարք արտադրության ներդրումներ գծով	72				
5.5.	Գործարք վերադարձվող գծով գործառնություններ գծով	73				5,004
5.6.	Այլ հոսքեր	74				
6.	Գործարք արտադրության գործառնություն հնարավոր գծով		1,027,995	2,668,212	318,177	2,713,380
6.1.	Գործարք գնումների գործառնություններ գծով հնարավոր գծով	75	858,817	2,319,311	629,847	1,515,498
6.2.	Գործարք գործարքներ ընկերության գործառնություններ գծով	76	166,026	367,964	76,077	1,184,914
6.3.	Գործարք ծախսերի գործառնություններ գծով	77			17,953	13,006
6.4.	Գործարք այլ արտադրության գործառնություններ գծով	78	1,437	1,437		
7.	Արտադրության գծով ծախսեր (վնաս)		134,836	348,091	74,177	195,277
8.	Ոչնչացվող հնարավոր ակտիվներ և փոխառությունների գծով	79	8,652	25,178	4,042	15,508
8.1.	Ոչնչացվող հոսքեր փոխառությունների գծով	80				
8.2.	Ոչնչացվող հոսքեր	81	607	1,087	744	744
8.3.	Այլ ոչնչացվող հնարավոր	82				
8.4.	Այլ ոչնչացվող հոսքեր		41,301	106,995	10,947	30,680
9.	Գրաֆ ոչնչացվող հնարավոր (վնաս)	83				
9.1.	Լանդսկալ նրատակների գործարք արտիքներից գրաֆ ծախսագնման	84	5,171	19,210	4,305	8,981
9.2.	Գործարք հանձնարարության գրաֆ ծախսագնման	85				
9.3.	Չնչին ծառայություն գործարքներ արտիքներից գրաֆ ծախսագնման	86				
9.4.	Այլ անհայտ կանոնադրական կարգավորում մնացորդներ հնարավոր	87	36,160	87,665	8,812	22,119
9.5.	Այլ հնարավոր	88				
9.6.	Վերջնական հնարավոր կրճատումներ կատարելու գրաֆ հաշվարկումներ	89	67,818	153,867	30,104	136,817
9.7.	Ընդհանուր վարչական հոսքեր	90	42,642	101,283	8,254	36,454
9.8.	Այլ հոսքեր		75,986	226,141	51,502	68,958
10.	Ծախսեր (վնաս) հարկային առաջ	91	30,964	48,135	10,401	14,093
11.	Ծախսերի գծով հոսքեր (ընթացիկ)		39,122	180,006	41,151	50,875
12.	Ծախսեր (վնաս) հարկային հետո					
13.	Արտաքին գործառնություններ, այդ թվում՝					
13.1.	Արտաքին բաժնետոմսերի գծով	92				
13.2.	Արտաքին բաժնետոմսերի գծով	93				
13.3.	Մեկ բաժնետոմսի շնչին բաշխվող ծախսեր		39,122	180,006	41,151	50,875
14.	Նրատեղված ծախսեր					

Հավելված 10
Հասարակի Հ. Հարությունյանի վերանվանման բաժնի խորհրդի
2007 թվականի հունվարի 12-ի թիվ 180 Ն որոշմանը

ՄԻՋՈՑԱՌԱՅԻՆ ԶԱՀԱԳԱՐԻ ԳԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև 8)

«31» դեկտեմբերի 2007թ.
«ԻՆԳԱՐ ԱՐՄԵՆԻԱ» ՍԲԵԿ, Փոստային 4043
(արտահայտության ընկերության անվանումը և գտնվելու վայրը)
Հաշվետու ժամանակաշրջանը 2007թ. IV եռամսյակ

Միջոցների անվանումը	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը	Նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը
1	2	3
*Դրամական միջոցների մնացորդ մնացորդ	158,197	39,160
Գործառնական գործունեության դրամական միջոցների մուտք		
Սպասվող արտադրանքներ	1,229,995	654,261
Արտադրության գործունեությունից սպասվող մուտք	33,900	39,969
Գործառնական գործունեությունից մուտքեր, այդ թվում՝	1,057	1,895
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտք	1,263,117	646,125
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Սեփական արտադրական հաշվառումներ (արտադրության գործարքներ)	286,350	114,811
Գործարքի միջոցառումներ նպատակով հոսքեր	272,450	132,223
Գործարքի վերադարձվող գործարքներ		
Ամենաշատը միջոցառումներ նպատակով հոսքեր	22,397	13,175
Սեփական ստանձնումներին և նրանց սեռերին	4,193	8,268
Սեփական գործարքներ	68,699	42,215
Սեփական գրաֆ	293017	148,443
Գործառնական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	915,306	459,139
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	348,521	186,996
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտք		
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ոչ ընթացիկ ներդրումներ և ոչ նյութական ակտիվների վաճառքից		
Դրամական ակտիվներով գործառնություններից	47,745	231,819
Ընդհանրապես ակտիվներով գործառնություններ	38,242	22,379
Գործարքներին և ակտիվներ տասարանց		7,796
Գործարքի այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում՝	85,987	261,791
Ընդամենը գործարքի գործունեությունից մուտքեր		
Գործարքի գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ոչ ընթացիկ ներդրումներ և ոչ նյութական ակտիվների թողարկումից	18,815	2,620
Դրամական ակտիվներ թողարկումից և փոխառությունների տրամադրումից	290,930	564,458
Գործարքի այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝	61,434	881
Ընդամենը գործարքի գործունեությունից ելքեր	371,002	567,960
Գործարքի գործունեությունից դրամական միջոցների գրաֆ հոսքեր	(285,015)	(261,169)
Գործարքի գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Դրամական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		235,320
Ինքնուրույն կարգավորի գործարքներ և փոխանակումից		
Սպասվող գործարքից և փոխառություններից		
Դրամական այլ գործունեությունից մուտքեր, այդ թվում՝		235,320
Ընդամենը դրամական գործունեությունից մուտքեր		
Դրամական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Սպասվող գործարքի և փոխառությունների հարկից		
Սեփական ստանձնումներ և տոկոսներ	1,457	
Դրամական այլ գործունեությունից ելքեր, այդ թվում՝		
Ընդամենը դրամական գործունեությունից ելքեր	1,457	
Դրամական գործունեությունից դրամական միջոցների գրաֆ հոսքեր	(1,457)	235,320
Դրամական գործունեությունից դրամական միջոցների գրաֆ հոսքեր	62,049	121,147
Արտարժույթի փոխարինումից ազդեցություններ *	(225)	(2,110)
*Դրամական միջոցների մնացորդ հաշվեկշռային ժամանակաշրջանի վերջին	220,021	158,197

* Սույն տողում առաջացված գումարները չեն հանձնաժողովում դրամական միջոցների հոսքեր

Հոդվածի հանգամանքը «ԻՆԳԱՐ ԱՐՄԵՆԻԱ» Արտադրության ԲԲԸ թեմատիկան հաշվեկշռությունների անվտանգ տարբերակի ընկերության հնարավոր կարգի www.ingarmenia.am հասցեում

«Բանանցի» երկրորդ մեկնարկը

Առաջին մրցակիցը Բելառուսի չեմպիոն ԲԱՏԷ-ն է

Այսօր Սանկտ Պետերբուրգում կայանի ֆուտբոլի «Համագործակցության գավաթի» 16-րդ խաղարկության մեկնարկը: Նախորդ 15 մրցաշարերը կայացել էին Մոսկվայում: Երկրորդ տարին անընդմեջ Հայաստանն այդ մրցաշարում երկրի չեմպիոն «Փյունիկի» փոխարեն կներկայացնի «Բանանցը»: Թիմը մրցավայր ժամանեց հունվարի 18-ին: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, «Բանանցի» կազմում բացակայում է գեղանական «Ֆրայբուրգում» գտնվող Սամվել Մելիոնյանը: «Բանանցում» մրցաշարին կմասնակցեն թիմի նորեկներ, վրաց դարպասապահ Գեորգի Նիկոլաձեն, բուլղարացի կիսապաշտպան Մարկո Մարկովը եւ «Զիմբրուիից» տեղափոխված Կարեն Ալեխանյանը:

«Բանանցն» ընդգրկված է մրցաշարի «D» խմբում, որտեղ նրա մրցակիցներն են Ուկրաինայի չեմպիոն Կիեւի «Դինամոն», Ուզբեկստանի բազմակի չեմպիոն Տաշքենդի «Պախտակորը» եւ Բելառուսի ուժեղագույն ակումբ Բորիսովի ԲԱՏԷ-ն: Հենց վերջինիս հետ այսօր կայանալիք հանդիպումով էլ հայ ֆուտբոլիստները կսկսեն մրցաշարը: Հիշեցնենք, որ անցյալ տարի «Բանանցի» նորամուտը հաջող չստացվեց: Թիմն ընդգրկված էր «C» խմբում եւ չկարողացավ հաղթահարել խմբային մրցաշարի արգելքը: «Բանանցը» մինչեւայդ 2-2 հավասարով ավարտեց հանդիպումները Դոնեցկի «Շախտյորի» երկրորդ կազմի ու Լասվիայի չեմպիոն «Վենտսպիլսի» հետ, իսկ Տաշքենդի «Պախտակորին» զիջեց 0-3 հավասարով: Ի դեմ, հենց «Պախտակորն» էլ դարձավ մրցաշարի հաղթող՝ եզրափակիչում 11 մ հարվածաշարում (հիմնական եւ լրացուցիչ ժամանակում հաշիվը չբացվեց) հաղթելով «Վենտսպիլսին»:

ԲԱՏԷ-ն 4-րդ անգամ է մասնակցում «Համագործակցության գավաթի» մրցաշարին եւ առայժմ առանձնակի հաջողությունների չի հասել: Նախորդ տարի թիմը հասել էր մինչեւ խառնդ եզրափակիչ, որտեղ զիջեց Սոլոդուայի «Շերֆին» (0-1): Մրցաշարում ընդհանուր առմամբ անցկացրած 13 խաղում թիմը տոնել է 4 հաղթանակ, 3-ն ավարտել է ոչ-ոքի, 6-ում պարտվել է: Խփած եւ բաց թողած գնդակների տարբերությունն է 16-21: «Համագործակցության գավաթի» մրցաշարերում Հայաստանի թիմերն առայժմ 2 անգամ են մրցել ԲԱՏԷ-ի հետ: Առաջին հանդիպումը կայացել է 2000-ին «Շիրակի» հետ եւ ավարտվել բելառուս ֆուտբոլիստների խոշոր հավասարով հաղթանակով (5-1): Երեք տարի անց «Փյունիկը» ոչ-ոքի խաղաց (1-1):

Հունվարի 20-ին «Բանանցը» ուժերը կչափի Ուզբեկստանի վերջին 5 տարիների անփոփոխ չեմպիոն Տաշքենդի «Պախտակորի» հետ: Վերջինս մրցաշարի նախապատրաստությունն անցկացրել է Առաբական Միացյալ Էմիրություններում: «Պախտակորը» երկրի չեմպիոնն ու գավաթակիրն է: Երկրի առաջնության 30 խաղերում թիմն անպարտելի մնաց՝ վաստակելով 82 միավոր: Չեմպիոնը 11 միավորով գերազանցեց 2-րդ տեղը զբաղեցրած «Կուրուվչին»: Ուզբեկստանի չեմպիոնը 7-րդ անգամ է մասնակցելու մրցաշարին, որտեղ անցկացրել է 24 խաղ (+10=8-6, 38-26): Անցած տարի թիմը հասավ իր ամենամեծ հաջողությանը: «Բանանցի» հետ 2007-ին կայացած հանդիպումն առայժմ միակն է Հայաստանի թիմերի հետ:

Խմբային մրցաշարի վերջին հանդիպումը «Բանանցը» կանցկացնի հունվարի 22-ին՝ մրցելով Կիեւի «Դինամոյի» հետ: Վերջինիս դեկը ստանձնել է Յուրի Սյոմինը: Սակայն «Դինամոն» Սանկտ Պետերբուրգում հանդես կգա 2-րդ կազմով, թեեւ այդ կազմով էլ բավական ուժեղ մրցակից է: Դինամոյականները բավական հաջող են հանդես եկել «Համագործակցության գավաթի» մրցաշարերում՝ չորս անգամ (1996-1998, 2002-ին) նվաճելով գլխավոր մրցանակը: Այդ ցուցանիշով «Դինամոն» զիջում է միայն Մոսկվայի «Սպարտակին», որը վեցանգամ գավաթակիր է: Անցկացրած 41 խաղում թիմի հաշվեկշիռն այսպիսին է. +27=8-6, գնդակները՝ 90-31: Կիեւի «Դինամոյի» հետ մեր թիմերը մրցաշրջանում երեք անգամ են հանդիպել եւ բոլոր խաղերն էլ տանուլ են տվել (1997-ին «Փյունիկ»՝ 0-2, 2000-ին «Շիրակ»՝ 0-1, 2004-ին «Փյունիկ»՝ 0-1):

Հայաստանի թիմերը «Համագործակցության գավաթի» խաղարկությունների անփոփոխ մասնակիցներից են: 1993-ից մրցաշարում Հայաստանը ներկայացրել են 6 թիմեր՝ «Փյունիկը» (1993, 1996, 1997, 2002-2006), «Արարատը» (1994), «Շիրակը» (1995, 2000), «Երեւանը» (1998), «Ցեմենտը» (1999, 2001) եւ «Բանանցը» (2007): Առայժմ բոլորից հաջողը եղել է «Փյունիկի» ելույթը, որը 2006-ին հասավ մինչեւ կիսաեզրափակիչ: Այդ փուլում մեր թիմի մրցակիցը Բաքվի «Նեֆտչին» էր: Փյունիկցիները հրաժարվեցին խաղից, որի համար էլ թիմը որակազրկվեց:

Նախորդ 15 խաղարկություններում Հայաստանի ներկայացուցիչները ընդհանուր առմամբ անցկացրել են 47 խաղ, որից միայն 13-ում են հաղթել, 8-ն ավարտել են ոչ-ոքի, 26-ում պարտվել են, խփել են 67 գնդակ, սեփական դարպասը բաց թողել 96-ը: Մեր ֆուտբոլիստներից բոլորից շատ գol է խփել Արսեն Ավետիսյանը (5): 3-ական անգամ դիմուկությամբ աչի են ընկել Արթուր Ոսկանյանը, Հայկ Հակոբյանը եւ Հարություն Վարդանյանը: Անցկացրած խաղերի քանակով յուրօրինակ ռեկորդակիրը փյունիկցի Արվան Մկրտչյանն է, որը նախորդ 5 մրցաշարերում 15 հանդիպման է մասնակցել:

Հայ հոկեյիստները ջախջախեցին հարավաֆրիկացիներին ու թուրքերին

Տափօղակով հոկեյի հայաստանի երիտասարդական հավաքականը երկու տարվորիչ հաղթանակներով ծնկներեց Բելգրադում անցկացվող աշխարհի «C» խմբի առաջնությունում: Հայ հոկեյիստները մի եւնույն 13-1 հավասարով ջախջախել են Հարավային Աֆրիկայի հանրապետության եւ Թուրքիայի ընտանիներին:

Հարավաֆրիկյան հանրապետության հավաքականի հետ խաղում մեր հոկեյիստները հաշիվը բացել են արդեն 43-րդ վայրկյանին: Այդի է ընկել Հարություն Քեշիշյանը: Մինչեւ առաջին խաղաթուլի ավարտը երկու անգամ Պետրոս Ժամկոչյանը եւ Սմբատ Դեսեդարյանը գրավել են մրցակցի դարպասը: Հետագայում մեր հոկեյիստները եւս 9 ապտակ են խփել (Հարություն Քեշիշյան՝ 4, Արթուր Քեշեջյան, Աբրահամ Պալեցյան, Գրիգոր Սիրմաքեշյան, Պետրոս Ժամկոչյան, Հակոբ Բոլաժյան):

Երկրորդ հանդիպումը եւս հայ հոկեյիստները մեծ վերելով անցկացրին՝ թուրքերին հաղթելով 13-1 հավասարով: Նշենք, որ 2006-ին Անկարայում հայ հոկեյիստները թուրքերին հաղթել էին 4-2 հավասարով: Երկրորդ խաղում մեր թիմում արդյունավետ խաղով աչի ընկան Աբրահամ Պալեցյանը, Պետրոս Ժամկոչյանը եւ Սմբատ Դեսեդարյանը, որոնք խփեցին 3-ական գol: Երկու անգամ աչի ընկավ Հարություն Քեշիշյանը, մեկական գol խփեցին Գրիգոր Սիրմաքեշյանը եւ Գրիգոր Դեմիրճյանը:

Մրցաշարում հանդես են գալիս նաեւ Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Սերբիայի եւ Բուլղարիայի երիտասարդական հավաքականները: «B» խմբի ուղեգիր կնվաճեն Բելգրադում լավագույն արդյունքի հասած երկու հավաքականները: Հայերից բացի, երկու հաղթանակ են տոնել նաեւ ավստրալացիները՝ պարտություն մատնելով Թուրքիայի (5-3) եւ ՀԱՀ-ի (16-2) ընտանիներին: Սերբերն անցկացրած մեկ խաղում 16-0 հավասարով ջախջախել են բուլղարացիներին: Վերջիններիս ջախջախել է նաեւ Նոր Զելանդիայի հավաքականը (19-1): Հաստատվում է հոկեյի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Կարեն Խաչատրյանի այն կարծիքը, որ մեր թիմի հիմնական մրցակիցները կլինեն սերբերն ու ավստրալացիները:

Մեր հավաքականը, որին մարզում է իտալական ծագումով ամերիկացի մասնագետ Դուգլաս Դիլիզարին, հաջորդ հանդիպումը կանցկացնի հունվարի 20-ին Նոր Զելանդիայի հոկեյիստների հետ: Հաջորդ օրը մեր հոկեյիստները կմրցեն սերբերի հետ, իսկ հունվարի 23-ին կհանդիպեն Ավստրալիայի հավաքականի հետ: Մրցաշարի վերջին հանդիպումը մեր թիմը կանցկացնի բուլղարացիների հետ:

Մեր թիմի հարձակվող Հարություն Քեշիշյանը մրցաշարի լավագույն ռմբարկուների ցուցակում 12 միավորով (7 գol, 5 գոլային փոխանցում) 2-րդ տեղում է: Առաջատարը ավստրալացի Միխայել Բեռոնն է՝ 13 (7+6) միավոր: 4-րդ եւ 5-րդ տեղերում են Պետրոս Ժամկոչյանը եւ Աբրահամ Պալեցյանը, որոնք վաստակել են 7-ական միավոր:

Խաղացանկը կորոշվի Զագրեբում

Ինչպես տեղեկացրել էինք, ֆուտբոլի աշխարհի 2010-ի առաջնության ընտրական 5-րդ խմբի (որում հանդես է գալիս ՀՀ հավաքականը) խաղացանկը պետք է որոշվեր վիճակահանությամբ Ցյուրիխում, հունվարի 16-ին: Սակայն ՖԻՖԱ-ն փոխել է որոշումը եւ վճռել վիճակահանությունն անցկացնել հունվարի 30-ին, Զագրեբում կայանալիք ՈՒԵՖԱ-ի կոնգրեսի ժամանակ: Այդ օրը վիճակահանությամբ կորոշվի նաեւ ընտրական 2-րդ խմբի խաղացանկը: Ընտրական 7 խմբերում խաղացանկն առնվազն հայտնի է, իսկ 9-րդ խմբի ներկայացուցիչներին ժամանակ է տրվել կրկին հանդիպելու եւ վերջնական տեսքի բերելու խաղացանկը:

Առոնյանի առաջին պարտությունը

Վեյլ ան Զեեի մրցաշարի 6-րդ տուրում Առոնյանը սեւերով մրցում էր Կամնինկի հետ: Նրանց մրցավեճն ավարտվեց բոլորից ուշ: Նավակային վերջնախաղում Առոնյանի նավակը փորձում էր պայքարել մրցակցի նավակի եւ երկու անցողիկ զինվորների դեմ: Ի վերջո, երկարաեւ ու համառ պայքարից հետո 110-րդ քայլում Առոնյանը հանձնվեց՝ կրելով մրցաշարում անդրանիկ պարտությունը: Վեց տուրից հետո Առոնյանը 3.5 միավորով 4-րդ տեղում է:

Մրցաշարի միանձնյա առաջատար դարձավ Մագնուս Կառլսենը, որը հաղթեց Պոլգարին ու վաստակեց 4,5 միավոր: 4 միավոր ունեն Կրամնինկն ու Ռաջաբովը, որը ոչ-ոքի խաղաց Առամսի հետ: Հաշտություն կնքեցին նաեւ Անանդն ու Իվանչուկը, Մամեդյարովն ու Էլյանովը, վան Վելին ու Գելֆանդը: Թոփալովը հաղթեց Լեկոյին:

Վախճանվեց Բոբի Ֆիշերը

Իսլանդիայի հոսպիտալներից մեկում 64 տարեկանում վախճանվել է շախմատի աշխարհի 11-րդ չեմպիոն Բոբի Ֆիշերը: Լեգենդար շախմատիստը վերջին երեք տարիներին բնակվում էր Իսլանդիայում, որը նրան քաղաքական ապաստան էր տվել՝ փրկելով ԱՄՆ-ի իշխանությունների հետապնդումներից, որոնք Ֆիշերին սպառնում էին երկարաեւ բանտարկությամբ:

Ֆիշերը ծնվել էր 1943-ի մարտի 9-ին Չիկագոյում: Նրա հայրը գերմանացի էր, մայրը՝ ծագումով հրեա զվեյցարացի: Արդեն 13 տարեկանում նա նվաճեց ԱՄՆ-ի պատանիների չեմպիոնի տիտղոսը: Մեկ տարի անց հաջողությունը կրկնեց արդեն ԱՄՆ-ի մեծահասակների առաջնությունում՝ դառնալով երկրի ամենաերիտասարդ չեմպիոնը: Իսկ 15 տարեկանում նրան շնորհվեց գրոսմայստերի կոչում, ինչը Բորիս Սպասկու ռեկորդային արդյունքը գերազանցեց:

1972-ին Ֆիշերը Սպասկու հետ Ռեյկյավիկում կայացած մրցախաղում նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Ֆիշերն այն տարիներին այլի էր ընկնում իր կամակոր բնավորությամբ եւ հաճախ էր մրցաշարերի կազմակերպիչներին իր անսովոր պահանջներով դժվարին կացության մեջ դնում: 1975-ին նա հրաժարվեց Անատոլի Կարպովի հետ մրցախաղում պաշտպանել աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը եւ հեռացավ շախմատից: Երկար տարիներ նրա մասին որեւէ տեղեկություն չկար, նա խուսափում էր մարդկանց հետ շփումից:

Առաջատարների «սեւ» օրը

Շախմատի տղամարդկանց առաջնության 10-րդ տուրն անհաջող էր առաջատար եռյակի համար: Պետրոսյանը պարտվեց Անդրեասյանին, Լիրույանն անդրանիկ պարտությունը կրեց Փաշիկյանի հետ պարտիայում, իսկ Տեր-Սահակյանը զիջեց Արա Մինասյանին: Արդյունավետ երկ ունեցան նաեւ մյուս երկու պարտիաները: Եռիագարյանը հաղթեց Զրիանջյանին, Սարյանը՝ Բաբուջյանին: Արտաբես Մինասյանին հաղթական միավոր գրանցվեց Անասասյանի հետ չկայացած պարտիայում:

Մրցաշարի ավարտից երկու տուր առաջ 6,5 միավորով առաջատարը գլխավորում է Պետրոսյանը: 6-ական միավոր ունեն Սարյանն ու Լիրույանը, 5,5-ական՝ Արտաբես եւ Արա Մինասյաններն ու Սամվել Տեր-Սահակյանը:

Արզումանյանը կխաղա «Ռանդերսում»

«Armfootball.com» ինտերնետային կայքէջի տեղեկացմամբ Ռոբերտ Արզումանյանը մեկամյա պայմանագիր է կնքել դանիական «Ռանդերսի» հետ: Ակումբի պաշտոնական կայքէջում տված հարցազրույցում Արզումանյանը նշել է, որ ուրախ է արտերկիր տեղափոխվելու առիթով, ինչը հնարավորություն կընձեռի իրեն շարունակել կատարելագործելու վարժեցությունը:

Իր հերթին «Ռանդերսի» գլխավոր մարզիչ Կոլին Թոդը գոհունակություն է հայտնել գործարքից. «Հայ ֆուտբոլիստի ընդգրկումը կնպաստի թիմի պաշտպանական օղակում մրցակցության ածին: Վստահ եմ, որ նա կդառնա թիմի առանցքային ֆուտբոլիստներից մեկը, թեեւ Ռոբերտը դեռեւս պետք է աղացուցի բարձրակարգ խաղացող լինելը»:

«ՖԻՆՔԱ»
ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ-Ն
հրավիրում է
շինարարական կազմակերպություններին անել իրենց առաջարկները վերջինիս նոր մասնաճյուղի տարածքի հետ կապված հետեւյալ աշխատանքներն իրականացնելու նպատակով՝
1. տարածքի նախագծի նախահաշվարկի կազմում,
2. շինարարական, ներքին հարդարման աշխատանքներ:
Խնդրում ենք ուղարկել Ձեր առաջարկությունները ՖԻՆՔԱ ՈՒԿԿ ՓԲԸ, Երեւան, Ագաթանգեղոսի 2ա հասցեով, Կարինե Ակոպովայի անունով:
Առաջարկությունների ներկայացման վերջին ժամկետն է՝ 2008թ.-ի հունվարի 28-ը:
Լրացուցիչ տեղեկություններ համար զանգահարել 54 55 31, 54 55 32 հեռախոսահամարներով կամ կապնվել էլ.փոստի հետեւյալ հասցեով՝ KAkopova@finca.am

www.azg.am

Կորել է
«Ս.Ս.» ՍՊԸ-ի կնիքը եւ դրոշմակնիքը, ՀՎՀՀ 00800934: Համարել անվավեր:

ՕՐԱԳԻՐ ՀԱՄԱՐ ՀԵՏԱՔՐՔՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները տրամադրեցին իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Հակոբ Սեմիրճյան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 18.01.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: